ՅՈՒԼԻԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒԼԻԱՆԱ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

*Դասագիրք*

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2026

ՀՏԴ 364-78:33(075.8)
ԳՄԴ 60.9+65g73
Մ 539

*Հրատարակության է երաշխավորել*
*ԵՊՀ գիտական խորհուրդը:*

*Գրախոսներ՝ փ.գ.դ., դոցենտ Արտակ Խաչատրյան*
*փ.գ.թ., դոցենտ Աննա Մաքսուդյան*

**Մելքումյան Յուլիանա Գագիկի**
Մ 539 Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմքերը: Դասագիրք/ Յ. Գ. Մելքումյան. - Եր.: ԵՊՀ հրատ., 2026, 216 էջ:

«Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմքերը» դասագիրքը նախատեսված է սոցիալական աշխատանքի, սոցիոլոգիայի, հանրային քաղաքականության ու հարակից ոլորտների ուսանողների, դասախոսների և ոլորտի մասնագետների համար: Այն քննում է սոցիալական աշխատանքի ու տնտեսագիտության կապը, պահանջմունքներն ու կարիքները, ապրանքների ու ծառայությունների արտադրության ու բաշխման գործընթացները, սոցիալական ոլորտի ֆինանսավորման աղբյուրները, աղքատության հայեցակարգերը, ինչպես նաև քաղաքական գաղափարախոսությունների ազդեցությունը սոցիալական քաղաքականության վրա:

Յուրաքանչյուր գլուխ ընդգրկում է տեսական նյութ ու գործնական հանձնարարություններ: Դասագիրքը պարունակում է նաև տերմինաբանական բառարան. տեքստում հանդիպող նոր եզրույթները բացատրված են տողատակում և տարբերակվում են նշմամբ:

ՀՏԴ 364-78:33(075.8)
ԳՄԴ 60.9+65g73

ISBN 978-5-8084-2745-7
https://doi.org/10.46991/YSUPH/9785808427457

© ԵՊՀ հրատ., 2026
© Մելքումյան Յ. Գ., 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ** ........................................................6
**ԳԼՈՒԽ 1. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ** ................ 12
1.1. «Սոցիալական» հասկացության փիլիսոփայական ու սոցիոլոգիական մեկնաբանումները ..................................... 12
1.2. Մարդը որպես կենսաբանական, սոցիալական ու իրավական էակ ............................................................... 16
1.3. «Սոցիալական» թե «հասարակական».............................. 19
**Հարցեր ու հանձնարարություններ** ..................................20
**ԳԼՈՒԽ 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ** .................................................. 22
2.1. Սոցիալական աշխատանքի ձևավորումը Հայաստանում... 22
2.2. Սոցիալական աշխատանքի սահմանումները ...................26
2.3. Սոցիալական աշխատանքի ու տնտեսագիտության կապը ..............................................................................35
2.4. Սոցիալական աշխատանքի տնտեսական սկզբունքները..40
**Հարցեր ու հանձնարարություններ** ..................................59
**ԳԼՈՒԽ 3. ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐ** ................. 61
3.1. Սոցիալական պահանջմունքների հիերարխիկ բուրգն ըստ Աբրահամ Մասլոուի ........................................................ 61
3.2. Կարիքներ.............................................................66
3.3. Գովազդն ու պահանջմունքները ....................................68
**Հարցեր ու հանձնարարություններ** ..................................70
**ԳԼՈՒԽ 4. ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ** ..... 72
4.1. Պահանջմունք ու պահանջարկ........................................ 72
4.2. Ապրանքներ ու ծառայություններ.....................................73
4.3. Ազատ ու տնտեսական բարիքներ...................................74

4.4. Տնտեսական բարիքների տեսակները..............................79
4.5. Ապրանքների ու ծառայությունների բաշխման համակարգերը............................................................83
4.6. Մերիտոր բարիքներ..................................................89
**Հարցեր ու հանձնարարություններ** .................................92
**ԳԼՈՒԽ 5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**............................................94
5.1. Արտադրական գործոններ ...............................................94
5.2. Ապրանքների արտադրության գործընթացը ....................96
5.3. Ծառայությունների արտադրության գործընթացը ............98
5.4. Ծառայությունների առանձնահատկությունները ...............99
5.5. Ծառայության որակի գնահատում ................................. 102
5.6. Ծառայությունների դասակարգման հիմքերը ...................111
5.7. Սոցիալական աշխատանքի ծառայությունների պետական, համայնքային ու ՀԿ համատեքստը Հայաստանում ................ 117
5.8. Կանխարգելումն ու միջամտությունը որպես սոցիալական աշխատանքի ծառայություններ ............................................119
**Հարցեր ու հանձնարարություններ** .................................124
**ԳԼՈՒԽ 6. ՇԱՀՈՒՅԹ ՀԵՏԱՊՆԴՈՂ ՈՒ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ**.................... 126
6.1. Շահույթ հետապնդող կազմակերպություններ ................ 126
6.2. Շահույթ չհետապնդող կազմակերպություններ................127
**Հարցեր ու հանձնարարություններ** ................................ 129
**ԳԼՈՒԽ 7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**...........................................................131
7.1. Պետական բյուջե.........................................................131
7.2. Համայնքային (տեղական) բյուջե ................................. 134
7.3. Դոտացիաները, սուբսիդիաներն ու սուբվենցիաները որպես ֆինանսական աջակցության միջոցներ.......................137

7.4. Սոցիալական ապահովագրություն ................................ 139
7.5. Բարեգործական հիմնադրամներ ..................................144
**Հարցեր ու հանձնարարություններ** ................................ 149
**ԳԼՈՒԽ 8. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ** ..........................................151
8.1. Աղքատության կրճատումը որպես սոցիալական աշխատանքի նպատակ ..................................................151
8.2. Բացարձակ աղքատության հայեցակարգ...................... 156
8.3. Հարաբերական աղքատության հայեցակարգ ................ 162
8.4. Սուբյեկտիվ աղքատության հայեցակարգ ...................... 168
8.5. Աղքատության մշակույթ ............................................174
**Հարցեր ու հանձնարարություններ** ................................ 179
**ԳԼՈՒԽ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ** 181
9.1. Գաղափարախոսական կողմնորոշումները սոցիալական քաղաքականության համատեքստում ..................................181
9.2. Աջ ու ձախ. պատմական ակունքներ ու հիմնարար տարբերություններ ....................................................... 182
9.3. «Պայտի» քաղաքական տեսություն .............................. 189
9.4. Նոլանի գծապատկեր ................................................. 192
9.5. Սոցիալական քաղաքականության մոդելները ................ 195
**Հարցեր ու հանձնարարություններ** ................................ 197
**РЕЗЮМЕ** ................................................................199
**SUMMARY** ...............................................................200
**ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ**....................... 201

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ամեն ամառ յուրաքանչյուր դասախոս ի մի է բերում իր անցած ուղին, դասավանդած առարկաները, դասավանդման մեթոդները, ուսանողների հարցերը, հաջողած ու ձախողած դասախոսությունները, հանձնարարությունները, քննությունները և որոշում է դասագիրք գրել:

Մի քանի տարի առաջ վստահաբար որոշել էի գրել դասագիրք սոցիալական պետության մասին, սակայն չխմորվեց...: Այս անգամ վճռականորեն որոշել եմ համալրել սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագիտական հայալեզու գրականությունը՝ խոսելով սոցիալական աշխատանքի տնտեսական հիմնահարցերի շուրջ:

Պետք է նշեմ, որ «Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն» դասընթացն առաջին անգամ ունկնդրել եմ որպես ուսանող Գերմանիայի Ֆրանկֆուրտի բարձրագույն դպրոցում, որտեղ հայտնվել էի 1997 թվականին «Տեմպուս-Տասիս» *(TEMPUS/TACIS)* ծրագրի շրջանակում: Կրթաթոշակ ստանալու համար չորս ամսվա ընթացքում սովորեցի գերմաներեն: Արդյունքում առաջին երկու շաբաթների ընթացքում հայտնվել էի «տեղեկատվական վակուումի մեջ», քանի որ ամեն ինչ գերմաներեն էր, և անհրաժեշտ էր կողմնորոշվել նոր երկրում, նոր բուհում ու շփումների նոր միջավայրում: Այնուհետև ստիպված սկսեցի հասկանալ ու խոսել:

Առարկան դասավանդում էր տնտեսագետ Բեատե Ֆինիս-Զիգլերը: Վերջինս ինձ՝ որպես օտարերկրյա ուսանողուհու, նվիրեց իր համանուն դասագիրքը «Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն» *(գերմ.՝ «Ökonomik sozialer Arbeit»)*, որը հրատարակվել էր հենց 1997 թվականին

(Siegler, 1997): Ես մասնակցեցի նրա մի քանի դասախոսություններին: Նա խոսում էր չափազանց պարզ, հաճախ կարծես հատուկ ինձ համար, որ կարողանամ հասկանալ այդ բարդ ու ինձ դեռևս անծանոթ առարկան: Բարեբախտաբար, միջազգային մասնագիտական եզրույթներն ինձ ծանոթ էին, իսկ դասախոսը միշտ բաց էր հարցերի ու պարզաբանումների համար:

Մի քանի շաբաթ անց գերմանացի ուսանողները դասադուլ հայտարարեցին: «Սոցիալական աշխատանք» ու «Սոցիալական մանկավարժություն» կրթական ծրագրերի ուսանողները պայքարում էին, որ նրանց չտեղափոխեն համալսարանական իրենց շենքից, որը լիովին հարմարեցված էր ֆիզիկական սահմանափակումներ ունեցող ուսանողների ու դասախոսների համար: Նրանց ջանքերն ապարդյուն անցան: Ֆակուլտետը տեղափոխեցին պակաս հարմարեցված մի շինություն: Դասադուլը տևեց շուրջ ութ շաբաթ:

Դասերին հաճախել այլևս հնարավոր չէր, փոխարենը գերմանացի դասախոսները՝ Բեատե Ֆինիս-Զիգլերը, Ուլրիխ Ստաշայտը, Վալթեր Քիլը, բազմապիսի միջոցառումներ ու գիտաժողովներ կազմակերպեցին, ուղղորդեցին սոցիալական տարբեր ծառայություններ, որոնք հիմնովին փոխեցին իմ պատկերացումները սոցիալական աշխատանքի մասին: Դասընթացն ամբողջությամբ ունկնդրելու հնարավորություն ունեցա հաջորդ՝ 1998 թվականին, երբ կրկին հրավիրվեցի Ֆրանկֆուրտի բարձրագույն դպրոց: Այս անգամ արդեն գիրքը կարդացել էի, և դասախոսություններին մասնակցությունն ինձ համար դարձավ առավել արդյունավետ:




**Նկար 1.** Բեատե Ֆինիս Զիգլերի «Սոցիալական աշխատանքի տնտեսագիտություն» դասագրքի շապիկը (1997)։

Շատ զարմանալի էր տեսնել սոցիալական աշխատանքի մասին դասագիրք, որի կազմին պատկերված են ոչ թե մարդիկ, այլ հաշվիչ սարք *(տե՛ս Նկար 1)*։ Որպես կանոն, սոցիալական աշխատանքը առնչվում է հումանիզմի, սոցիալական հավասարության ու արդարության, մարդու իրավունքների պաշտպանության գաղափարներին։ Այս վեհ արժեքների համատեքստում հազվադեպ են անդրադառնում առավել պրագմատիկ, սակայն ոչ պակաս կարևոր հարցերին, ինչպես, օրինակ, սոցիալական ոլորտի ֆինանսավորման աղբյուրները, ծառայությունների տնտեսական արդյունավետությունը կամ սոցիալական ծախսերի ֆինանսաբյուջետային հիմնավորումը։

Ֆինիս-Զիգլերի դասագիրքն արդեն շապիկի պատկերով իսկ մի շարք հարցադրումներ էր առաջ քաշում։ Ի՞նչ արժի սոցիալական աշխատանքը։ Որտեղի՞ց են հայտնվում այն ֆինանսական ռեսուրսները, որոնց միջոցով հնարավոր կլինի իրացնել մարդու իրավունքները։ Նման հարցադրումները հաճախ դիտարկվում են որպես սառը տեխնոկրատական[1], այ-

---

1 **Տեխնոկրատիան** *(հուն.՝ τέχνη, «վարպետություն» + κράτος, «իշխանություն»)* կառավարման համակարգ է, որում իշխանությունը պատկանում է կոնկրետ ոլորտների մասնագետներին *(ինժեներներ, տնտեսագետներ, գիտնականներ)*, իսկ որոշումները կայացվում են ռացիոնալ վերլուծության, արդյունավետության ու տեխնիկական նպատակահարմարության հիման վրա *(Kelemen, 2017)*։

նինչ դրանք հիմնարար նշանակություն ունեն սոցիալական աշխատանքի հաջողության ու կայունության համար:

«Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմքերը» դասագիրքը նախևառաջ նախատեսված է իմ սոցիալական աշխատող ուսանողների համար, որոնք մշտապես եղել են ինձ համար ամենաhզոր շարժիչ ուժը: Այն օգտակար կլինի նաև սոցիոլոգներին, տնտեսագետներին ու կառավարման մասնագետներին:

«Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմքերը» դասընթացն սկսեցի դասավանդել Երևանի պետական համալսարանի «Սոցիալական աշխատանքի» բակալավրի կրթական ծրագրում դեռևս 1998 թվականին՝ Գերմանիայից վերադառնալուց անմիջապես հետո, ինչի համար անսահման շնորհակալ եմ իմ ուսուցիչ տիկին Լյուդմիլա Հարությունյանին[2], որն ինձ 22 տարեկանում (չգիտեմ՝ ինչու) վստահեց և թույլ տվեց լսարան մտնել:

Դասախոսական ուղին հեշտ չէր, բայց շատ հետաքրքիր ու առաջ մղող: Այստեղ ինձ կրթում էին ոչ միայն գրքերը, այլև իմ գործընկերները, ուսանողները, կյանքի իրավիճակները:

Եվ ի սկզբանե հայկական սոցիալական աշխատանքի համար գերմանական շեշտադրումներով օտար դասընթացը

---

[2] **Լյուդմիլա Հակոբի Հարությունյանը** հայ անվանի սոցիոլոգ է, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, 1986 թվականից՝ ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս, 1986-2003 թվականներին՝ ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, 2003-2010 թվականներին՝ ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի դեկան: Նրա ներդրումը հայ սոցիոլոգիական դպրոցի զարգացման գործում անգնահատելի է: Իր մասնագիտական գործունեության ընթացքում նա սկիզբ դրեց նաև Հայաստան նոր մուտք գործող «Սոցիալական աշխատանք» մասնագիտության ու ոլորտային կրթության զարգացմանը:

փոխակերպվեց, համալրվեց, հարստացավ և իր տեղը գտավ հայաստանյան կրթական համատեքստում: Այդ իսկ պատճառով խորապես երախտապարտ լինելով բոլոր ուսուցիչներիս՝ հայաստանյան ու միջազգային՝ ժամանակն է, կարծում եմ, գրելու հեղինակելու հայերեն դասագիրք:

**«Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմքերը» դասընթացի նպատակն է** ներկայացնել ուսանողներին սոցիալական աշխատանքը՝ որպես պահանջմունքների բավարարմանն ուղղված ծառայություն, որը գործառում և զարգանում է սուղ հանրային ռեսուրսների տնօրինման համատեքստում: Դասընթացը դիտարկում է սոցիալական աշխատանքը տնտեսական սկզբունքների տեսանկյունից, ինչպես նաև աջ ու ձախ քաղաքական գաղափարախոսությունների համատեքստում:

Դասընթացի ավարտին ուսանողներն ունակ կլինեն՝

1. մեկնաբանելու «սոցիալական» հասկացությունը փիլիսոփայական, սոցիոլոգիական ու իրավական տեսանկյուններից,
2. բացատրելու սոցիալական աշխատանքի ու տնտեսագիտության կապը,
3. հասկանալու Հայաստանում սոցիալական աշխատանքի ձևավորման նախադրյալները,
4. մեկնաբանելու սոցիալական աշխատանքի սահմանումներն ու տնտեսական սկզբունքները,
5. վերլուծելու սոցիալական պահանջմունքների բնույթն ու հիերարխիան,
6. տարբերակելու անձնական ու կոլեկտիվ, օբյեկտիվ ու ոչ օբյեկտիվ պահանջմունքները,

7. մեկնաբանելու պահանջմունքների ու կարիքների միջև տարբերությունները,
8. գնահատելու գովազդի ազդեցությունը պահանջմունքների ձևավորման ու սպառման վրա,
9. բնութագրելու ապրանքներն ու ծառայությունները՝ որպես պահանջմունքների բավարարման միջոց,
10. տարբերելու ազատ ու տնտեսական բարիքները, մշակելու բարիքների կոմոդիֆիկացման ու դեկոմոդիֆիկացման ռազմավարություններ,
11. վերլուծելու ապրանքների ու ծառայությունների բաշխման համակարգերն ու մերիտոր բարիքների դերը,
12. ներկայացնելու ապրանքների ու ծառայությունների արտադրության գործընթացները,
13. բացատրելու ծառայությունների առանձնահատկությունները, որակի գնահատման մեթոդներն ու ծառայությունների տեսակները սոցիալական աշխատանքի համատեքստում,
14. համեմատելու շահույթ հետապնդող ու շահույթ չհետապնդող կազմակերպությունները, վերլուծելու դրանց դերը սոցիալական ծառայությունների ոլորտում,
15. ներկայացնելու սոցիալական ոլորտի ֆինանսավորման աղբյուրները,
16. վերլուծելու աղքատության տարբեր հայեցակարգերը,
17. մեկնաբանելու քաղաքական գաղափարախոսությունների դերը սոցիալական քաղաքականության ձևավորման գործում:

# ԳԼՈՒԽ 1. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

## 1.1. «Սոցիալական» հասկացության փիլիսոփայական ու սոցիոլոգիական մեկնաբանումները

«Սոցիալական» հասկացությունը շատ հաճախ քննվում է ամենատարբեր համատեքստերում: Չկա գեթ մեկ լուրերի թողարկում, որի ընթացքում չհնչի «սոցիալական» բառը: Արդյունքում կենցաղային մակարդակում հասկացության բովանդակության սահմանները բավական լայն են: Այս դասագրքում «սոցիալական» բառը գործածվել է 638 անգամ:

Փիլիսոփայական ու սոցիոլոգիական գրականության մեջ «սոցիալական» հասկացության իմաստավորումը ժամանակի ընթացքում զարգացել է՝ արտացոլելով տարբեր տեսական ավանդույթներ, փիլիսոփայական հարացույցներ ու պատմական համատեքստեր:

**Արիստոտելը** *(Ք.ա. 384-322 թթ.)* մարդկանց նկարագրում է որպես սոցիալական կենդանի (հին հուն.՝ ζῷον πολιτικόν – zoon politikon)՝ ընդգծելով, որ մարդիկ ի ծնե ձգտում են ապրելու իրենց նմանների համայնքում: Արիստոտելի համար սոցիալականը մարդու բարեկեցության ու զարգացման անբաժանելի մասն է, և կյանքը կարող է **էթիկական** լինել միայն պոլիսներում *(քաղաք-պետություններում)* (Aristotle, 1998):

**Թոմաս Հոբսը** *(1588-1679 թթ.)* հասարակական կյանքը դիտարկում է որպես **սոցիալական պայմանագրի արդյունք**՝ բնական վիճակի քաոսից խուսափելու ռացիոնալ համաձայնագիր: Այստեղ հասարակականը ծագում է անհատական եսասիրությունից ու կարգուկանոնի անհրաժեշտությունից (Hobbes, 1996):

**Հեգելը** *(1770-1831 թթ.)* սոցիալականը դիտարկում է դիալեկտիկ գործընթացների ներքո: Էթիկական կյանքը դարձնում է մարդուն սոցիալական ու նպաստում է **քաղաքացիական հասարակության ու պետության զարգացմանը** (Hegel, 1977):

**Մարքսիստական մոտեցումը** սոցիալականը սահմանում է նյութական պայմանների, դասակարգային հարաբերությունների ու արտադրության եղանակի տեսանկյունից: Կարլ Մարքսի *(1818-1883 թթ.)* կարծիքով մարդկային կյանքը բնույթով սոցիալական է, և անհատական գիտակցությունը ձևավորվում է միջնորդավորված սոցիալական կառուցվածքներով: Նա կենտրոնացել է այն հարցի վրա, թե որքանով են սոցիալական հարաբերությունները պայմանավորված տնտեսական կառուցվածքներով, մասնավորապես **դասակարգային պայքարով ու աշխատանքային դինամիկայով** (Marx, 1992):

**Էմիլ Դյուրքհեյմը** *(1858-1917 թթ.)* սոցիալականը սահմանում է որպես **արտաքին սահմանափակող ուժ**, որը ձևավորում է անհատի վարքագիծը: Նա ներդրել է **«սոցիալական փաստեր»** հասկացությունը: Դրանք գործելու, մտածելու ու զգալու կոլեկտիվ եղանակներ են, որոնք վերանձնային են, գոյություն ունեն անհատից դուրս, բայց վերահսկում են անհատի վարքը (Durkheim, 1997):

**Մաքս Վեբերը** *(1864-1920 թթ.)* սոցիալականը դիտարկում է **իմաստավորված սոցիալական գործողության** տեսանկյունից՝ ընդգծելով գործողության մեկնաբանության կարևորությունը: Նա առանձնացնում է նպատակառացիո-

նալ[3], արժեքառացիոնալ[4], աֆեկտիվ [5] ու ավանդական[6] գործողության տեսակները (Weber, 2005):

**Էմանուել Լևինասն** *(1906-1995 թթ.)* ու **Ժան-Փոլ Սարթրը** *(1905-1980 թթ.)* սոցիալականը քննում են միջանձնային էթիկայի ու այլ մարդկանց հետ հարաբերությունների տեսանկյունից՝ կենտրոնանալով **օտարի, այլնի նկատմամբ պատասխանատվության կամ մյուսների հետ համատեղ գոյատևելու կոնֆլիկտային բնույթի** վրա (Levinas, 1969; Sartre, 2003):

---

[3] **Նպատակառացիոնալ գործողությունը** սոցիալական գործողության այն տեսակն է, որի ընթացքում անհատը սահմանում է հստակ նպատակ ու ընտրում դրան հասնելու առավել արդյունավետ միջոցները՝ հաշվի առնելով իր գործողությունների հնարավոր հետևանքներն ու միջավայրի պայմանները *(օրինակ՝ ուսանողը ձգտում է ունենալ բարձր առաջադիմություն ուսման վարձի զեղչ ստանալու նպատակով)*:

[4] **Արժեքառացիոնալ գործողությունը** սոցիալական գործողության այն տեսակն է, որի ընթացքում անհատը կատարում է որոշակի քայլեր՝ ղեկավարվելով իր արժեհամակարգով՝ անկախ նրանից՝ արդյոք այդ գործողությունը կհանգեցնի օգտակար արդյունքի, թե ոչ *(օրինակ՝ սոցիալական աշխատողը այցելում է պարեց միայնակ շահառուին իր աշխատանքային ժամերից դուրս, քանի որ հավատում է մարդասիրության արժեքներին և ուզում է օգնել)*:

[5] **Աֆեկտիվ** *(լատ.՝ affectus – կիրք, հուզական ապրում)* **գործողությունը** սոցիալական գործողության այն տեսակն է, որի ընթացքում անհատը ղեկավարվում է սեփական զգացմունքներով, հույզերով կամ տրամադրությամբ: Այս տեսակի գործողությունն առաջանում է պայմանական կամ իրավիճակային հուզական ռեակցիայի արդյունքում *(օրինակ՝ մայրը, լսելով իր երեխայի լացը, հուզվում է և առանց մտածելու գրկում է նրան, սկսում է օրորել, հանգստացնել)*:

[6] **Ավանդական գործողությունը** սոցիալական գործողության այն տեսակն է, որը կատարվում է սովորության, ավանդույթի, ընդունված վարքականոնի ազդեցության տակ *(օրինակ՝ հարսանիքի ժամանակ նորապսակների ուսերին լավաշ դնելու ու մեղրով հյուրասիրելու ավանդույթը)*:

**Թալքոթ Փարսոնսը** *(1902-1979 թթ.)* սոցիալականը դիտարկում է որպես **փոխկապակցված դերերի ու ինստիտուտների համակարգ, որը պահպանվում է նորմերի ու արժեքների միջոցով** (Parsons, 1951):

**Միշել Ֆուկոն** *(1926-1984 թթ.)* սոցիալականը դիտարկում է որպես **ուժային հարաբերությունների ցանց** ինստիտուտներում, դիսկուրսներում ու պրակտիկաներում: «Սոցիալականը» չեզոք չէ. այն **կարգապահության ու նորմալացման տիրույթ** է (Foucault, 1995):

**Պիեռ Բուրդյոն** *(1930-2002 թթ.)* սոցիալականը սահմանել է **հաբիտուսի, կապիտալի** *(սոցիալական, մշակութային, տնտեսական)* ու **սոցիալական տարածության** տեսանկյունից՝ շեշտը դնելով սոցիալական պրակտիկաների միջոցով անհավասարության վերարտադրության վրա (Bourdieu, 1984):

Բոլոր հեղինակները նորովի են մեկնաբանում եզրույթը: «Սոցիալականը» դինամիկ հասկացություն է, բազմաչափ եզրույթ: Փիլիսոփաները հակված են կենտրոնանալ ուրիշների հետ համակեցության գոյաբանական ու էթիկական հետևանքների վրա, մինչդեռ սոցիոլոգները առավելապես անդրադառնում են սոցիալական կառուցվածքներին, ինստիտուտներին ու պրակտիկաներին:

Այսպիսով՝ «սոցիալական» եզրույթի բովանդակությունը ներառում է հետևյալ համատեքստերը՝

1. **հարաբերություններ**. սոցիալականը վերաբերում է մարդկանց, խմբերի ու ինստիտուտների միջև հարաբերություններին,

2. **կոլեկտիվ**. սոցիալականը վերաբերում է համատեղ կյանքին, խմբային պատկանելությանն ու կոլեկտիվ ինքնությանը,
3. **կառուցվածք**. սոցիալականը ներառում է ինչպես իշխանության ու վերահսկողության համակարգեր, այնպես էլ անհատական գործողությունների կարողություն,
4. **նորմատիվություն**. սոցիալականը ներառում է արժեքներ, նորմեր ու սպասումներ, որոնք ուղղորդում են վարքագիծը,
5. **կոնֆլիկտ ու անհավասարություն**. սոցիալականը հաճախ բնութագրվում է իշխանության, ռեսուրսների ու հեղինակության համար պայքարի համատեքստում:

## 1.2 Մարդը որպես կենսաբանական, սոցիալական ու իրավական էակ

Մարդը, լինելով **կենսաբանական էակ**, պետք է բավարարի իր ֆիզիոլոգիական պահանջմունքները. սնվի, քնի, հանգստանա, բավարարի սեռական պահանջմունքներն ու այլ կարիքները:




**Նկար 2.** Մարդու զարգացումը որպես կենսաբանական, սոցիալական ու իրավական էակ

Մարդը դառնում է **սոցիալական էակ** այն պահին, երբ գիտակցում է այլ մարդկանց ներկայությունն իր կյանքում ու նրանց հետ հարաբերվելու անհրաժեշտությունը, ինչն անմիջապես առաջացնում է էթիկական հարցեր ու կոնֆլիկտներ սահմանափակ ռեսուրսներն այլոց հետ կիսելու կամ չկիսելու տեսանկյունից: Էթիկական երկընտրանքների[7] լուծմանն ուղղված կրկնվող պրակտիկաներն ամրագրվում են՝ ձևավորելով սոցիալական արժեքներ[8], նորմեր[9] ու վարքի նմուշներ:

Սոցիալական որոշ նորմեր ստանում են **իրավական** ուժ և փոխակերպվում են օրենքների: Նման անհրաժեշտություն առաջանում է, երբ ոչ բոլորն են պահպանում սոցիալական կարևոր նորմերը, երբ անհրաժեշտ է մարդկանց պարտադ-

---

[7] **Էթիկական երկընտրանքը** *(կամ էթիկական դիլեմա)* իրավիճակ է, երբ մարդն ստիպված է ընտրություն կատարել երկու կամ ավելի փոխադարձաբար հակասող գործողությունների միջև, որոնցից յուրաքանչյուրն ունի էթիկական հիմնավորում, բայց միաժամանակ որևէ տարբերակ ընտրելը նշանակում է մյուսի անտեսում կամ խախտում *(Reamer, 2021)*:

[8] **Սոցիալական արժեքները** համընդհանուր գաղափարներ են, որոնք ընդունված են հասարակության անդամների մեծամասնության կողմից, հիմնավորում են սոցիալական նորմերը և ուղղորդում են անհատների ու խմբերի վարքը: Սոցիալական արժեքները մարդկանց պատկերացումներն են բարու ու չարի մասին: Սրանք այն կարևոր սկզբունքներն են, որոնց շուրջ կառուցվում է սոցիալական կյանքը, օրինակ՝ արդարություն, ազատություն, համերաշխություն, հարգանք, պատասխանատվություն *(Смелзер, 1994)*:

[9] **Սոցիալական նորմերը** հասարակության կողմից ընդունված և հաստատված վարքագծի կանոններն են, որոնք կարգավորում են անհատների գործողությունները և նպաստում են սոցիալական կարգուկանոնին: Այլ կերպ ասած՝ սոցիալական նորմերը «նորմալի» ու «ոչ նորմալի», «թույլատրելիի» ու «անթույլատրելիի», «ընդունելիի» ու «անընդունելիի» միջև սահմաններն են: Դրանք արտացոլում են, թե ինչպես «պետք է» կամ «ճիշտ է» գործել այս կամ այն իրավիճակում՝ սոցիալական տարբեր միջավայրերում *(Смелзер, 1994)*:

րել նոր վարքագիծ, փոխել կամ արգելել որոշակի վարքագիծ *(տե՛ս Նկար 2)*:

Ընդ որում՝ մարդու այս երեք էությունները միշտ չէ, որ հաշտ են իրար հետ: Զիգմունդ Ֆրոյդի կարծիքով սոցիալականը ճնշում է մարդու կենսաբանական էությունը, ֆիզիոլոգիական պահանջմունքները (Фрейд, 2023):

> ***Օրինակ 1.*** *Դասի ժամանակ չի կարելի ուտել, եթե անգամ շատ սոված ես:*
> *Եթե տանը հյուր կա, տանտիրոջ ընտանիքի անդամները չեն գնա քնելու, անգամ եթե շատ հոգնած են:*
> *Այլ մարդկանց ներկայությամբ քիթը չեն մաքրում, անգամ եթե դրա կարիքը կա:*

Իհարկե, որոշ դեպքերում ֆիզիոլոգիական պահանջմունքը դառնում է գերիշխող, և սոցիալական սահմանափակումներն այլևս չեն գործում, մարդը կարող է «խախտել» ընդունված նորմերը՝ ցուցաբերելով «անընդունելի» վարքագիծ: Շատ հաճախ այդ խախտումը հասարակության այլ անդամների կողմից ընկալվում է որպես խայտառակություն:

Համանման ձևով իրավական նորմերը կարող են ճնշել մարդու սոցիալական էությունը՝ նրա հաղորդակցման, տեղաշարժման, ինքնաիրացման ու մշակութային մասնակցության ձգտումները:

> ***Օրինակ 2.*** *Մարդը կարող է ցանկանալ մեկնել Փարիզ՝ վայելելու իմպրեսիոնիստական արվեստը, սակայն առանց շենգենյան մուտքի արտոնագրի այդ սոցիալական փորձառությունը դառնում է անհասանելի իրավական արգելքների պատճառով:*

> ***Օրինակ 3.*** *Քաղաքացին փորձում է հրազեկման ակցիա կազմակերպել՝ հանուն որոշակի փոփոխության, սակայն բախվում է հանրային հավաքների օրենսդրական սահմանափակումներին:*

***Օրինակ 4.*** *Հայաստանյան կրթական համակարգում բոլոր երեխաները պարտադիր պետք է սկսեն հաճախել հանրակրթական դպրոց վեց տարեկանից: Եթե ծնողը երեխային դպրոց տանի յոթ տարեկանից՝ այդպիսով խախտելով օրենքով սահմանված ժամկետը, կարող է տուգանվել՝ երեխայի կրթության իրավունքը խախտելու համար:*

## 1.3. «Սոցիալական» թե «հասարակական»

«Սոցիալական» հասկացության արմատը լատինական «socius» բառն է, որը նշանակում է «ընկեր, դաշնակից, ուղեկից»: Ի սկզբանե «socius» հասկացությունը արտահայտել է համատեղ մասնակցության ու խմբային պատկանելության գաղափարները, որոնք էլ ընկած են «սոցիալական» եզրույթի հիմքում: Այսպիսով՝ «սոցիալական» ածականը բնութագրում է մարդկանց միջև փոխհարաբերություններն ու փոխազդեցությունը (Луман, 2004):

Անգլերենում ու ռուսերենում «սոցիալական» ածականը գործածվում է հասարակության հետ կապը բնութագրելու համար:

Հայերենում նույն նշանակությամբ հաճախ կիրառվում է «հասարակական» ածականը: Այս համատեքստում «սոցիալական» ու «հասարակական» բառերը հայերենում հոմանիշներ են և կարող են փոխարինել միմյանց՝ առանց իմաստային շեղման: *Օրինակ՝ սոցիալական ակտիվություն ու հասարակական ակտիվություն, սոցիալական նախաձեռնություն ու հասարակական նախաձեռնություն, սոցիալական արձագանք և հասարակական արձագանք:* Սակայն երբ խոսքը վերաբերում է «սոցիալական պետություն», «սոցիալական քաղաքականություն», «սոցիալական արդարություն», «սոցիա-

լական հավասարություն», «սոցիալական աշխատանք» հասկացություններին, «հասարակական» ածականը այլևս համարժեքորեն չի կարող փոխարինել «սոցիալական» եզրույթին: Այս պարագայում «սոցիալական» եզրույթն արտահայտում է ոչ միայն հասարակության հետ առնչությունը, այլև պետության՝ բարեկեցության ապահովման, հավասար հնարավորությունների ստեղծման ու սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող քաղաքականության բովանդակությունը, ինչը «հասարակական» բառը լիարժեք չի արտահայտում: Բացի դրանից՝ «սոցիալական» եզրույթն ավելի կիրառելի է, երբ քննարկվում են ինստիտուցիոնալ համատեքստը, տեսական մոտեցումներն ու կառուցվածքային տարրերը (Осипов, 1998):

«Հասարակական» եզրույթն ավելի առնչվում է մարդկանց մեծ զանգվածներին, կոլեկտիվներին ու ոչ ֆորմալ միավորումներին: *Օրինակ՝ հասարակական կարծիք, հասարակական քննարկումներ, հասարակական փրամադրություններ և այլն:* Այս համատեքստերում «սոցիալական» ածականի կիրառումը տեղին չէ կամ կարող է էականորեն փոխել բառակապակցության իմաստը:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Բերե՛ք մարդու սոցիալական ու կենսաբանական էության միջև կոնֆլիկտի օրինակներ:
2. Բերե՛ք մարդու սոցիալական ու իրավական էության միջև կոնֆլիկտի օրինակներ:

3. Բերե՛ք մարդու կենսաբանական ու իրավական էության միջև կոնֆլիկտի օրինակներ:
4. Ինչո՞վ է «սոցիալական» հասկացությունը տարբերվում «հասարակական» հասկացությունից: Ներկայացրե՛ք օրինակներ:
5. Ինչպե՞ս են սոցիալական նորմերը վերածվում իրավական նորմերի: Ո՞րն է այդ փոփոխության սոցիալական նշանակությունը: Ներկայացրե՛ք օրինակներ:

**Հանձնարարություն**

Գտնել լրատվամիջոցներից «սոցիալական» բառի գործածման օրինակներ և վերլուծել՝ ինչ համատեքստում է այն կիրառվում:

**Խմբային բանավեճ**

Թեմա՝ «Արդյո՞ք պետք է բոլոր սոցիալական նորմերը վերածել օրենքների»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթետիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ[10]:

---

[10] Փաստարկման տեսության մեջ տարբերում են փաստարկների երեք հիմնական տեսակ՝ հիմնված Արիստոտելի դասակարգման վրա՝ **ռացիոնալ (logos)**, **հուզական (pathos)** ու **էթիկական (ethos)**: **Ռացիոնալ (բանական) փաստարկները** հիմնված են տրամաբանական մտածողության, փաստերի, վիճակագրության, վերլուծությունների ու օբյեկտիվ տվյալների վրա: Դրանք նպատակ ունեն համոզելու լսարանին տրամաբանական հետևությունների թվային տվյալների, գիտական հետազոտությունների արդյունքների, պատճառահետևանքային վերլուծությունների, օրենսդրական

# ԳԼՈՒԽ 2. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

## 2.1. Սոցիալական աշխատանքի ձևավորումը Հայաստանում

Սոցիալական աշխատանքը նոր մասնագիտություն է ամբողջ աշխարհում, հատկապես հետսոցիալիստական հասարակություններում, ինչպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը: Ա. Խաչատրյանը նշում է, որ սոցիալական աշխատանքը՝ որպես մասնագիտություն, հայաստանյան իրականություն մուտք գործեց XX դարավերջին՝ 1988 թվականի Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո (Խաչատրյան, 2012), որի մակրոսեյսմիկ ինտենսիվությունը գնահատվեց արտասովոր կործանարար: Երկրաշարժի հետևանքով շարքից դուրս էր եկել Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության արդյունաբերական ներուժի շուրջ 40 %-ը: Երկրաշարժի արդյունքում լիովին ավերվեցին Սպիտակ քա-

---

փաստաթղթերի միջոցով: **Հուզական (պաթետիկ) փաստարկներն** ուղղված են լսարանի զգացմունքներին ու փորձառությանը: Դրանք նպատակ ունեն առաջացնելու կարեկցանք, վախ, հպարտություն, արդարության զգացում լսարանի մոտ, ներգրավելու ու համոզելու լսարանին՝ ազդելով նրանց զգացմունքների վրա: Պաթետիկ փաստարկներում հաճախ օգտագործվում են անձնական պատմությունները, վառ նկարագրություններ, տուժածների վկայություններ, լուսանկարներ կամ տեսանյութեր, որոնք առաջացնում են հուզական արձագանք: **Էթիկական (բարոյական) փաստարկները** հիմնված են բանախոսի կամ աղբյուրի հեղինակության, հուսալիության, փորձառության ու բարոյական արժեքների վրա: Դրանք նպատակ ունեն համոզելու, որ բանախոսը կամ աղբյուրը արժանահավատ է և վստահելի՝ վկայակոչելով մասնագիտական փորձը, հեղինակավոր կազմակերպությունների կարծիքը, բարոյական սկզբունքները, խոսողի անձնական հեղինակությունը *(O'Keefe, 2016)*:

ղաքն ու 58 գյուղ, մասամբ՝ Լենինական *(ներկայում՝ Գյումրի)*, Ստեփանավան, Կիրովական *(ներկայում՝ Վանաձոր)* քաղաքներն ու ավելի քան 300 բնակավայր (Ամատունի, 2011): Երկրաշարժի հետևանքով զոհվեց մոտ 25 հազար մարդ, իսկ հարյուր հազարավոր մարդիկ սոցիալապես խոցելի դարձան. շուրջ 500 հազար մարդ մնաց անօթևան, մոտ 19 հազարն էլ հաշմանդամություն ձեռք բերեց (News.am., 2016): Մարդիկ կորցրին հարազատներին՝ զավակներին ու կերակրողներին, դարձան անգործունակ, ստացան հոգեբանական տարաբնույթ տրավմաներ: Փլուզվող Խորհրդային Միությունն ի վիճակի չէր բավական չափով աջակցել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված (ԿԴԻՀ) մարդկանց: Աջակցության համար արևմտյան պետությունները՝ տրամադրելով հումանիտար ու մասնագիտական օգնություն, որոնց կազմում էին նաև սոցիալական աշխատողները:

Հայաստանի համար որպես նոր մասնագիտություն՝ սոցիալական աշխատանքն սկսեց արագորեն զարգանալ՝ մուտք գործելով կրթական հաստատություններ, սոցիալական ապահովության համակարգ, հասարակական ու պետական այլ կազմակերպություններ:

Սակայն սոցիալական աշխատանքի՝ որպես մասնագիտության ձևավորման մեկնարկային կետն էապես տարբեր էր Ամերիկայի Միացյալ Նահանգների (ԱՄՆ) ու Արևմտյան Եվրոպայի երկրների փորձից, որտեղ այն սկսել է զարգանալ XIX դարավերջին ու XX դարասկզբին: Արևմտյան մշակութային միջավայրում սոցիալական աշխատանքը՝ որպես մասնագիտություն, ձևավորվել է ի պատասխան շուկայական հարաբերություններով պայմանավորված սոցիալական մար-

տաhիրավերներին՝ սոցիալական անհավասարություն, անարդարություն ու խտրականություն, քանի որ կապիտալիզմը սրում է մրցակցությունը տարատեսակ ռեսուրսների, ապրանքների ու ծառայությունների համար, որի հետևանքով բնակչության պակաս մրցունակ խմբերի կենսական պահանջմունքների բավարարումը դառնում է ռիսկային (Խաչատրյան, 2016)։ Մինչդեռ սոցիալիստական հասարակարգերում սոցիալական հավասարության ու արդարության ապահովման հիմնական դերակատարը պետությունն էր, որն ստանձնում էր մարդու հիմնարար պահանջմունքների բավարարման պատասխանատվությունը՝ տրամադրելով սոցիալական երաշխիքներ[11] հանրակրթության, առողջապահության, բնակարանային ապահովման, համընդհանուր զբաղվածության, կենսաթոշակային ապահովման ու աջակցող այլ մեխանիզմների միջոցով։

Խորհրդային Միության փլուզումից հետո հետսոցիալիստական երկրները որդեգրեցին կապիտալիստական զարգացման ուղին՝ հիմնված ազատ շուկայական հարաբերությունների վրա, ինչի արդյունքում պետությունն աստիճանաբար փոխանցեց տնտեսական, հետևաբար նաև սոցիալական գործընթացների վերահսկողության պատասխանատվությունն ազատ շուկային։ Միևնույն ժամանակ հայաստա-

[11] **Սոցիալական երաշխիքները** պետական կամ հասարակական միջոցառումներն ու մեխանիզմներն են, որոնք ուղղված են մարդու կենսագործունեության նվազագույն մակարդակի ապահովմանը սոցիալական ռիսկերի (ցածր եկամուտ, անաշխատունակություն, գործազրկություն, ծերություն, հիվանդություն և այլն) պայմաններում։ Օրինակ՝ նվազագույն աշխատավարձ, կենսաթոշակներ, նպաստներ, արտոնություններ, բնակարանային աջակցություն և այլն *(ILO, 2021)*։

նյան հասարակությունը հայտնվեց տնտեսապես ու սոցիալա-պես ծանր պայմաններում Սպիտակի երկրաշարժի, Արցախյան առաջին պատերազմի և տնտեսական արգելափակման[12] պատճառով: Սոցիալական այս խորը ճգնաժամի տարիները հայտնի դարձան որպես «մութ ու ցուրտ»՝ բնորոշվելով զանգվածային զրկանքներով, ենթակառուցվածքների ապակառուցմամբ, պարենային ճգնաժամով ու բնակչության արտագաղթի ալիքներով:

Սոցիալ-տնտեսական այսպիսի պայմաններում էր ձևավորվում սոցիալական աշխատանքը Հայաստանում: Սոցիալական կարիքները բազմազան էին ու փոխհատական[13], իսկ

---

[12] **Հայաստանի արգելափակում** – Հայաստանը 1990-ական թվականներին ենթարկվել է տնտեսական ու տրանսպորտային խիստ արգելափակման, որն ունեցել է աղետալի հետևանքներ երկրի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: 1988 թվականին սկսվեց Ղարաբաղյան շարժումը, դրան հաջորդեց պատերազմը: 1989 թվականի դեկտեմբերին Ադրբեջանը փակեց երկաթուղիներն ու ավտոճանապարհները Հայաստանի ու Նախիջևանի միջև: 1991-1993 թվականներին Ադրբեջանն ամբողջությամբ փակեց Հայաստանի հետ սահմանը՝ հակազդելով Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը: 1993 թվականին Թուրքիան նույնպես փակեց սահմանը Հայաստանի հետ՝ ի նշան Ադրբեջանի հետ համերաշխության: Արդյունքում Հայաստանը կտրվեց արտաքին շուկաներից, նավթամթերքի, գազի, էլեկտրաէներգիայի մատակարարումները դադարեցին, արդյունաբերությունը գրեթե ամբողջությամբ կանգ առավ: Մարդիկ ապրում էին էլեկտրաէներգիայի խիստ պակասի, ջեռուցման բացակայության պայմաններում *(World Bank, 2001; Human Rights Watch, 1994)*:

[13] **Փոխհատականությունը** *(intersectionality)* սոցիալական բնութագրիչների *(ռասա, խավ, սեռ, հաշմանդամություն, աղքատություն)* փոխկապակցվածությունն է: Դրանք վերաբերելով տվյալ անհատին կամ խմբին՝ ձևավորում են խոցելիության, խտրականության կամ թերարժևորման փոխկախյալ համակարգեր *(Crenshaw, 1989)*: Օրինակ՝ հաշմանդամություն ունեցող փախստական կինը կարող է բախվել խտրականության ոչ միայն իր սեռի հիմքով, այլև հաշմանդամության ու փախստականի կարգավիճակի պատճառով: Այս ինքնություններն իրար հետ հատվում են՝

դրանց արձագանքելու համար բացակայում էին ոչ միայն ֆինանսական ռեսուրսները, այլև մասնագիտական ներուժը, տեսլականն ու համապատասխան պետական ենթակառուցվածքները:

## 2.2. Սոցիալական աշխատանքի սահմանումները

Սոցիալական աշխատանքը ներառում է փիլիսոփայական, սոցիոլոգիական, տնտեսագիտական, կառավարման, քաղաքագիտական, հոգեբանական ու այլ գիտությունների տեսությունները: Սոցիալական աշխատանքի սահմանումները ձևավորվել են պատմամշակութային տարբեր համատեքստերում: Միջազգային ու ազգային տարբեր կառույցներ այն սահմանել են՝ ընդգծելով մարդու իրավունքների պաշտպանությունը, սոցիալական արդարության ապահովումն ու խոցելի խմբերին[14] աջակցությունը:

**Սոցիալական աշխատանքի միջազգային սահմանում**

Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիայի *(International Federation of Social Workers - IFSW)* ու

---

ձևավորելով մի փորձառություն, որը տարբերվում է այն անհատի փորձից, որն ունի այդ ինքնություններից միայն մեկը:

14 «**Խոցելի խումբ**» հասկացությունը նկարագրում է մարդկանց կամ սոցիալական խմբերի այն շրջանակը, որոնք տարբեր պատճառներով ունեն սահմանափակ հնարավորություններ՝ օգտվելու հասարակության մեջ առկա ռեսուրսներից, իրավունքներից, կամ պակաս պաշտպանված են սոցիալական ռիսկերից: Խոցելիության պատճառները կարող են ներառել սոցիալ-տնտեսական անապահովությունը, հաշմանդամությունը, տարիքային առանձնահատկությունները *(երեխաներ, տարեցներ)*, փոքրամասնությունները *(էթնիկ, լեզվական, սեռային, կրոնական)*, փախստական կամ տեղահանված լինելը, ընտանեկան բռնության կամ շահագործման ենթարկված լինելը և այլն *(UN Office for Disaster Risk Reduction, 2017)*:

Սոցիալական աշխատանքի դպրոցների միջազգային ասոցիացիայի *(International Association of Schools of Social Work - IASSW)* միջազգայնորեն ընդունված պաշտոնական սահմանման համաձայն՝ **սոցիալական աշխատանքը** պրակտիկայի ու ակադեմիական գիտելիքի վրա հիմնված մասնագիտություն է, որը նպաստում է սոցիալական փոփոխություններին ու զարգացմանը, սոցիալական համերաշխությանը, մարդկանց հզորացմանն ու ազատականացմանը: Սոցիալական աշխատանքի առանցքային սկզբունքներն են սոցիալական արդարությունը, մարդու իրավունքները, կոլեկտիվ պատասխանատվությունն ու մարդկանց բազմազանության նկատմամբ հարգանքը: Հիմնվելով սոցիալական գիտությունների, սոցիալական աշխատանքի տեսությունների, հումանիտար գիտելիքների ու ժողովրդական իմաստության վրա՝ սոցիալական աշխատանքը համագործակցում է մարդկանց ու համակարգերի հետ՝ կյանքի մարտահրավերները հաղթահարելու ու բարեկեցության մակարդակը բարձրացնելու նպատակով (IFSW, 2014):

**Սոցիալական աշխատանքի ակադեմիական սահմանումներ**

Ըստ ամերիկացի գիտնական **Չարլզ Զաստրոուի** *(ծնվ. 1942)*, որը Ավրորայի համալսարանի Ջորջ Ուիլյամս քոլեջի սոցիալական աշխատանքի պրոֆեսոր է, սոցիալական աշխատանքը մասնագիտական գործունեություն է, որի նպատակն է օգնել անհատներին, խմբերին ու համայնքներին՝ բարելավելու կամ վերականգնելու իրենց կարողությունները՝ հասարակության մեջ արդյունավետ գործառելու համար: Միևնույն ժամանակ սոցիալական աշխատանքը միտված է

փոխելու սոցիալական այն պայմանները, որոնք սահմանափակում են այդ հնարավորությունները (Zastrow, 2017):

Բրիտանացի գիտնական **Մալքոլմ Փեյնը** *(ծնվ. 1947)*՝ «Սոցիալական աշխատանքի ժամանակակից տեսությունները» հանրահայտ գրքի հեղինակը, սոցիալական աշխատանքը սահմանում է որպես մասնագիտական գործունեություն, որը միավորում է տեսությունն ու պրակտիկան: Սոցիալական աշխատանքն ուղղված է մարդկային կարիքների բավարարմանը, սոցիալական փոխհարաբերություններին ու բարելավմանը, նաև խոցելիության նվազեցմանը: Սոցիալական աշխատանքն ունի էթիկական հստակ հիմք, որն արտացոլում է հումանիստական ու ժողովրդավարական արժեքները (Payne, 2021):

Ըստ Անգլիայի Դուրհամի համալսարանի պրոֆեսոր **Սառա Բենքսի՝** սոցիալական աշխատանքը կենտրոնացած է մարդու արժանապատվության նկատմամբ հարգանքի, ինքնուրույնության խթանման ու էթիկական միջամտության վրա՝ թիրախավորելով հատկապես խոցելի, մարգինալ[15] կամ ճնշման պայմաններում ապրող մարդկանց (Banks, 2016):

Վերոնշյալ սահմանումները շեշտադրում են սոցիալական աշխատանքի առանցքային մի շարք բաղադրիչներ՝

---

[15] **Մարգինալ** *(լատ.՝ marginalis – եզրին գտնվող)* կոչվում են սոցիալական, քաղաքական, մշակութային կամ տնտեսական բնույթի գործընթացների արդյունքում խոցելի, երկրորդական, կամ «անտեսված» դիրքում հայտնված սոցիալական խմբերը կամ անհատները: Նրանք բացառվում են որոշումների կայացման գործընթացներից, սահմանափակվում է նրանց համար ռեսուրսների հասանելիությունը, նրանք անտեսված են, երբեմն՝ խտրական վիճակում: Այդ խմբերն ու անհատները մղվում են հասարակության կենտրոնական դիրքերից դեպի եզրեր *(Young, 2002)*:

1. **Արժեքները**
- Հումանիստական արժեքներ
- Ժողովրդավարական արժեքներ
2. **Սկզբունքները**
- Սոցիալական արդարություն
- Անհավասար պայմանների հաղթահարում
- Մարդու իրավունքներ
- Մարդու արժանապատվության նկատմամբ հարգանք
- Ինքնուրույնության խթանում
- Էթիկական մոտեցում
3. **Նպատակները**
- Կարիքների բավարարում
- Անհատի հզորացում ու զարգացում
- Սոցիալական վերականգնում
- Մարդկանց ազատականացում
- Խոցելիության նվազեցում
- Սոցիալական հարաբերությունների բարելավում
- Հասարակության փոփոխություն
4. **Թիրախային խմբերը**
- Խոցելի անհատներ, խմբեր, համայնքներ
- Մարգինալ/ բացառված անհատներ, խմբեր, համայնք-ներ

Հիմնվելով վերոհիշյալ սահմանումների ու Հայաստանում սոցիալական աշխատանքի զարգացման համատեքստի վրա՝ **սոցիալական աշխատանքը կարելի է սահմանել որպես տարբեր սոցիալական ինստիտուտներից**[16] այս կամ այն

---

[16] **Սոցիալական ինստիտուտը** սոցիալական արժեքների, նորմերի, կար-գավիճակների ու դերերի պատմականորեն ձևավորված և ամրագրված ամբողջություն է, որը կարգավորում է մարդկային վարքը հասարակության

**խոցելիության պատճառով բացառված անհատների ու սոցիալական խմբերի հասարակություն վերաինտեգրմանը, ակտիվացմանը, հզորացմանն ու հասարակության բարեկեցության զարգացմանն ուղղված պետական ու ոչ պետական կազմակերպությունների սոցիալական ծրագրերի ու միջոցառումների համակարգ:**

***Օրինակ 1.*** *Եթե արտամուսնական կապից ծնված երեխային ընտանիքը չի ընդունում, պետությունը ստանձնում է երեխայի խնամքն ու դաստիարակությունը՝ գտնելով նրան համապատասխան այլընտրանքային խնամքի ձև (տե՛ս Նկար 3):*

***Օրինակ 2.*** *Եթե հանրակրթական դպրոցը չի գտնում տարբերվող վարքագիծ ունեցող դեռահասի հետ աշխատելու մեթոդներ, սոցիալական աշխատողն սկսում է դեպքի վարում՝ աշխատելով դեռահասի, նրա ընտանիքի, դպրոցի ուսուցիչների, դասարանցիների և այլ դերակատարների հետ երեխային դպրոց վերաինտեգրելու ուղղությամբ (տե՛ս Նկար 3):*

***Օրինակ 3.*** *Եթե փոքր երեխա ունեցող երիտասարդ կնոջը գործատուն մերժում է ընդունել աշխատանքի, քանի որ կարծում է,*

---

հիմնական ոլորտներում: Սոցիալական ինստիտուտները կատարում են հասարակության կայունության պահպանման կարևորագույն գործառույթները՝ սոցիալականացում, սոցիալական վերահսկողություն, արժեքների փոխանցում ու վերարտադրություն, համատեղ գործունեության համակարգում և այլն: Սոցիալական ինստիտուտների օրինակներ են ընտանիքը, առողջապահությունը, կրթական համակարգը, կրոնը, տնտեսությունը, պետությունը, մարդու անունը և այլն: Դրանք կառուցում են հասարակական հարաբերություններ՝ սահմանելով տարբեր դերերի բովանդակությունը *(օրինակ՝ ծնող, ուսուցիչ, քաղաքացի)*, նորմերը *(օրինակ՝ ամուսնության ձևեր, իրավական կարգավորումներ)* և լեգիտիմացնում իշխանությունը *(օրինակ՝ կրոնական առաջնորդներ, նախագահ, խորհրդարան)*՝ փոխարինելով մարդկանց ինքնաբուխ վարքը կանխատեսելի վարքով: Ըստ Դուգլաս Նորթի՝ սոցիալական ինստիտուտները մարդու կողմից ձևավորված սահմանափակումներ են, որոնք կառուցակարգում են քաղաքական, տնտեսական ու սոցիալական փոխազդեցությունը *(North, 1991)*:

*որ կինը ստիպված կլինի հաճախ բացակայել աշխատանքից ըն-տանեկան խնդիրների պատճառով, ապա սոցիալական աշխա-տողը սկսում է ստեղծել իր համար ընտանիքահեն պրակտիկա-ներ (տե՛ս Նկար 3):*

***Օրինակ 4.*** *Եթե քրոնիկ հիվանդություն ունեցող տարեցը չի կա-րող օգտվել առողջապահական ծառայություններից երկար հեր-թերի, անհասանելիության ու բժշկական ապահովագրության բացակայության պատճառով, սոցիալական աշխատողի նպա-տակն է նրան օգնել՝ կողմնորոշվելու առողջապահական համա-կարգում, գտնելու ֆինանսական աջակցության ու անվճար ծա-ռայությունների հնարավորություններ (տե՛ս Նկար 3):*

***Օրինակ 5.*** *Եթե ազատազրկման վայրից վերադարձած անձին չեն վերցնում աշխատանքի, սոցիալական աշխատողի նպա-տակն է վերաինտեգրել նրան հասարակություն՝ աշխատանքի տեղավորել, որի շնորհիվ նա եկամուտ կունենա և կկարողանա անկախ կյանք վարել (տե՛ս Նկար 3):*



**Նկար 3.** Սոցիալական ինստիտուտներից դուրս մղված խոցելի մարդիկ

Տնտեսական տեսանկյունը կարևորելով՝ հարկ է շեշտադրել սոցիալական աշխատանքի հետևյալ չորս բաղադրիչները՝

1. արժեհամակարգ[17],
2. օգնություն,
3. վերահսկողություն,
4. հասարակության զարգացում ու առաջընթաց:

Հենց այս հաջորդականությունը ցույց է տալիս սոցիալական աշխատանքի բաղադրիչների առաջնահերթությունը:

**1. Արժեհամակարգ:** Սոցիալական աշխատանքն էթիկական բնույթ ունեցող մասնագիտություն է, որն անհնար է առանց կուռ արժեհամակարգի: Վերջինս որոշում է, թե ով է խոցելի տվյալ հասարակության մեջ, ով կարող է օգտվել աջակցությունից ու արտոնություններից, իսկ ով՝ ոչ:

**2. Օգնություն:** Երբ հասարակությունն ու սոցիալական աշխատողն արդեն կողմնորոշված են՝ ում է պետք օգնել, ինչու, ինչպես, ինչ չափով և որքան ժամանակ, սկսվում է սոցիալական աջակցության, պաշտպանության, հզորացման բուն գործընթացը, որն օգնում է զարգանալ և՛ անհատին, և՛ հասարակությանը:

**3. Վերահսկողություն:** Այս բաղադրիչի մասին սոցիալական աշխատողները չեն սիրում խոսել, քանի որ «վերահսկողություն» հասկացությունը բացասական, հիերարխիկ կոնն-

---

[17] **Արժեհամակարգն** անհատի կամ սոցիալական խմբի կողմից ընդունված, կարևորված ու տարածված արժեքների համադրություն է, որոնք ուղղորդում են նրանց վերաբերմունքը, վարքագիծն ու որոշումները: Այն արտահայտում է, թե ինչն է համարվում ճիշտ, կարևոր, ընդունելի կամ նպատակահարմար տվյալ մշակույթում կամ սոցիալական խմբում *(Смелзер, 1994)*:

տացիաներ[18] ունի: Սակայն անհնար է մարդուն օգնել առանց **կարիքների համապարփակ գնահատման**, որի արդյունքում սոցիալական աշխատողը ձեռք է բերում մանրամասն տեղեկություններ անհատի ու նրա ընտանիքի եկամուտների, ծախսերի, ժամանցի, փոխհարաբերությունների, կրթական առաջադիմության ու կյանքի այլ կարևոր ոլորտների մասին: Օգնությունը տրամադրելու ընթացքում սոցիալական աշխատողը պարբերաբար իրականացնում է մշտադիտարկում (**մոնիթորինգ**)՝ ա) վերահաստատելու համար կարիքի առկայությունը, կամ դրա փոփոխությունը, որպեսզի շարունակի աջակցությունը կամ փոփոխի օգնության բովանդակությունը, եթե կարիքը փոփոխվել է կամ հին միջոցառումներն էլ չեն օգնում, բ) դադարեցնելու օգնությունը, եթե կարիքը բավարարված է: Վերահսկողական մեկ այլ կարևոր գործառույթ է շահառուի[19] **վարքի փոփոխության խթանումը**՝ այն սոցիալապես ընդունելի դարձնելու նպատակով: Սա ենթադրում է,

---

18 **Կոնոտացիան** *(լատ.՝ con – համատեղ + noto – նշել, նշանակել)* բառի կամ արտահայտության երկրորդային, ենթատեքստային իմաստն է, որն ավելանում է բառի բառարանային կամ բառացի *(դենոտատիվ)* իմաստին: Կոնոտացիան արտահայտում է այն զգայական, արժեքային կամ մշակութային վերաբերմունքը, որը մարդիկ կապում են տվյալ բառին *(Ullmann, 1962)*:

19 **Շահառուն** սոցիալական աշխատանքի ծառայություններն ստացողն է, հասցեատերը: Հայաստանում սոցիալական աշխատանքի կայացման ընթացքում մասնագիտական հանրույթի բազմաթիվ քննարկումների ու բանավեճերի արդյունքում անգլիալեզու մասնագիտական գրականության մեջ գործածվող client *(հայ. հաճախորդ)* բառի փոխարեն որոշվել է կիրառության մեջ դնել «այցելու, «խորհրդառու» ու «շահառու» բառերը՝ համարելով, որ «հաճախորդ» բառն ավելի բնորոշ է շուկայական, առևտրային հարաբերություններին: Հայալեզու գիտական գրականության մեջ ու նորմատիվ փաստաթղթերում գործածվում է «շահառու» եզրույթը:

որ սոցիալական աշխատողը փորձում է զերծ պահել շահառուին վնասակար սովորություններից՝ ծխախոտի, ալկոհոլի կամ թմրանյութի օգտագործումից, բռնի վարքագծի դրսևորումներից, մակաբուծությունից՝ խթանելով նրա սոցիալապես ընդունելի, այսինքն՝ աշխատանք փնտրելուն ու գումար վաստակելուն ուղղված վարքագիծը: Սոցիալական միջոցառումների, խոցելի խմբերի ու սոցիալական ոլորտի ծախսերի վերաբերյալ **<u>վիճակագրական տվյալների</u>** հավաքագրումը թույլ է տալիս վերահսկել ոչ միայն անհատների մակարդակով փոփոխությունները, այլև գնահատել հանրային գործընթացների ու սոցիալական դինամիկայի ընդհանուր ուղղությունները:

**4. Հասարակության զարգացում:** Սոցիալական աշխատանքի մասին խոսելիս շատ են կարևորվում մարդակենտրոնությունը, անհատական մոտեցումը, անհատի կարիքների գնահատումն ու բավարարումը: Դրան զուգահեռ սոցիալական ոլորտի ցանկացած միջոցառում պետք է նպաստի հասարակության զարգացմանը, այլապես այն ծախսարդյունավետ չի լինի: Օրինակ՝ աշխատաշուկայում պետք է ներգրավվեն տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչները՝ հաշմանդամություն ունեցող անձինք, նախկին ազատազրկվածները, ցածր եկամտային խմբերի ներկայացուցիչները, որպեսզի բարձրանա հասարակության ընդհանուր բարեկեցության մակարդակը, զարգանա տնտեսությունը, մեծանան արտադրության ծավալներն ու ավելանան հարկային մուտքերը:

## 2.3. Սոցիալական աշխատանքի ու տնտեսագիտության կապը

Առաջին հայացքից սոցիալական աշխատանքն ու տնտեսագիտությունը թվում են երկու բոլորովին տարբեր ոլորտներ: **Սոցիալական աշխատանքը** քննում է հումանիզմի, մարդու իրավունքների, խոցելի խմբերի պաշտպանության, սոցիալական աջակցության մեխանիզմների, խնամքի կազմակերպման, սոցիալական արդարության ու սոցիալական հավասարության հիմնահարցերը:

**Տնտեսագիտությունն** առնչվում է փողի, շուկաների, եկամուտների, շահույթի, հարկերի, տնտեսական արդյունավետությանն ու ռեսուրսների բաշխմանը:

Իրականում այս ոլորտները խիստ փոխկապակցված են: Սոցիալական աշխատանքը մշտապես գործառում է **սահմանափակ ռեսուրսների** համատեքստում: Այն պահանջում է հանրային բարիքների ռացիոնալ ու արդար վերաբաշխում, ինչն անմիջականորեն կապված է տնտեսական մեխանիզմներին և չպետք է խաթարի տնտեսության բնականոն գործառումը: Սոցիալական ամեն նախագիծ, յուրաքանչյուր ծառայություն կամ սոցիալական պաշտպանության ծրագիր պահանջում են ֆինանսական ներդրումներ, բյուջեի[20] կառավա-

---

[20] **Բյուջեն** *(հին նորմանդերեն՝ bougette – դրամապանակ, պայուսակ, փողերի պարկ)* պետական, տեղական ինքնակառավարման կամ կազմակերպության եկամուտների ու ծախսերի նախապես կազմված և հաստատված պլան է որոշակի ժամանակահատվածի (հիմնականում մեկ տարվա) համար: Այն արտացոլում է, թե ինչ աղբյուրներից են ձևավորվում ֆինանսական միջոցները, և ինչ ուղղություններով են դրանք ծախսվելու *(Wildavsky & Caiden, 2003)*:

րում, պլանավորում, արդյունավետության ու կայունության գնահատում:

Սոցիալական աշխատանքի կարևորագույն գործառույթներից ու միաժամանակ գործիքներից մեկը ռեսուրսների վերաբաշխումն է. սոցիալական հավասարության նպատակադրումը սոցիալական աշխատանքում անհրաժեշտաբար հանգեցնում է անհավասարության դեմ պայքարին, որը ենթադրում է հարկային միջոցների օգտագործում անապահով, խոցելի, անմրցունակ սոցիալական խմբերին աջակցելու նպատակով: Հետևաբար տնտեսական սկզբունքներին տիրապետելը սոցիալական աշխատողների մասնագիտական պատրաստվածության անբաժանելի մասն է:

Ֆինիս Զիգլերի պնդմամբ ռեսուրսների պակասը սոցիալական աշխատանքը մշտապես կանգնեցնում է տնտեսական դժվարությունների առաջ՝ սոցիալական աշխատողներին պարտադրելով շարունակաբար զբաղվել դրանց հաղթահարմամբ (Finis Siegler, 1997):

Դիտարկենք սոցիալական աշխատանքի տնտեսական խնդիրները:

**1. Սոցիալական ոլորտի ֆինանսավորումը**

Սոցիալական աշխատանքի ծառայություններ մատուցող պետական ու ոչ պետական կազմակերպությունները գործում են իրենց բյուջեի շրջանակում: Ի՞նչ սոցիալական ծառայություններ պետք է մատուցել և ո՞ր ժամանակահատվածում, ինչպե՞ս սահմանել տվյալ սոցիալական միջոցառման թիրախային լսարանը. այս հարցերի պատասխանները կախված են հասարակության տնտեսական կարողություններից: Օրինակ՝ ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին կամ հաշման-

դամություն ունեցող անձանց աջակցելու ծրագրերի իրականացումը կախված է պետական բյուջեի առաջնահերթություններից, հարկային քաղաքականությունից ու երկրի տնտեսական զարգացման մակարդակից: Միևնույն ժամանակ սոցիալական աշխատանքն ազդում է երկրի տնտեսության վրա: Արդյունավետ սոցիալական պաշտպանության համակարգը նվազեցնում է առողջապահության ծախսերը, նպաստում է սոցիալական կայունությանը՝ կանխելով բնակչության խոցելի խմբերի մարգինալացումը, ինչը երկարաժամկետ հեռանկարում հանգեցնում է տնտեսական արդյունավետության:

### 2. Արդյունավետություն

Սոցիալական արդի համակարգերը պահանջում են, որ սոցիալական աշխատողները ոչ միայն էմպատիկ[21] լինեն ու հումանիստական արժեքների[22] կրող, այլև կարողանան վեր-

[21] **Էմպատիան** *(հուն. εμπάθεια – ներթափանցում)* սոցիալական աշխատողների և այլ օգնող մասնագետների կարևոր մասնագիտական հմտություն է, որն ապահովում է, որ մասնագետը հասկանա, թե ինչ է զգում շահառուն՝ առանց քննադատելու: Այն ներառում է ինչպես հույզերի կառավարում, այնպես էլ ճանաչողական գործընթացներ, որոնք հնարավորություն են տալիս մասնագետին ձևավորելու վստահելի ու աջակցող փոխհարաբերություններ շահառուի հետ *(Rogers, 1957)*: Մասնագետը ոչ թե պետք է զգա, այլ հասկանա՝ ինչ է զգում շահառուն:

[22] **Հումանիստական արժեքները** դիտարկում են մարդուն ու մարդու կյանքը որպես բարձրագույն արժեք ու հասարակության կենտրոնական դերակատար: Դրանք ընդգծում են անհատի արժանապատվության, ազատության, հավասարության, ինքնաիրացման ու սոցիալական արդարության առաջնահերթությունը: Հումանիստական արժեքները ծագում են մարդակենտրոն մտածողության ավանդույթներից և լայնորեն կիրառվում են սոցիալական աշխատանքի, կրթության, հոգեբանության և իրավունքի ոլորտներում որպես գործունեության էթիկական ու գաղափարական հիմք: Սոցիալական աշխատանքի համատեքստում հումանիստական արժեքները դրսևորվում են յուրաքանչյուր շահառուի նկատմամբ անհատական մոտեց-

լուծել իրենց գործունեության գինն ու արդյունքները։ Սոցիալական ծառայությունների որակի գնահատումը չի սահմանափակվում միայն հումանիստական ու բարոյահոգեբանական չափանիշներով, այլև ներառում է ծախսերի, արդյունավետության ու ներդրումների վերադարձելիության ցուցանիշների վերլուծություն։ Օրինակ՝ գործազուրկների մասնագիտական վերականգնման ծրագիրը կարելի է համարել արդյունավետ, եթե այն նպաստում է նրանց վերադարձին տնտեսական ակտիվ կյանքին, աշխատաշուկայի համալրմանը, եկամուտների գեներացմանն ու նպաստների վրա ծախսվող գումարների խնայողությանը։

Այս համատեքստում առաջնային են դառնում սոցիալական աշխատողի հետևյալ հմտությունները՝ սոցիալական ծրագրերի ու միջոցառումների բյուջեի կազմում, ֆոնդհայթայթում, ֆինանսավորման հայտերի մշակում, ծրագրերի պլանավորման ու ծախսարդյունավետության[23] գնահատում։

---

ման, նրա ինքնավարության նկատմամբ հարգանքի ու ուժեղ կողմերի ակտիվացման միջոցով *(Rogers, 1961)*։

[23] **Ծախսարդյունավետությունը** *(efficiency)* ռեսուրսների օգտագործման այնպիսի ձև է, որի դեպքում որոշակի արդյունքի հասնում են նվազագույն ծախսերով, կամ նույն ռեսուրսներով ապահովվում է առավելագույն արդյունք։ Սոցիալական ոլորտում ծախսարդյունավետությունը ենթադրում է ոչ միայն ֆինանսական միջոցների խնայողություն, այլև ծառայության արժեքի (ծախսերի) ու դրանով պայմանավորված փոփոխության (արդյունքների) միջև հարաբերակցությունը։ Սոցիալական ծրագրերի ծախսարդյունավետությունը գնահատելիս պետք է պատասխանել հետևյալ հարցին. *«Արժե՞ր արդյոք ծախսել այսքան միջոց տվյալ արդյունքին հասնելու համար» (OECD, 2008)*։

### 3. Բարեկեցության տնտեսություն ու սոցիալական արդարություն

Բարեկեցության տնտեսությունն ուսումնասիրում է ռեսուրսների բաշխման արդարության, հանրային բարիքների հասանելիության ու պետական միջամտության օպտիմալության[24] հարցերը: Այն սոցիալական աշխատանքի հետ համահունչ ոլորտ է, քանի որ վերջինս ուղղված է աղքատության, անհավասարության ու սոցիալական մեկուսացման հաղթահարմանը: Հետևաբար սոցիալական աշխատանքը չի կարող անտեսել տնտեսական իրողությունները: Ավելին՝ տնտեսագիտական գիտելիքը հնարավորություն է տալիս սոցիալական աշխատողներին գործելու ավելի պրոֆեսիոնալ՝ հիմնավորելով ծրագրերի անհրաժեշտությունը, հանրօգուտ լինելը, փաստարկված կերպով ներկայացնելով բյուջեն, ինչպես նաև գտնելով հավասարակշռություն կարիքների ու ռեսուրսների միջև: Սոցիալական աշխատանքի ու տնտեսագիտության բովանդակությունն ու կիրառական նպատակները հակադիր չեն. դրանք փոխլրացնում են միմյանց՝ ուղղված լինելով արդար, կայուն ու հումանիստական հասարակության կառուցմանը: Սոցիալական աշխատանքի ու տնտեսագիտության հատման կետում են ձևավորվում այնպիսի լուծումներ, որոնք ոչ միայն աջակցում են անհատին կյանքի դժվարին իրավի-

---

[24] **Օպտիմալը** *(լատ.՝ optimus – լավագույն)* տվյալ իրավիճակում կամ պայմաններում առավել բարենպաստ, արդյունավետ կամ ցանկալի տարբերակի ընտրության սկզբունքն է՝ հաշվի առնելով առկա սահմանափակումները կամ նպատակները: Ըստ Վիլֆրեդո Պարետոյի՝ օպտիմալ կարելի է համարել այն համակարգը, որի որևէ տարրի կամ ցուցանիշի բարելավումը հնարավոր չէ առանց որևէ այլ տարրի կամ ցուցանիշի վատթարացման *(Pareto, 1971)*:

ճակներում, այլև նպաստում են հասարակության բարելավմանը:

## 2.4. Սոցիալական աշխատանքի տնտեսական սկզբունքները

**Սոցիալական աշխատանքի տնտեսական սկզբունքները** գիտականորեն հիմնավորված, պրակտիկայում փորձարկված դրույթների համակարգ են, որը վերաբերում է սոցիալ-տնտեսական գործունեության ձևերին ու մեթոդներին բնակչության սոցիալական պաշտպանության համակարգում:

Ստորև ներկայացված են սոցիալական աշխատանքի տնտեսական առավել կարևոր սկզբունքները:

**ՀՈՒՄԱՆԻԶՄԸ** սոցիալական աշխատանքի առանցքային սկզբունքն է, որը ձևավորում է մասնագիտության էթիկական ու տեսական հիմքերը: Այն հնարավոր չէ շրջանցել նաև սոցիալական աշխատանքի տնտեսական հիմնահարցերի համատեքստում: Հումանիստական գաղափարախոսությունը դիտարկում է մարդուն որպես բարձրագույն արժեք, որի արժանապատվությունն ու իրավունքները վեր են քաղաքական, տնտեսական ու ինստիտուցիոնալ շահերից: Մարդը ոչ թե կարիքավոր օբյեկտ է, այլև հզորացման ու լիարժեք մասնակցության ունակ սուբյեկտ: Իսկ սոցիալական աշխատանքի հիմնական նպատակն է մարդու սոցիալ-տնտեսական բարեկեցության ապահովումը, որի հիմքում ընկած են մարդու ամբողջական ներուժի բացահայտումն ու իրացման հնարավորությունների ընդլայնումը (Saleebey, 2006):

**ԱՆՁԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔ:** Սոցիալական աշխատանքում ինքնավարությունը մարդու հիմնարար

իրավունքներից մեկն է: Այն ենթադրում է, որ շահառուն ունի իրավունք ինքնորոշման, ինքնուրույն որոշումներ կայացնելու, գործողություններ կատարելու ու պատասխանատվություն ստանձնելու (Beauchamp & Childress, 2019): Տնտեսական համատեքստում ինքնավարությունը ենթադրում է, որ անձն է կրում պատասխանատվություն իր բարեկեցության համար, և սոցիալական ծրագրերն ու համակարգերը չպետք է խաթարեն այդ ինքնավարությունը: Հասարակությունը պետք է ստեղծի պայմաններ անձի կարողությունների զարգացման, կենսապահովման կայունության ու հասարակության մեջ արդյունավետ մասնակցության համար: Այսպիսով՝ հանրակրթության համակարգն ապահովում է հասարակության բոլոր անդամների համար գիտելիքի որոշակի նվազագույն պաշարի հասանելիություն՝ դրանով իսկ ձևավորելով ինքնավարության հիմք: Նույն տրամաբանությամբ աշխատաշուկան պետք է ապահովի համապատասխան հնարավորություններ, որ անձը կարողանա իր ստացած գիտելիքի, հմտությունների ու կարողությունների հիման վրա ինքնուրույն ձևավորել իր կենսամակարդակն ու արժանապատիվ ապրել:

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ:** Սոցիալական աշխատանքի արևմտյան դասականները սոցիալական հավասարությունը չեն դիտարկում որպես մասնագիտական սկզբունք: Այն առավելապես գլոբալ նպատակադրում է: Սակայն քննելով սոցիալական աշխատանքի սկզբունքները հայաստանյան հետսոցիալիստական հասարակության մեջ՝ անհնար է այն շրջանցել:

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության (ԽՍՀՄ) սահմանադրության մեջ այն սահմանվում

էր հետևյալ կերպ. «*ԽՍՀՄ քաղաքացիները օրենքի առջև **հավասար են**՝ անկախ ազգային պատկանելությունից, ռասայից, սեռից, ծագումից, գույքային և պաշտոնեական դրությունից, բնակության վայրից, կրոնին ունեցած վերաբերմունքից, հասարակական կազմակերպություններին անդամակցությունից, ինչպես նաև այլ հանգամանքներից*» (Конституция СССР, 1977)։

ԽՍՀՄ-ում սոցիալական հավասարության սկզբունքը կիրառվում էր բոլոր ոլորտներում (կրթություն, առողջապահություն, աշխատանք, բնակարանային ապահովություն և այլն)։ Այն ընկալվում էր ոչ միայն որպես հնարավորությունների հավասարություն, այլև որպես կենսապայմանների հավասարություն։

Արևմտյան գրականության մեջ ավելի շատ քննադատվում է անհավասարությունը, իսկ սոցիալական հավասարությունը սահմանվում է որպես այնպիսի վիճակ, որի դեպքում հասարակության բոլոր անդամներն ունեն հավասար իրավունքներ ու հնարավորություններ կյանքի տարբեր ոլորտներում, ներառյալ կրթությունը, զբաղվածությունը, արդարադատությունը, քաղաքական մասնակցությունն ու ռեսուրսների հասանելիությունը՝ անկախ նրանց ռասայից, սեռից, տարիքից, էթնիկ պատկանելությունից, կրոնից, հաշմանդամությունից, սեռական կողմնորոշումից կամ սոցիալ-տնտեսական ծագումից։

Գերմանացի տնտեսագետ, սոցիոլոգ ու հանրային կառավարման տեսաբան Լորենց ֆոն Շթայնը *(1815–1890 թթ.)*, որը ժամանակակից սոցիալական պետության հայեցակարգի հիմնադիրն է, սահմանում է սոցիալական պետությունը որպես պետություն, որը պարտավորվում է իրացնել իշխանու-

թյունը հասարակության բոլոր խմբերի ու շերտերի հավասարության ապահովման նպատակով (von Stein, 1850):

ԽՍՀՄ-ում ու Արևմտյան երկրներում հավասարության հայեցակարգի տարբերությունների վերլուծության արդյունքում ակնհայտ են դառնում գաղափարախոսական երկու տարբեր ավանդույթներ՝ հիմնված սոցիալիստական կոլեկտիվիզմի[25] ու լիբերալ ինդիվիդուալիզմի[26] վրա: Չնայած երկու մոտեցումներն էլ նպատակ ունեն խթանելու հավասարությունը, դրանց սահմանումները և կիրարկումը, այդուհանդերձ դրանք էապես տարբերվում էին իրարից *(տե՛ս Աղյուսակ 1)*: ԽՍՀՄ-ում հավասարությունը ենթադրում էր նաև սեփականության իրավունքի բացակայություն. ոչ ոք չէր կարող լինել

---

[25] **Սոցիալիստական կոլեկտիվիզմը** սոցիալիստական գաղափարախոսության առանցքային տարրերից է, որի համաձայն՝ արտադրության միջոցներն ու հիմնական ռեսուրսները պատկանում են հասարակությանը *(կոլեկտիվ սեփականություն)*, և կառավարման, որոշումների կայացման ու արտադրության գործընթացները կազմակերպվում են հանուն ընդհանուր, ոչ թե անհատական շահի: Սոցիալիստական կոլեկտիվիզմը ենթադրում է պետական սեփականություն, հոգատարություն ու սոցիալական պատասխանատվություն մյուսների հանդեպ, հավասար ու արդար բաշխում, համագործակցություն՝ մրցակցության փոխարեն, աշխատանք՝ հանուն ընդհանուր բարեկեցության *(Heywood, 2012)*:

[26] **Լիբերալ ինդիվիդուալիզմը** հայեցակարգ է, որի համաձայն՝ անհատը հասարակության հիմնական տարրն է և ունի անքակտելի իրավունքներ, ազատություններ ու ինքնորոշման հնարավորություն: Այս մոտեցումը ձևավորվել է Եվրոպայում՝ լուսավորության դարաշրջանում, և մեծ ազդեցություն է ունեցել արևմտյան ժողովրդավարությունների վրա: Լիբերալ ինդիվիդուալիզմը ենթադրում է անհատի ինքնավարության ու ընտրության իրավունքի գերակայություն, իրավահավասարություն ու օրենքի առջև անձնական պատասխանատվություն, սեփականության իրավունք, մրցակցային շուկաներ և սահմանափակ պետական միջամտություն, քաղաքացիական ազատություններ *(խոսքի, հավաքի, միավորումների և այլն)*: Այս գաղափարախոսությունը հակադրվում է սոցիալիստական կոլեկտիվիզմին *(Pennock, 1974)*:

արտադրական միջոցների սեփականատեր, ինչը պետք է բացառեր նաև մարդու կողմից մարդու շահագործումը:

**Աղյուսակ 1.** Հավասարության հայեցակարգը ԽՍՀՄ-ում ու Արևմտյան երկրներում. համեմատական վերլուծություն

| | **ԽՍՀՄ** | **Արևմտյան երկրներ** |
|---|---|---|
| **Գաղափարախոսական հենք** | Մարքսիզմ-լենինիզմ, կոլեկտիվիզմ | Լիբերալիզմ, անձի իրավունքներ և ազատություններ |
| **Հավասարության էությունը** | Տնտեսական և նյութական հավասարություն *(արդյունքի հավասարություն)* | Հնարավորությունների հավասարություն և օրենքի առջև հավասարություն *(գործընթացի հավասարություն ու հասանելիություն)* |
| **Հավասարության ապահովման մեխանիզմները** | Ռեսուրսների վերաբաշխում, դասակարգային տարբերությունների նվազեցում | Խտրականության բացառում ու մերիտոկրատիա[27] |
| **Սեփականություն** | Պետական | Մասնավոր |
| **Կարգախոս** | *«Յուրաքանչյուրից՝ ըստ իր կարողությունների, յուրաքանչյուրին՝ ըստ իր աշխատանքի»* | *«Հավասար հնարավորություններ բոլորի համար»* |

Այսպիսով՝ հարկ է տարբերել հավասարության մի քանի ընկալումներ:

---

[27] **Մերիտոկրատիան** *(meritocracy)* հասարակական կազմակերպման սկզբունք է, ըստ որի՝ մարդկանց դիրքը հասարակության մեջ, հնարավորություններն ու առաջխաղացումը որոշվում են իրենց արժանիքներով՝ մասնագիտական գիտելիքով, կարողություններով, կրթությամբ, ջանքերով ու աշխատասիրությամբ, այլ ոչ թե ծագմամբ, սոցիալական վիճակով, կապերով կամ հարստությամբ: Նման համակարգում իշխանական դիրքերն ու սոցիալական առավելությունները տրվում են առավել արժանիներին՝ ելնելով մասնագիտական արժանիքների վրա հիմնված չափանիշներից *(Young, 1958)*:

1. **Աստվածաբանական ընկալումը ենթադրում է՝** Աստծո առջև բոլոր մարդիկ հավասար են՝ անկախ իրենց սոցիալական կարգավիճակից, կարողություններից կամ վարքագծից: Այս մոտեցումը կարող է նպաստել ֆատալիստական աշխարհընկալման ձևավորմանը, ըստ որի՝ մարդը զգում է, որ իր ճակատագիրը կանխորոշված է, և այդ համոզմունքը հաճախ հանգեցնում է ապամոտիվացված վարքի, նախաձեռնության նվազմանն ու սոցիալական պասիվությանը (Berger, 1967):
2. **Օրենքի առաջ հավասարությունը** սահմանում է, որ բոլոր քաղաքացիներն ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ օրենքի շրջանակում՝ անկախ նրանց սոցիալական, տնտեսական, ազգային, սեռային կամ այլ պատկանելությունից: Այս սկզբունքը ենթադրում է, որ որևէ մեկն օրենքից վեր չէ, և որ օրենքի կիրառումը պետք է լինի արդար, անկողմնակալ ու միատեսակ բոլորի հանդեպ (UN, 1948):
3. **Հնարավորությունների հավասարությունը** նշանակում է, որ հասարակության բոլոր անդամներն ունեն նույն մեկնարկային պայմանները՝ իրենց կարողությունները, տաղանդներն ու ջանքերը լիարժեք օգտագործելու համար: Այս սկզբունքը ենթադրում է, որ անհատները պետք է կարողանան հասնել կրթության, զբաղվածության, սոցիալական առաջընթացի ու մասնակցության հավասար հնարավորությունների՝ անկախ իրենց սեռից, ծագումից, սոցիալ-տնտեսական կարգավիճակից, ազգությունից կամ այլ բնութագրե-

րից: Այս մոտեցումը զարգացել է արևմտյան լիբերալ մտածողության շրջանակում և հաճախ հակադրվում է արդյունքների հավասարությանը, որը կենտրոնանում է վերջնական արդյունքի հավասարության վրա (Rawls, 1971):

4. **Արդյունքի հավասարությունը** ենթադրում է, որ հասարակության անդամները պետք է ունենան ոչ միայն հավասար հնարավորություններ, այլև համեմատելի, արդար ու սոցիալապես ընդունելի արդյունքներ կյանքի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են՝ եկամուտը, կրթությունը, առողջությունը, բնակարանային պայմանները և այլն: Այս մոտեցման նպատակն է նվազեցնել սոցիալ-տնտեսական անհավասարությունը, որը կարող է առկա լինել նույնիսկ հավասար հնարավորությունների պայմաններում: Արդյունքի հավասարությունը հաճախ պահանջում է պետության կողմից ակտիվ միջամտություն սոցիալական ծրագրերի, բյուջետային վերաբաշխման, քվոտաների կամ նպատակային աջակցության միջոցով (Sen, 1992): Այս մոտեցումը լայնորեն կիրառվում էր ԽՍՀՄ-ում, ինչը, թեև ուղղված էր սոցիալական հավասարության ապահովմանը, երկարաժամկետ կտրվածքով հանգեցրեց սոցիալական արդարության սկզբունքի խաթարմանը: Արդյունքների անհիմն, արհեստական հավասարեցումը, անկախ անհատական ներդրումից, հանգեցրեց բնակչության ապամոտիվացմանը: Երբ բոլորի եկամուտը, բնակարանային պայմանները, հագուստը ու ժամանցի հնարավորությունները գրեթե նույնական

էին՝ անկախ մասնագիտական կարողություններից ու ջանքերից, խաթարվեց առողջ մրցակցության մթնոլորտը: Հատկապես տնտեսական ոլորտում դա արտահայտվեց արտադրության որակի զգալի անկմամբ: Խորհրդային արտադրության ավտոմեքենաները, կենցաղային տեխնիկան, հագուստը, կոշիկը, անգամ խաղալիքները հաճախ անորակ էին և ոչ էսթետիկ: Արդյունքում բազմաթիվ քաղաքացիներ պատրաստ էին վճարել կրկնակի կամ եռակի գին արտասահմանյան ներմուծված ու ավելի որակյալ ապրանքները «տակից» ձեռք բերելու համար: ԽՍՀՄ քաղաքացիները ձգտում էին գնել ավստրիական կոշիկ, ֆրանսիական օծանելիք, ռումինական կահույք, գերմանական սպասք, ճապոնական հեռուստացույցներ և այլն (Applebaum, 2012):

**ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ:** Եթե սոցիալական հավասարությունն ավելի շատ քանակական չափելի հասկացություն է, ապա «արդարությունը» ավելի արժեքային, բարոյական հասկացություն է:

> ***Օրինակ 6.*** *Սոցիալական հավասարությունը ենթադրում է, որ բոլորն ունեն հավասար քանակով բարիքներ, իսկ արդարությունը ենթադրում է, որ յուրաքանչյուրն ունի այնքան բարիք, որքան վաստակել է՝ հասարակության մեջ իր ներդրմանը համապատասխան:*

Այս պարզ օրինակը ցույց է տալիս ոչ միայն «հավասարություն» ու «արդարություն» հասկացությունների տարբերությունը, այլև դրանց միջև առկա հակասությունը: Սոցիալական արդարության սկզբունքի կիրառման շնորհիվ աշխատող

մարդիկ պայքարում են աշխատանքի համարժեք վարձատրության համար, ձգտում են, որ նվազագույն աշխատավարձն անընդհատ աճի՝ հասնելով միջին աշխատավարձի չափին, ինչպես նաև պահանջում են բացառել չափից դուրս բարձր վարձատրությունը պետական բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց համար:

Սոցիալական արդարության սկզբունքի էությունը հասկանալու համար պետք է վերլուծել **«փոխանակման արդարություն»** ու **«բաշխման արդարություն»** եզրույթները: Այս երկու եզրույթները կապված են շուկայական բաշխման ու պետական կարգավորման մեխանիզմների հետ:

**Փոխանակման արդարությունը** վերաբերում է երկու կամ ավելի կողմերի փոխհարաբերություններին, հատկապես ապրանքների և ծառայությունների փոխանակման կամ պայմանագրերի կնքման գործընթացում: Այն ենթադրում է գործարքի կողմերի հավասարություն, ներդրման ու հատուցման համաչափություն, երբ ռեսուրսները բաշխվում են աշխատանքի ու ներդրման չափով, կախված աշխատանքի արդյունքից՝ ձևավորվում է արդարացի եկամուտը (Hibbert, 2010):

***Օրինակ 7.*** *Աշխատողն ստանում է իր աշխատանքին ու որակավորմանը համապատասխան վարձատրություն:*

***Օրինակ 8.*** *Գնորդն ապրանքի դիմաց վճարում է արդար գին, որը համարժեք է դրա որակին ու ինքնարժեքին:*

***Օրինակ 9.*** *Մերիտոկրատական մոտեցման համաձայն՝ բուհ ընդունելությունը հիմնվում է դիմորդի գիտելիքների, կարողությունների ու հաջողության վրա: Արդյունքում լավագույն առաջադիմություն ունեցող ուսանողը կարող է ստանալ կրթաթոշակ՝ անկախ սոցիալ-տնտեսական կարգավիճակից: Այսպես, ռեսուրսները*

*բաշխվում են ըստ անհատի արժանիքների ու նվաճումների, այլ ոչ թե ըստ կարիքի: Նման մոտեցումը խթանում է զարգացումը:*

**Բաշխման արդարությունը** վերաբերում է նյութական ու ոչ նյութական բարիքների հատկացմանը հասարակության անդամներին, երբ ռեսուրսները բաշխվում են ըստ կարիքների՝ հանուն սոցիալական հավասարության: Հիմնական հարցն այստեղ այն է, թե ինչ սկզբունքով ու ի՞նչ հարաբերակցությամբ պետք է բաշխվեն այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են եկամուտները, սոցիալական ծառայությունները, կրթությունը, բժշկական օգնությունը, բնակարանները և այլն: Այս հարցին տարբեր հայեցակարգեր տարբեր պատասխաններ են տալիս, մերիտոկրատական մոտեցման համաձայն՝ ըստ արժանիքների: Սոցիալական պետության հայեցակարգի համաձայն՝ ռեսուրսները պետք է բաշխվեն ըստ կարիքների (Rawls, 1971):

**ԿԱՐԻՔԱՀԵՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ** բաշխման արդարության սկզբունքի տարատեսակ է, որն աստիճանաբար ավելի շատ է կարևորվում սոցիալական աշխատանքում, քանի որ, ինչպես արդեն նշվեց, սոցիալական պետություններում ռեսուրսները պետք է բաշխվեն ըստ կարիքների (Braveman & Gruskin, 2003):

***Օրինակ 10.*** *Սոցիալական անհավասարությունը մեղմելու նպատակով սոցիալական պետություններում նպաստները տրամադրվում են դրա կարիքն ունեցողներին, ընդ որում՝ ոչ հավասարաչափ, այլ ըստ կարիքի:*

***Օրինակ 11.*** *Հաշմանդամություն ունեցող ուսանողներին բուհը պարտավոր է ապահովել հատուկ պայմաններ՝ թեքահարթակներ, վերելակներ, ժեստերի լեզվի թարգմանիչ, նյութերի հասանելիություն՝ աուդիո ու թվային ձևաչափով, որպեսզի հաշմանդա-*

*մություն ունեցող ուսանողները կարողանան նույն մակարդակով օգտվել կրթությունից, ինչպես մնացած ուսանողները:*

Կարիքահենության սկզբունքն անգլերեն անվանում են «*Equity*», որը ծագում է լատինական «*Aequitas*» արմատից և նշանակում է «հավասարաչափ, բալանսավորված»: «*Equity*» հասկացությունը XIV դարում ներմուծվել է անգլերեն, հիմնականում կիրառվում է իրավական համատեքստում որպես դատական արդարության սկզբունք այն դեպքերում, երբ օրենքի խիստ կիրառումը կհանգեցնի անարդար արդյունքի:




**Նկար 4.** Սոցիալական հավասարության ու կարիքահենության սկզբունքների համեմատություն (Ward, 2021)

Նկար 4-ում պատկերված է սոցիալական հավասարության ու կարիքահենության սկզբունքների կիրառման արդյունավետության միջև տարբերությունը: Նկարի ձախ կողմում՝ «Հավասարություն» խորագրի ներքո, բոլորին տրամադրվել են նույն բարձրության արկղեր՝ անկախ նրանց ֆիզիկական հնարավորություններից ու անհատական կարիքներից: Արդյունքում բարձրահասակ մարդը լիարժեք տեսնում է դաշտը,

միջահասակ աղջիկը հազիվ է տեսնում, իսկ սայլակով մարդն ընդհանրապես չի կարող տեսնել, թեև նույն աջակցությունն է ստացել: Այս օրինակն ընդգծում է այն փաստը, որ եթե սոցիալական ոլորտում աջակցությունը տրամադրվում է հավասարության սկզբունքով՝ բոլորին տրամադրելով նույն չափի կենսաթոշակ, նպաստ, ծառայություն կամ այլ ռեսուրս, ապա արդյունքը կարող է լինել անհավասար: Մեկի համար այդ նպաստը կարող է ավելորդ լինել, մյուսի վիճակը կարող է մասամբ բարելավվել, իսկ ամենախոցելիներին՝ ընդհանրապես չբավարարել: Հավասարության սկզբունքի վրա հիմնված միջոցառումները թերևս ավելի հեշտ իրագործելի են. չեն պահանջում ժամանակատար կարիքների գնահատում ու մասնագիտական մեծ ներուժ, սակայն դրանց արդյունավետությունը ցածր է, իսկ ծախսը՝ շատ, քանի որ ռեսուրսները ոչ միշտ են նպատակային բաշխվում, իսկ արդյունքներն օպտիմալ չեն, քանի որ մարդիկ ունեն ելակետային տարբեր հնարավորություններ:

Նկարի աջ կողմում՝ «Կարիքահենություն» խորագրի ներքո, յուրաքանչյուր անձ ստացել է այն աջակցությունը, որն առավելապես համապատասխանում է իր անհատական կարիքներին: Բարձրահասակին ոչինչ չի տրամադրվել, քանի որ նա առանց հավելյալ միջամտության կարողանում է դիտել դաշտը, միջահասակի աղջիկն ստացել է երկու արկղ՝ տեսադաշտը բարելավելու համար, իսկ սայլակով անձի համար կառուցվել է անհրաժեշտ բարձրության թեքահարթակ, ինչը հնարավորություն է տվել նրան նույնպես լիարժեք դիտելու խաղը: Այս օրինակն ընդգծում է, որ սոցիալական աջակցության կարիքահեն համակարգը հիմնված է անհատական կա-

րիքների մանրակրկիտ գնահատման վրա, ինչը թույլ է տալիս ապահովել մարդակենտրոն մոտեցում, խուսափել ռեսուրսների վատնումից ու ավելացնել ծախսարդյունավետությունը, ինչպես նաև թույլ տալ մարդկանց հասնել համարժեք արդյունքի:

Թեև այս համեմատության մեջ կարիքահենության սկզբունքն ակնհայտ առավելություններ ունի, չի կարելի թերագնահատել հավասարության սկզբունքը: Սոցիալական ոլորտում սոցիալական հավասարության, արդարության ու կարիքահենության սկզբունքների հավասարակշռված կիրառումն ապահովում է անձանց կարիքների բավարարում, ռեսուրսների նպատակային վերաբաշխում ու հասարակության կայուն ու ներառական զարգացում:

**ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ** (inclusivity) ենթադրում է, որ համակարգն արժևորում է բազմազանությունը՝ ապահովելով, որ բոլոր անձինք, անկախ իրենց ծագումից, ինքնությունից կամ կարողություններից, լիարժեք, հավասար ու իմաստավորված մասնակցություն ունենան հասարակական, կրթական, տնտեսական ու քաղաքական կյանքում (Booth & Ainscow, 2011; Մելքումյան, 2015):

**ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ** համաձայն՝ հասարակության մեջ սոցիալական աջակցություն ստանալու իրավունակ անձանց շրջանակը պետք է հստակորեն սահմանվի օրենքներով կամ այլ նորմատիվ ակտերով: Այդ շրջանակում կարող են ներառվել միայն այն անձինք, որոնք ամբողջությամբ կամ մասնակիորեն անաշխատունակ են և չեն կարող ինքնուրույն ապահովել իրենց կենսամակարդակը: Այս սկզբունքի խախտումը կարող

է հանգեցնել աշխատելու մոտիվացիայի անկմանն ու սոցիալական մակաբուծության երևույթի տարածմանը: Իսկ այս սկզբունքի պահպանումը նպաստում է սոցիալական աջակցության հասցեականությանը[28], պետական ռեսուրսների արդյունավետ ու արդար բաշխմանն ու հասարակական աջակցության համակարգի նկատմամբ վստահության բարձրացմանը (Пантелеева & Червякова, 2001):

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ** համաձայն՝ սոցիալական ոլորտի ծախսերի ու դրանց համար հատկացվող ֆինանսավորման միջև հարաբերակցությունը պետք է օպտիմալ լինի: Սոցիալական ոլորտի ֆինանսավորման համար հատկացվող գումարները պետք է համեմատելի լինեն բոլոր մակրոտնտեսական ցուցանիշների հետ՝ սպառողական զամբյուղ, համախառն ներքին արդյունք, աշխատանքի վարձատրություն, բնակչության եկամուտներ և այլն: Այդ հարաբերակցության խախտումը նվազեցնում է հասարակական արտադրանքի արդյունավետությունը: Այս սկզբունքը ենթադրում է նաև սոցիալական տրանսֆերտների[29] ու աշխա-

---

[28] **Սոցիալական աջակցության հասցեականությունը** սոցիալական ծառայությունների ու օգնության տրամադրման սկզբունք է, որի համաձայն՝ աջակցությունը տրամադրվում է այն անձին կամ ընտանիքին, որոնք դրա կարիքն ունեն *(«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենք, 2024)*:

[29] **Սոցիալական տրանսֆերտը** ներառում է պետության կամ այլ կազմակերպությունների կողմից բնակչության որոշ խմբերին տրամադրվող ֆինանսական միջոցներն ու ծառայությունները, որոնք ուղղված են սոցիալական անհավասարության նվազեցմանը, աղքատության հաղթահարմանն ու բնակչության խոցելի խմբերի բարեկեցության ապահովմանը՝ առանց այդ խմբերից փոխադարձ աշխատանքային մասնակցություն պահանջելու: Սոցիալական տրանսֆերտների օրինակներ են կենսաթոշակները, նպաստները, բնակարանային ու կոմունալ աջակցության միջոցառումները,

տավարձի միջև օպտիմալ հարաբերակցություն: Նպաստի չափն ու դրա հետ տրամադրվող սոցիալական երաշխիքները չպետք է ստեղծեն այնպիսի իրավիճակ, որ նպաստ ստանալն ավելի ցանկալի լինի, քան աշխատավարձ ստանալը, որպեսզի չնվազի աշխատելու մոտիվացիան, ապահովվի արժանապատիվ նվազագույն կենսամակարդակը, խթանվի աշխատաշուկայի ներգրավվածությունը, կանխվի սոցիալական մակաբուծությունը (Пантелеева & Червякова, 2001): Բազմաթիվ փորձագետներ *(այդ թվում՝ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունը (ՏՀԶԿ, OECD), Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՀԿ, ILO), Արժույթի միջազգային հիմնադրամը (ԱՄՀ, IMF))* նշում են, որ սոցիալական տրանսֆերտները չպետք է գերազանցեն միջին աշխատավարձի 50-60 %-ը (OECD, 2019):

> ***Օրինակ 12.*** *Հայաստանում 2023 թ. տվյալներով նպաստառու մեկ ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստի միջին ամսական չափը (31350 ՀՀ դրամ) կազմում է ամսական աշխատավարձի սահմանված նվազագույն չափի (75000 ՀՀ դրամ) (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024) 41.8 %-ը:*

**ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ** շատ բարդ է ու բազմաբովանդակ: Որպես փիլիսոփայական հասկացություն՝ ազատության գաղափարը քննվել է դեռևս Պլատոնի կողմից *(Ք.ա. IV դար)*: Ըստ նրա՝ ազատությունը ոչ թե ամենաթողություն է, այլ բանականությանը ենթարկվելու կարողություն: Իրական ազատություն ունի այն մարդը, որը տիրապետում է ինքն իրեն և գործում է ի բարին (Платон, 2015): Իսկ Ժան-Պոլ

---

անվճար կամ սուբսիդավորված առողջապահական ու կրթական ծառայությունները *(Barr, 2020, p. 115)*:

Սարթրը համարում էր, որ մարդը «դատապարտված է ազատության». ազատությունը սեփական ընտրության համար պատասխանատվության բացարձակ ձև է, սակայն այն ուղեկցվում է անհանգստությամբ (Сартр, 2000):

Ազատության սկզբունքը սոցիալական աշխատանքում վերաբերում է այն հիմնարար համոզմունքին, որ յուրաքանչյուր մարդ պետք է ունենա ինքնուրույն ընտրություն կատարելու, սեփական որոշումները կայացնելու, և իր կյանքի վրա վերահսկողություն ունենալու հնարավորություն՝ անկախ սոցիալ-տնտեսական պայմաններից կամ խոցելիությունից (NASW, 2021):

Սոցիալական աշխատանքի հարացույցի քննարկման հարցերից է անձի ազատության ու սոցիալական պաշտպանության հարաբերակցությունը, իսկ երբեմն՝ նաև հակասությունը: Որքան ավելի պաշտպանված է անձը հասարակության մեջ, այնքան ավելի սահմանափակվում է նրա ազատությունը, և ընդհակառակը: Սոցիալական պետության քննադատները հաճախ մեկնաբանում են այն որպես անձի ազատության սահմանափակում՝ փոխարինելով սոցիալական երաշխիքներով (Hayek, 1944): Միևնույն ժամանակ անապահով և խոցելի վիճակում գտնվող անձը չի կարող լիարժեքորեն իրացնել իր ազատությունը՝ առանց արտաքին աջակցության: Հետևաբար սոցիալական աշխատանքը պետք է մշտապես պահպանի սոցիալական պաշտպանվածության ու անձի ազատության միջև հավասարակշռությունը:

**ՊԵՏԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ** համաձայն՝ պետությունն է խոցելի խմբերի բարեկեցության նվազագույն պայմանների տնտեսական ապահովման երաշխավորը: Խոսքն այն խոցելի խմբերի մասին է, որոնք օբյեկ-

տիվ պատճառներով չեն կարող ինքնուրույն հասնել բավարար կենսամակարդակի: Սոցիալական պաշտպանության միջոցառումները ներկայացված են երկու հիմնական ձևով.

1. սահմանափակումներ, որոնք թույլ չեն տալիս, որ շուկայական էֆեկտները հասնեն սոցիալապես վտանգավոր մակարդակին՝ բնակչության կենսամակարդակի նվազեցում, քևեռացում և այլն: Դրա համար պետությունը սահմանում է աշխատավարձի նվազագույն չափ, հարկման առավելագույն սահման, պետական երաշխիքներ է սահմանում անվճար կրթության, բժշկության, սոցիալական սպասարկման միջոցառումների կազմակերպման համար և այլն,
2. անվճար կամ մասնակի վճարովի ծառայություններ որոշակի խմբերի համար՝ փոխհատուցումների, արտոնությունների, սակագների[30], սուբսիդիաների[31] ձևով (Пантелеева & Червякова, 2001):

---

[30] **Սակագին**ը վճար է, որը սահմանվում է որևէ ծառայության, ապրանքի կամ օգտագործման իրավունքի դիմաց: Այն կիրառվում է տնտեսության, հասարակական ծառայությունների, կապի, տրանսպորտի և հանրային կոմունալ ոլորտներում *(ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով, 2023)*: Սակագների միջոցով ապահովվում է ծառայության ինքնարժեքի վերականգնումը (օրինակ՝ ջրի կամ էլեկտրաէներգիայի պարագայում), նվազեցվում է գների չարաշահման հավանականությունը մենաշնորհային ոլորտներում: Սակագները թույլ են տալիս կենսաթոշակառուների, հաշմանդամություն ունեցող անձանց և այլոց համար սահմանել արտոնյալ գներ: Սակագները ծառայում են որպես գործիք՝ հանրային ծառայությունների շուկայում հավասարակշռություն պահպանելու համար: Սակագնային քաղաքականությամբ հնարավոր է կանխել գների անսահման աճը՝ սահմանելով առավելագույն գներ: Իսկ ներմուծվող ապրանքների նկատմամբ կիրառվող բարձր սակագները նպաստում են տեղական արտադրության պահպանմանը:

**ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ** ենթադրում է հանրապետական ու համայնքային սուբյեկտների տնտեսական իրավասությունների տարանջատում: Որպես կանոն, սոցիալական նպաստների նվազագույն չափերը սահմանվում են հանրապետական մակարդակում: Իսկ դրանից զատ՝ բոլոր լրացուցիչ վճարներն արվում են համայնքային բյուջեից ու սոցիալական ապահովագրության տեղական հիմնադրամներից: Նման մոտեցումն ապահովում է, որ տեղական ինքնակառավարման մարմիններն ու համայնքների բնակչությունը շահագրգռված լինեն համայնքի և տարածաշրջանի տնտեսական զարգացմամբ ու ինքնաբավությամբ:

**ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՆԸՆԴՄԵՋ ԱՃԻ ՍԿԶԲՈՒՆՔԸ** կապված է ինչպես տնտեսական զարգացումների, այնպես էլ հասարակության պահանջմունքների փոփոխության հետ: Սոցիալական ոլորտի կարևորագույն գործառույթներից են այս փոփոխությունները ժամանակին արձանագրելն ու դրանց համապատասխան արձագանքելը: Պահանջմունքների աճը կարող է պայմանավորված լինել ինչպես ճգնաժամային իրավիճակներով, որոնք պահանջում են թիրախային հրատապ միջամտություններ, այնպես էլ հասարակության ընդհանուր կենսամակարդակի բարձրացմամբ: Վերջինս, մի կողմից, ընդլայնում է սոցիալական ոլորտի վերաբերյալ պե-

---

[31] **Սուբսիդիան** *(լատ.՝ subsidium – օգնություն, աջակցություն)* ֆինանսական աջակցություն է, որը պետությունը կամ այլ կազմակերպությունը տրամադրում է տնտեսավարող սուբյեկտներին, քաղաքացիներին կամ ոլորտներին՝ նպատակային աջակցության, գների նվազեցման, արտադրության խթանման, սպառման բարձրացման կամ սոցիալ-տնտեսական բեռի մեղմման նպատակով *(Zhao, Yue, Liu, & Shan, 2024)*:

տության ու հասարակության կարողություններն ու պատասխանատվությունը, իսկ մյուս կողմից՝ փոխում է բարեկեցության նվազագույն մակարդակի վերաբերյալ հանրային ընկալումները՝ դրանով իսկ ձևավորելով նոր սպասումներ ու պահանջմունքներ:

**ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ** ենթադրում է ոչ միայն կենսապահովման նվազագույն պայմանների ապահովում, այլև անհատի լիարժեք կյանքի հնարավորությունների ընդլայնում: Այս սկզբունքը հիմնված է այն մոտեցման վրա, որ սոցիալական ծրագրերը պետք է ուղղված լինեն ոչ միայն աղքատության նվազեցմանը, այլև մարդկանց զարգացման, հզորացման, ինքնուրույնության ու սոցիալական ակտիվ մասնակցության խթանմանը: Այս սկզբունքը պարտադրում է կրթության, առողջապահության ու մշակույթի հասանելիության ապահովմանն ուղղված ջանքեր, անվտանգ ու կայուն բնակելի միջավայրի ապահովում, արժանապատիվ աշխատանքի հնարավորությունների ստեղծում, հանրային կյանքին քաղաքացիների ու խոցելի խմբերի ներկայացուցիչների մասնակցելու պայմանների ընդարձակում:

Սոցիալական աշխատանքի տնտեսական սկզբունքները բազմազան են և ժամանակի ընթացքում փոփոխվող՝ կախված սոցիալ-տնտեսական զարգացումներից, ճգնաժամերից, ինչպես նաև հասարակության պահանջմունքների ու սպասելիքների փոփոխությունից: Այս ենթագլխում քննված սկզբունքները շարունակում են մնալ ոլորտի հիմքային կողմնորոշիչները: Դրանք հնարավորություն են տալիս ձևավորելու սոցիալական կայուն ու մարդակենտրոն քաղաքականություն, որը միաժամանակ հաշվի է առնում թե՛ ռեսուրսների

սահմանափակ լինելը, թե՛ մարդու արժանապատվության պահպանման անհրաժեշտությունը:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Ինչո՞վ է տարբերվում Հայաստանում սոցիալական աշխատանքի ձևավորման գործընթացը Արևմտյան երկրների փորձից:
2. Որո՞նք են սոցիալական աշխատանքի սահմանումների նմանություններն ու տարբերությունները:
3. Սոցիալական աշխատանքը տնտեսական ի՞նչ խնդիրներ է կարգավորում:
4. Ինչպե՞ս է սոցիալական աշխատանքն ապահովում ծախսարդյունավետությանը:
5. Ի՞նչ է «սոցիալական արդարությունը», և ինչպե՞ս է այն տարբերակվում «սոցիալական հավասարությունից»:
6. Մեկնաբանե՛ք «կարիքահենության սկզբունքը»՝ նշելով դրա կիրառման առնվազն երկու օրինակ:
7. Բացատրե՛ք սոցիալական օգնության համակարգում ազատության ու պաշտպանվածության սկզբունքների հակասությունը՝ նշելով առնվազն երկու օրինակ դրանց կիրառման վերաբերյալ:

**Հանձնարարություն**

Վերլուծե՛ք ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից իրականացվող սոցիալական որևէ մի-

ջոցառում՝ նշելով՝ սոցիալական աշխատանքի ո՞ր սկզբունքների իրացմանն են դրանք նպաստում:

**Խմբային բանավեճ**

Թեմա՝ «Սոցիալական պաշտպանվածությունը արդյո՞ք խաթարում է մարդու տնտեսական ինքնուրույնությունն ու ազատությունը»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթեփիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 3. ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐ ՈՒ ԿԱՐԻՔՆԵՐ

## 3.1. Սոցիալական պահանջմունքների հիերարխիկ բուրգն ըստ Աբրահամ Մասլոուի

Սոցիալական աշխատանքի տնտեսական հիմնահարցերի քննության համատեքստում պահանջմունքների բնույթի, կառուցվածքի ու հիերարխիայի ընկալումն առանձնահատուկ կարևորություն ունի, քանի որ սոցիալական միջոցառումներն ու միջամտությունը պետք է ուղղված լինեն պահանջմունքների բավարարմանը:

Պահանջմունքները սահմանվում են որպես ինչ-որ բանի պակաս, որը մարդը ձգտում է լրացնել՝ վերացնելով պակասը: Մարդու վարքի ու սոցիալական ակտիվության մոտիվացիայի հիմքում ընկած են իր պահանջմունքները:

Պահանջմունքները բազմազան են և դինամիկ փոփոխվող: Ինչը համարել պահանջմունք՝ կախված է տվյալ հասարակության զարգացման մակարդակից, տեխնիկական առաջընթացից, արժեհամակարգից:

Պահանջմունքները դասակարգելու բազմաթիվ փորձերից առանձնանում է ամերիկացի հոգեբան Աբրահամ Մասլոուի *(1908-1970 թթ.)* պահանջմունքների հիերարխիկ բուրգը, որին հաճախ հղում անում սոցիոլոգները, հոգեբանները, տնտեսագետները, քաղաքագետները, կառավարման մասնագետները և, իհարկե, սոցիալական աշխատողները:

Ա. Մասլոուն դասակարգել է պահանջմունքներն ըստ հիերարխիկ մակարդակների՝ աստիճանակարգված բուրգի տեսքով (Maslow, 1943) *(տե՛ս Նկար 5)*:




**Նկար 5.** Ա. Մասլոուի պահանջմունքների հիերարխիկ բուրգի պարզեցված սխեման

Ա. Մասլոուի պահանջմունքների դասակարգումն անվանվում է **հիերարխիկ բուրգ**, քանի որ յուրաքանչյուր հաջորդ մակարդակի պահանջմունքն առաջանում է նախորդ մակարդակի պահանջմունքների նվազագույն չափով բավարարումից հետո: Բացի դրանից՝ ոչ մի պահանջմունք չի կարող դիտարկվել որպես մեկուսացված կամ առանձին. յուրաքանչյուր պահանջմունք պայմանավորված է մյուսների բավարարվածության կամ անբավարարվածության վիճակով:

Բուրգն անվանում են նաև **մոտիվացիոն.** Ա. Մասլոուն նպատակ ուներ ձևակերպելու մոտիվացիայի դրական տեսությունը:

Սոցիալական աշխատանքում պահանջմունքների այս դասակարգումը կիրառվում է և՛ որպես կարիքների գնահատման բանաձև, և՛ որպես սոցիալական ծառայությունների լիարժեք մատուցման ուղենիշ:

Մանրամասն անդրադառնանք բուրգի յուրաքանչյուր մակարդակին՝ սկսելով ստորին, ամենահիմնարար շերտից:

**Ֆիզիոլոգիական պահանջմունքները կազմում են** կենսաբանական ու ֆիզիկական այն պայմանների ամբողջությունը, առանց որի մարդու օրգանիզմի գոյատևումն ու նորմալ գործառումն անհնար են կամ դժվար: Խոսքը սնվելու, քնելու, հանգստանալու, չմրսելու ու չշոգելու, սեռական ու այլ պահանջմունքների մասին է:

***Օրինակ 1.*** *Սովի զգացումը վկայում է օրգանիզմում սննդի պակասի մասին, և ձևավորվում է սնվելու պահանջմունք:*

***Օրինակ 2.*** *Ախորժակը (սննդամթերքի նախընտրությունը) օրգանիզմում որոշակի միկրոէլեմենտների՝ ջրի, աղի, շաքարի, սպիտակուցի, ճարպի, կալցիումի պարունակության պակասի ցուցիչ է:*

***Օրինակ 3.*** *Հոգնածությունը օրգանիզմի վիճակ է, որը վկայում է աշխատունակության, էներգիայի, մոտիվացիայի պակասի մասին:*

**Անվտանգության ու պաշտպանվածության պահանջմունքն** ի հայտ է գալիս այն պահին, երբ մարդը բավարարել է իր ֆիզիոլոգիական պահանջմունքները՝ ապահովելով գոյատևման նվազագույն պայմանները, այնինչ սոված մարդը պատրաստ է նույնիսկ վտանգել իր կյանքը սնունդ հայթայթելու համար: Բայց երբ ֆիզիոլոգիական պահանջմունքները բավարարված են, մարդը սկսում է ձգտել կայունության, կանխատեսելիության ու ապագայի նկատմամբ վստահության: Անհատն իրեն անվտանգ ու պաշտպանված է զգում այն դեպքում, երբ վստահ է, որ նաև վաղը կկարողանա բավարարել իր ֆիզիոլոգիական պահանջմունքներն առնվազն այն մա-

կարդակով, ինչպես ներկայումս: Անձի անվտանգության պահանջմունքը բավարարվում է զբաղվածության, սեփականության, առողջության պահպանման ու սոցիալական կայունության միջոցով:

***Օրինակ 4.*** *Աշխատանքային անապահով պայմաններում գտնվող անձը չի կարող իրեն լիարժեք ու անվտանգ զգալ, քանի որ չգիտի՝ արդյոք կկարողանա վճարել տան վարձը կամ հոգալ ընտանիքի սննդի ծախսերն առաջիկա ամիսներին:*

***Օրինակ 5.*** *Պատերազմական կամ քաղաքական անկայունության պայմաններում ապրող մարդը չունի վստահություն վաղվա օրվա նկատմամբ: Նույնիսկ եթե նա այս պահին սնունդ ունի, վտանգված են իր կյանքը, տունը կամ ընտանիքի անդորրը:*

***Օրինակ 6.*** *Առողջապահական ծառայությունների թանկ լինելու պայմաններում քրոնիկ հիվանդությամբ տառապող անձը չի կարող իրեն պաշտպանված զգալ, եթե չունի բժշկական ապահովագրություն կամ պետական աջակցություն, քանի որ բուժումը կարող է ամբողջությամբ սպառել իր խնայողությունները:*

**Սիրո ու պատկանելության պահանջմունքը** կապված է «մենք»-ի ընկալման հետ: Անձը ձգտում է լինել սոցիալական միավորի մաս, զգալ ընդունված ու սիրելի: Այդ պահանջմունքի բավարարման համար անհատը պետք է գիտակցի իր պատկանելությունը և ինքնանույնականացվի որևէ մեկ կամ մի քանի սոցիալական խմբերի՝ ընտանիքի, ընկերական միջավայրի, աշխատանքային կոլեկտիվի, համայնքի կամ այլ միավորների հետ:

***Օրինակ 7.*** *Աշխատանքային կոլեկտիվում նոր աշխատակիցը, որին չեն ընդգրկում թիմային քննարկումներում կամ համատեղ միջոցառումներում, ժամանակի ընթացքում սկսում է զգալ անտեսված ու օտար:*

***Օրինակ 8.*** *Սոցիալական ցանցերում հազարավոր «ընկերներ» ունեցողը կարող է չունենալ իրական շփումներ կամ աջակցող միջավայր: Սիրո ու պատկանելության պահանջմունքը կարող է բավարարված թվալ, սակայն իրական հուզական կապերի բացակայությունը խորացնում է միայնությունը:*

**Ինքնահարգանքի, հարգված լինելու պահանջմունքն** առաջանում է, երբ անձը նույնացնում է իրեն որևէ խմբի հետ, արդեն ընդգրկված է կոլեկտիվում և այդ խմբում սեփական դիրքի ու կարևորության, յուրահատուկ լինելու ապացույցներ է որոնում: Անձի նվաճումներն ու առաջընթացը պետք է ընդունված լինեն մյուսների կողմից: Նրանց կողմից հարգանքը ձևավորում է նաև ինքնահարգանք:

***Օրինակ 9.*** *Դասարանում աշակերտը մշտապես լավ առաջադիմություն ունի, բայց ուսուցիչը երբեք չի գովում նրան: Ժամանակի ընթացքում երեխան կորցնում է մոտիվացիան՝ իրեն զգալով անտեսված ու ոչ կարևոր: Այդ պակասուրդը (դեֆիցիտը) կարող է հանգեցնել ինքնագնահատականի անկման ու դասերից խուսափելու վարքագծի:*

***Օրինակ 10.*** *Աշխատակիցը տարիներ շարունակ բարեխղճորեն կատարում է իր պարտականությունները, սակայն չի ստանում պաշտոնի բարձրացում, շնորհակալագիր կամ դրական արձագանք ղեկավարության կողմից: Նա սկսում է կասկածել սեփական ունակությունների և թիմում իր տեղի մասին:*

**Ինքնաիրացման (ինքնաակտուալիզացիայի)** պահանջմունքը հասարակությանն օգտակար լինելու ձգտումն է: Այս պահանջմունքը ոչ բոլորի մոտ է առաջանում: Եթե նախորդ՝ քննության առնված պահանջմունքները հասարակությունից վերցնելու կամ ստանալու հետ են կապված, ապա այս պահանջմունքը հասարակության մեջ ներդրում ունենալու մասին է:

***Օրինակ 11.*** *Մասնագիտական ճանաչման հասած մանկավարժը մշակում է նոր մոտեցումներ, կիսվում է իր փորձով, աջակցում է կրթության ոլորտի բարեփոխումներին:*

***Օրինակ 12.*** *Մեծ կապիտալ ստեղծած ձեռներեցը բարեգործությամբ է զբաղվում:*

## 3.2. Կարիքներ

Անգլիալեզու մասնագիտական գրականության մեջ սոցիալական աշխատողները գործ ունեն «need» հասկացության հետ, որը հայերեն թարգմանվում է և՛ որպես **պահանջմունք**, և՛ որպես **կարիք**: Հայերենում, սակայն, «պահանջմունք» ու «կարիք» հասկացությունները միշտ չէ, որ հոմանշաբար են գործածվում: Սոցիալական աշխատողն իրականացնում է **կարիքի գնահատում:** «Պահանջմունքի գնահատում» բառակապակցությունը կիրառելի չէ: Իսկ «պահանջմունքի բավարարում» ու «կարիքի բավարարում» բառակապակցությունները կիրառվում են հոմանշաբար: Հարց է առաջանում՝ որո՞նք են «կարիք» ու «պահանջմունք» հասկացությունների տարբերություններն ու գործածության տիրույթները:

Պատասխանը շատ պարզ է: Ե՛վ պահանջմունքը, և՛ կարիքը կապված են պակասուրդի հետ: Սակայն **կարիքն այն պահանջմունքն է, որը մարդն ինքնուրույն չի կարող բավարարել, ու որի բավարարման համար նրան անհրաժեշտ է որևէ աջակցություն:** Այդ իսկ պատճառով սոցիալական աշխատողների մասնագիտական բառապաշարում ավելի հաճախ կիրառվում է հենց «կարիք» հասկացությունը:

Կարիքն ունի ավելի գործնական բնույթ. այն սոցիալական քաղաքականության միջոցառումների հիմք է, այնինչ պահանջմունքը կարող է նաև սուբյեկտիվ լինել՝ տարբերվելով կախված անհատի առանձնահատկություններից և նախասիրություններից: ԿԴԻՀ անձը կացարանի, սննդի ու պաշտպանության կարիք ունի: Իսկ պահանջմունքները կարող են ենթադրել կացարան որոշակի համայնքում կամ շենքում, առանձնահատուկ սննդակարգ, կոնկրետ մասնագետի աջակցություն և այլն: Սոցիալական աշխատողը գնահատում է կարիքները՝ իր ջանքերն ուղղելով կարիքների, բայց ոչ միշտ պահանջմունքների բավարարմանը: Փաստորեն՝ բոլոր կարիքները կարելի է անվանել նաև պահանջմունք, բայց ոչ բոլոր պահանջմունքներն են կարիք:

***Օրինակ 13.*** *Մինչև Կովիդ-19 համաճարակը դպրոցականների մոտ բջջային հեռախոսների առկայությունն ընկալվում էր որպես ավելորդություն, իսկ համաճարակի ժամանակ այն դարձավ և մինչ օրս մնաց անհրաժեշտություն: Այն օգտագործվում է նաև կրթական նպատակներով: Նույնը վերաբերում է նաև համացանցին:*

***Օրինակ 14.*** *Սեփական ավտոմեքենա ունենալն օբյեկտիվ կարիք չէ այն բնակավայրում, որտեղ կանոնավոր գործում է հանրային տրանսպորտը, սակայն այն համայնքներում, որտեղ տրանսպորտ չկա, սեփական ավտոմեքենա ունենալն անհրաժեշտություն է:*

Տարբերում են նաև **անհատական** ու **կոլեկտիվ կարիքներ ու պահանջմունքներ**՝ հիմք ընդունելով դրանց բավարարման եղանակը: Կան պահանջմունքներ ու կարիքներ, որոնք մարդն ի վիճակի է ինքնուրույն բավարարել՝ առանց այլ անձանց հետ համագործակցության: Դրանք կոչվում են **անհատական**:

**Կոլեկտիվ** են այն պահանջմունքներն ու կարիքները, որոնց բավարարման համար մարդուն անհրաժեշտ են այլ մարդիկ (Finis Siegler, 1997, էջ 22-23):

***Օրինակ 15.*** *Մարդը կարող է մենակ սնվել, քնել, հանգստանալ: Այս պահանջմունքներն անհատական են:*

***Օրինակ 16.*** *Ամուսնանալու համար մարդուն պետք է մեկ այլ մարդ, որը նույնպես կցանկանա իր հետ ամուսնանալ, ընտանիք կազմել: Այս պահանջմունքը կոլեկտիվ է:*

***Օրինակ 17.*** *Կոլեկտիվ է նաև ֆուտբոլ խաղալու պահանջմունքը, քանի որ անհրաժեշտ են մի քանի խաղացողներ, որոնք կբաժանվեն երկու թիմի:*

Հետաքրքիրն այն է, որ ժամանակի ընթացքում մարդու գրեթե բոլոր պահանջմունքների բավարարման եղանակը կոլեկտիվ դառնալու միտում ունի:

**Օրինակ 18.** Մարդիկ սիրում են միասին սնվել. շատ ընտանիքներում ընտանիքի անդամները սպասում են մինչև բոլորը հավաքվեն, որպեսզի ճաշի սեղան նստեն:

## 3.3. Գովազդն ու պահանջմունքները

Եթե կարիքներն օբյեկտիվ բնույթ ունեն և պետք է բավարարվեն, որ մարդն արժանապատիվ կյանքով ապրի, ապա պահանջմունքները շատ են, բազմազան, անսահմանափակ, փոփոխվող և կախված են հասարակության զարգացման մակարդակից, տնտեսական առաջընթացից, արժեհամակարգից, կենսամակարդակից և, իհարկե, շուկայի առաջարկից: Ապրանքների ու ծառայությունների արդի առաջարկն ազդում է պահանջմունքների կառուցվածքի վրա: Նոր ապրանքներն ու ծառայությունները դուրս են մղում հներին: Եվ ժամանակա-

կից շուկան իր առաջարկը հանրայնացնում է գովազդի միջոցով:

Գովազդը կարևոր դեր է խաղում կարիքի ձևավորման գործում: Այն կարող է արթնացնել թաքնված կամ լատենտ *(լատ.՝ latens – թաքնված)* պահանջմունքներ, առաջացնել նոր պահանջմունքներ, ներշնչել օբյեկտիվորեն գոյություն չունեցող պահանջմունքներ:

Գովազդն արթնացնում է լատենտ պահանջմունքներ, եթե մարդն ունի պահանջմունք, բայց չի գիտակցում այն: Գովազդն օգնում է այդ կարիքը ճանաչել և վերածել պահանջմունքի (Packard, 1957):

***Օրինակ 19.*** *Գարնանը մարդը զգում է հոգնածություն ու էներգիայի պակաս: Նա չի մտածում վիտամիններ ընդունելու մասին: Բայց երբ հեռուստատեսությամբ տեսնում է գարնանային հոգնածության դեմ վիտամինների հաբերի գովազդ, նա բացահայտում է իր պահանջմունքը և գնում է այդ ապրանքը:*

Գովազդը կարող է առաջացնել նոր պահանջմունքներ, որոնք նախկինում գոյություն չունեին՝ ձևավորելով վարքագծային նոր մոդելներ:

***Օրինակ 20.*** *Սմարթֆոնների շուկայի զարգացումից առաջ մարդիկ օգտվում էին սովորական հեռախոսից: Սակայն նոր սերնդի սմարթֆոնների, հավելվածների ու գովազդի ճնշման ներքո առաջացավ հեռախոսի նոր մոդել ունենալու պահանջմունք, երբ նույնիսկ հինը լիարժեք աշխատում է:*

Գովազդը կարող է ձևավորել պահանջմունքներ, որոնք իրականում անհրաժեշտ չեն անձի բարեկեցության համար, սակայն ներկայացվում են որպես կենսական:

***Օրինակ 21.*** *Նորաձևությունն ու գեղեցկության սրահները հաճախ ձևավորում են արտաքին տեսքի վերաբերյալ իդեալներ՝ համոզելով մարդկանց, որ նրանք պետք է համապատասխանեն գեղեցկության չափանիշներին՝ բարակ կամ հաստ հոնքեր, վառ կամ նուրբ շպար, երկար եղունգներ, հարդարված մազեր, մեծ կուրծք և այլն: Դրա շնորհիվ ստեղծվում է կոսմետիկ ծառայությունների ու ապրանքների պահանջարկ:*

Գովազդը ոչ միայն արձագանքում է պահանջմունքներին, այլև ակտիվորեն ձևավորում է դրանք (Richins, 1995): Այս երևույթը վկայում է, որ սպառողական վարքագիծը ոչ միշտ է բխում օբյեկտիվ պահանջմունքներից ու կարիքներից, այլ կարող է ձևավորվել նաև արտաքին մշակութային ու տնտեսական ազդեցության արդյունքում:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Ի՞նչ է պահանջմունքը, և ինչպե՞ս է այն տարբերվում կարիքից: Բերե՛ք օրինակներ:
2. Բերե՛ք Ա. Մասլոուի հիերարխիկ բուրգի հինգ մակարդակների պահանջմունքները բավարարող սոցիալական աշխատանքի ծառայությունների օրինակներ: Արդյո՞ք կան մակարդակներ, որոնց համապատասխան ծառայություններ չկան Հայաստանում:
3. Ինչո՞ւ է պահանջմունքների ու կարիքների հստակ տարբերակումը կարևոր սոցիալական աշխատանքի համատեքստում:
4. Գովազդը ինչպե՞ս կարող է ձևավորել օբյեկտիվորեն գոյություն չունեցող պահանջմունքներ: Բերե՛ք կոմեր-

ցիոն ու սոցիալական գովազդների օրինակներ և վեր-լուծե՛ք՝ ինչ պահանջմունքներ են դրանք փորձում ձևավորել:

5. Բացատրե՛ք «կոլեկտիվ պահանջմունք» հասկացությունը և բերե՛ք օրինակներ, որոնք գրքում չկան:
6. Ինչպե՞ս է տեխնոլոգիական առաջընթացը փոխում կարիքների օբյեկտիվության ընկալումը:

**Հանձնարարություն**

Բաժանվե՛ք խմբերի և կիրառելով Մասլոուի պահանջմունք-ների բուրգը որպես հիմք՝ մշակե՛ք կարիքի գնահատման գործիք տարբեր խոցելի խմբերի համար՝ միայնակ տարեց-ներ, պատերազմի հետևանքով տեղահանված անձինք, հաշ-մանդամություն ունեցող անձինք, երեխաներ:

**Խմբային բանավեճ**

Թեմա՝ «Սոցիալական աշխատողը պետք է առաջնորդվի միայն օբյեկտիվ կարիքներով»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթեփիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 4. ԱՊՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՎԱՐԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

## 4.1. Պահանջմունք ու պահանջարկ

Պահանջմունքի առկայությունը առաջացնում է այն բավարարելու անհրաժեշտություն, որն իր հերթին ձևավորում է ապրանքներ ու ծառայություններ սպառելու **պահանջարկ**[32]: Որ ապրանքներն ու ծառայությունները կօգտագործի մարդն իր պահանջմունքների բավարարման նպատակով՝ մեծապես կախված է նրա նախասիրություններից ու եկամտից՝ ապրանքներ ու ծառայություններ ձեռք բերելու հնարավորությունից: Անհատը կարող է բավարարել իր պահանջմունքը և՛ շուկայում գնումներ անելիս, և՛ սոցիալական ծառայությունների ու պետական միջոցառումների շրջանակում:

Ի՞նչ ապրանքներ ու ծառայություններ է առաջարկում շուկան պահանջմունքների բավարարման համար: Ի՞նչ ապրանքներ ու ծառայություններ է առաջարկում պետությունը կարիքների բավարարման համար: Նո՞ւյնն են դրանք, թե՞ տարբեր: Հենց այս հարցերն են քննության առնվում սոցիալական աշխատանքի տնտեսական հիմնահարցերի շրջանակում:

---

32 **Պահանջարկը** որևէ բարիքի կամ ծառայության այն քանակությունն է, որը սպառողները պատրաստ են և ունակ են ձեռք բերելու որոշակի գնով որոշակի ժամանակահատվածում *(Mankiw, 2020)*:

## 4.2. Ապրանքներ ու ծառայություններ

Պահանջմունքների բավարարման համար անհրաժեշտ են ապրանքներ ու ծառայություններ:

**Ապրանքները** նյութական են, տեսանելի, պահեստավորվող ու տեղափոխելի: Արդյունաբերական զարգացման բարձր մակարդակ ունեցող հասարակություններում ապրանքները հաճախ զանգվածային են. կարող են արտադրվել ցանկացած վայրում, որտեղ կան արտադրական նպաստավոր պայմաններ: Արտադրությունն ու վաճառքը հաճախ ժամանակային ու աշխարհագրական առումով միմյանցից հեռու են. ապրանքներն անցնում են հազարավոր կիլոմետրեր՝ արտադրողից մինչև սպառող հասնելու համար: Ապրանքների տեսականին անընդհատ ավելանում է՝ ձևավորելով սպառողական վարք ու կոնսյումերիզմ[33]:

Ապրանքները հիմնականում բնութագրվում են դրական հատկանիշներով, մինչդեռ ծառայությունները հաճախ սահմանվում են բացասական ձևով. նյութական չեն, տեսանելի չեն, չեն պահեստավորվում, չեն տեղափոխվում, զանգվածաբար չեն արտադրվում: Ծառայությունների արտադրությունը

[33] **Կոնսյումերիզմը** *(consume – սպառել)* սոցիալական ու տնտեսական կարգ է, որը խրախուսում է ապրանքների ու ծառայությունների գնման ու օգտագործման շարունակական աճը՝ հաճախ գերազանցելով հիմնական կարիքների բավարարումը: Այն տնտեսական գաղափարախոսություն է, սոցիալական ու մշակութային երևույթ: Քննադատական համատեքստում սպառողականությունը կապվում է գերսպառման, բնապահպանական վնասների ու անձի ցանկությունների ձևավորման հետ գովազդի ու մարքեթինգի միջոցով՝ անկախ դրանց իրական անհրաժեշտությունից *(Lage, Lins & de Aquino, 2022)*:

պահանջում է շատ մարդկանց աշխատանք, ինչն էլ բարձրացնում է ծախսերը, ինքնարժեքն ու գինը՝ որպես հետևանք:

Ծառայությունների ոչ նյութական բնույթից ելնելով՝ տնտեսագետներն ի սկզբանե նույնիսկ համարում էին դրանք անարտադրողական: Այս տեսակետը պնդում էին ֆիզիոկրատները[34], որոնք արժեք ստեղծող արտադրական գործոն համարում էին միայն բնությունը *(հատկապես՝ հողը)*: Նման մոտեցումն ընդունված էր նաև դասական տնտեսագետների կողմից:

**Ադամ Սմիթը** *(1723-1790 թթ.)* իր «Ազգերի հարստությունը» *(1776 թ.)* գրքում անդրադառնում էր բացառապես նյութական բարիքներին, որոնք նա համարում էր հարստության ձևավորման համար կարևոր, քանի որ միայն դրանց միջոցով է հնարավոր բավարարել մարդու կարիքները (Smith, 1776/2007):

Ավելի ուշ **Ժան-Բատիստ Սեյը** *(1767-1832 թթ.)* ծառայություններին նույնպես վերագրեց տնտեսական արժեք՝ շեշտելով, որ դրանք նույնպես տնտեսական օգտակարություն ունեն (Say, 1803/2001):

### 4.3. Ազատ ու տնտեսական բարիքներ

Տնտեսագիտական տեսանկյունից և՛ ապրանքները, և՛ ծառայությունները **բարիքներ են**: Բարիքների միջոցով մար-

---

[34] **Ֆիզիոկրատիան** տնտեսական դպրոց է, որը ձևավորվել է Ֆրանսիայում XVIII դարի կեսերին: Ֆիզիոկրատները համարում էին, որ հողի ու գյուղատնտեսության արտադրողականությունն է իրական հարստության միակ աղբյուրը, իսկ մյուս ոլորտները *(արդյունաբերություն, առևտուր)* պարզապես վերաբաշխում են արդեն ստեղծված արժեքները *(Gauthier, 2013)*:

դիկ բավարարում են իրենց պահանջմունքներն ու կարիքները: Տնտեսագիտության մեջ տարբերում են ազատ ու տնտեսական բարիքներ:

**Ազատ բարիքները** տրված են բնության կողմից. չունեն գին, չեն վաճառվում, ներկայացված չեն շուկայում և այդ պատճառով տնտեսական քննարկման առարկա չեն, օրինակ՝ օդը, արևը, օվկիանոսը, քամին և այլն: Ազատ բարիքների թվին կարելի է դասել նաև մարդկային հարաբերությունները՝ ընկերությունը, ընտանիքը, սերը և այլն: Դրանք նույնպես չունեն գին և շուկայական հարաբերությունների առարկա չեն:

**Տնտեսական բարիքները**, ընդհակառակը, առկա են սահմանափակ քանակությամբ և ունեն գին: Դրանք ստեղծվում են տնտեսական գործունեության արդյունքում և վաճառվում շուկայում (Coyle, & Nguyen, 2020), օրինակ՝ մեքենաներ, բնակարաններ, հագուստ, սպասք, կահույք, գործիքներ և այլն:

Նախկինում ազատ համարվող շատ բարիքներ ներկայումս դարձել են տնտեսական (Polanyi, K. 2001): Այս գործընթացը կոչվում է **կոմոդիֆիկացիա** *(commodity – ապրանք)* **կամ ապրանքայնացում** (Oliver & Robison, 2017): Մարդկությունն իր զարգացման ընթացքում անընդհատ փորձում է նոր բարիքներ կոմոդիֆիկացնել *(տե՛ս Նկար 6)*: Տնտեսական բարիքները տարբերվում են ազատ բարիքներից սակավությամբ: Եթե որևէ բարիք ստեղծելու համար անհրաժեշտ է օգտագործել սահմանափակ, սակավ ռեսուրսներ, և այդ բարիքը վաճառվում է, ապա այն տնտեսական է (Bain, 2024):



**Նկար 6.** Մարդու փոխակերպումը կապիկից շտրիխկոդի (Haenfler, n.d.)

***Օրինակ 1.*** *Մեր այգում աճող ծիրանն ազատ բարիք է, բայց նույն ծիրանը կոմոդիֆիկացվում է և դառնում տնտեսական բարիք, երբ վաճառվում է խանութում:*

***Օրինակ 2.*** *Ջուրը տրված է բնության կողմից: Մարդն այն շշալցնում է և վաճառում: Յուրաքանչյուրիս բնակարանում տեղադրված է ջրաչափ, և ամեն ամիս մենք վճարում ենք ջրի վարձ:*

***Օրինակ 3.*** *Երբ մայրը խնամում է իր երեխային, դա ազատ բարիք է: Իսկ երբ երեխային խնամում է դայակը տանը կամ մանկապարտեզում, խնամքը կոմոդիֆիկացվում է:*

***Օրինակ 4.*** *Կրթությունը կոմոդիֆիկացված է դպրոցների, բուհերի ու կրթական այլ հաստատությունների տեսքով:*

***Օրինակ 5.*** *Կովը բնության արարած է, սակայն մարդը կոմոդիֆիկացրել է այն՝ օգտագործելով, վերամշակելով ու վաճառելով որպես կաշվե արտադրանք, մսամթերք, կաթնամթերք ու նույնիսկ խաշի տոտիկներ:*

Յուրաքանչյուր գործարար մարդ փորձում է կոմոդիֆիկացնել որևէ ազատ բարիք շահույթ ստանալու նպատակով: Թեև այս գործընթացը տնտեսական զարգացման առանցքային բաղադրիչներից է, այդուհանդերձ յուրաքանչյուր ան-

հատ կարող է **ապակոմոդիֆիկացնել**[35] իրեն անհրաժեշտ տնտեսական բարիքների որոշակի մաս:

***Օրինակ 6.*** *Կարելի է ինքնուրույն ֆիզիկական վարժություններ անել և զարգացնել մկանային համակարգը՝ առանց մարզասրահի ծառայությունների համար վճարելու՝ ապակոմոդիֆիկացնելով բարիքը:*

***Օրինակ 7.*** *Երբ հարազատները հոգ են տանում պարեցների, երեխաների կամ հիվանդների մասին՝ առանց մասնավոր խնամքի ծառայություններից օգտվելու, սոցիալական խնամքն ապակոմոդիֆիկացվում է:*

Գործարարներին հաջողվել է մարդկանց համոզել ֆիզիկական ծանր աշխատանք կատարել մարզասրահներում, ծանրություններ բարձրացնել, քրտնել, որի համար նրանք ոչ միայն չեն վարձատրվում, այլև իրենք են վճարում մարզասրահի ծառայությունների համար:

Էսպինգ-Անդերսենը քննում է ապակոմոդիֆիկացման գործընթացը պետության համատեքստում, երբ բարեկեցության պետությունը ապահովում է որոշակի կարիքների բավարարում շուկայից դուրս պետական սոցիալական երաշխիքների միջոցով: Օրինակ՝ այն երկրներում, որտեղ գործում է համընդհանուր ու անվճար առողջապահական համակարգ,

35 «**Ապակոմոդիֆիկացիա**» *(decommodification)* եզրույթը լայն տարածում է ստացել Գյոստա Էսպինգ-Անդերսենի *«Բարեկեցության կապիտալիզմի երեք աշխարհները»* աշխատության մեջ: Կոմոդիֆիկացված համակարգում բարիքներին, ծառայություններին ու սոցիալական ապահովությանը հասանելիությունը կախված է հիմնականում այն հանգամանքից՝ կարող է արդյոք մարդը վաճառել իր աշխատուժը շուկայում: Ապակոմոդիֆիկացիան տեղի է ունենում այն ժամանակ, երբ մարդը հնարավորություն ունի բավարարելու իր կարիքները՝ շուկայական փոխանակման գործընթացներից անկախ *(Esping-Andersen, 1990)*:

քաղաքացիները կարող են ստանալ բժշկական ծառայություններ՝ անկախ իրենց զբաղվածությունից կամ եկամտից: Նույնիսկ եթե մարդը կորցնում է աշխատանքը և այլևս չի ստանում աշխատավարձ, նա կարող է շարունակել օգտվել առողջապահական ծառայություններից առանց վճարելու:

Ազատ բարիքները երբեմն շփոթում են այն ապրանքների կամ ծառայությունների հետ, որոնք սպառողին տրամադրվում են «անվճար»: Դրանք կարող են ներառել առողջապահական ծառայություններ, հանրակրթություն, փողոցային լուսավորություն և այլն: Այս բոլոր բարիքներն ունեն հստակ հաշվարկված շուկայական արժեք: Սակայն տրամադրվում են սպառողին՝ առանց ուղիղ վճարի որոշակի նկատառումներից ու քաղաքական նպատակներից ելնելով: Հանրակրթությունը պետության պարտավորությունն է և հարկային միջոցներից ներդրումը կրտսեր սերնդի համահավասար զարգացման համար: Տնտեսական տեսանկյունից այս բարիքները չեն համարվում ազատ բարիքներ, քանի որ դրանց ստեղծման համար օգտագործվել են սակավ ռեսուրսներ, և դրանք ունեն որոշակի արժեք:

Ազատ ու տնտեսական բարիքների միջև տարբերակումը սոցիալական աշխատանքում հատկապես կարևոր է, երբ մասնագետը որոնում է շահառուին օգնելու համար ռեսուրսներ: Միջամտության տրամաբանությունը մասնագետը սկսում է շահառուի անձից՝ դիտարկելով նրան որպես առաջնային ռեսուրս՝ իր իսկ սոցիալական հիմնախնդիրները կարգավորելու համար: Այնուհետև մասնագետը ուսումնասիրում է ընտանեկան հասանելի ռեսուրսները, ընկերներին: Այս ազատ բարիքներն սպառելուց հետո մասնագետը դիտար-

կում է առկա համայնքային ռեսուրսները, պետական ու հասարակական սոցիալական ծառայությունները *(տե՛ս Նկար 7)*: Սոցիալական աշխատողը փորձում է սկզբից գործադրել ազատ բարիքները՝ շահառուի հմտություններն ու կարողությունները, ընտանիքի ու ընկերների աջակցությունը:




**Նկար 7.** Շահառուին աջակցելու համար ռեսուրսների հայթայթման հաջորդականությունը:

## 4.4. Տնտեսական բարիքների տեսակները

Տնտեսական բարիքները դասակարգվում են ըստ երկու հիմքի՝ մրցակցայնություն ու բացառելիություն:

1. **Մրցակցային** ու **ոչ մրցակցային բարիքներ** *(*rival and non-rival goods*)*: **<u>Մրցակցային</u>** են այն բարիքները, որոնք մեկի կողմից սպառվելու դեպքում մյուսների համար այլևս հասանելի չեն:

***Օրինակ 8.*** *Եթե ես կերա խնձորը, այն այլևս ոչ մեկը չի կարողանա ուտել:*

**<u>Ոչ մրցակցային</u>** են այն բարիքները, որոնք մեկի կողմից սպառելը չի անդրադառնում մյուսների համար դրանց հասանելիության վրա:

***Օրինակ 9.*** *Եթե ես օգտվում եմ քաղաքի փողոցային լուսավորությունից, մյուսներին դա չի խանգարում, նրանք նույնպես ու նույնչափ օգտվում են այդ լուսավորությունից: Ավտոմեքենաների վարորդներն ու հետիոտները կարող են միաժամանակ օգտվել նույն լուսավորությունից՝ առանց միմյանց սպառման հնարավորությունները նվազեցնելու:*

2. **Բացառելի** ու **ոչ բացառելի բարիքներ** *(*excludable and non-excludable goods*):* **<u>Բացառելի</u>** են այն բարիքները, որոնց հասանելիությունը կարելի է սահմանափակել այն անձանց համար, որոնք դրա համար չեն վճարել:

***Օրինակ 10.*** *Կինոթատրոն մուտքը կարելի է սահմանափակել նրանց համար, ովքեր տոմս չեն գնել:*

**<u>Ոչ բացառելի</u>** են այն բարիքները, որոնց օգտագործումը գրեթե անհնար է սահմանափակել որևէ մեկի համար (Mankiw, 2020): Այլ կերպ ասած՝ չի կարելի որևէ մեկին բացառել այդ բարիքների սպառումից:

***Օրինակ 11.*** *Օդն ու ռադիոալիքները ոչ բացառելի են:*

Այս երկու հիմքերով դասակարգումը թույլ է տալիս առանձնացնել տնտեսական բարիքների չորս խումբ *(տե՛ս Աղյուսակ 2)*:

**Մասնավոր բարիքներն** այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք ձեռք են բերվում մասնավոր անձանց կողմից սեփական միջոցներով: Այս բարիքները մատակարարվում են ազատ շուկայի միջոցով գնորդների ու վաճառող-

ների միլիոնավոր փոխազդեցությունների արդյունքում: **Այս բարիքները մրցակցային են ու բացառելի:** Դրանց սպառումը պայմանավորված է ինչպես անձի նախասիրություններով ու ճաշակով, այնպես էլ եկամուտներով, որոնք ձևավորում են նրա հնարավորությունները:

***Օրինակ 12.*** *Սննդամթերք, հագուստ, բնակարանի վերանորոգման ծառայություններ, վարսահարդարում և այլն:*

**Աղյուսակ 2.** Տնտեսական բարիքների դասակարգում:

| ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐԻՔՆԵՐ | Բացառելի | Ոչ բացառելի |
|---|---|---|
| **Մրցակցային** | Մասնավոր բարիքներ | Ընդհանուր բարիքներ |
| **Ոչ մրցակցային** | Ակումբային բարիքներ | Հանրային բարիքներ |

**Հանրային բարիքների** օրինակներ են բանակը, ազգային անվտանգությունը, հանրային կարգը պահպանող ոստիկանությունը և այլն: Դրանց հանրամատչելիությունը, որպես կանոն, ապահովում է պետությունը հարկային միջոցների հաշվին: **Այս բարիքները ոչ մրցակցային են ու ոչ բացառելի**. մեկ անձի կողմից դրանց օգտագործումը չի նվազեցնում մյուսների հնարավորությունները՝ օգտվելու այդ բարիքից, և ոչ մեկին հնարավոր չէ բացառել դրանց սպառումից: Նման բարիքների ազատ շուկայի միջոցով բաշխումն ակնհայտորեն դժվար է կամ անհնար: Հանրային բարիքները ենթադրում են կոլեկտիվ լայնածավալ սպառում: Հանրային բարիքների համար ոչ ոք չի ուզում վճարել, բայց և ոչ մեկը չի կարող բացառված լինել դրանց սպառումից: Դրանք բավարարում են ոչ միայն անհատական, այլև հասարակական պահանջմունքները:

***Օրինակ 13.*** *Եթե մեկի փունը թալանել են, նա դիմում է ոստիկանություն, որպեսզի ոստիկանությունը գտնի հանցագործին: Ոստիկանության գործունեությունը ենթադրում է բավական մեծ ծախս՝ ոստիկանների աշխատավարձ, համազգեստ, զենք, ավտոմեքենաներ, ադմինիստրատիվ գործունեություն և այլն: Սակայն ո՛չ հանցանք կատարողը, ո՛չ էլ զոհը պատրաստ չեն դրա համար վճարել: Ոստիկանության կողմից իրենց պարտականությունները պատշաճ կատարելու համար վճարում է հանրությունը հարկերի միջոցով:*

**Ընդհանուր բարիքները** վերաբերում են բնական ռեսուրսներին՝ օգտակար հանածոներ, վառելիք, ծկնորսական ջրավազաններ, անտառներ և այլն: Ժամանակակից տնտեսություններում այս ռեսուրսների հասանելիությունը հաճախ որոշ չափով վերահսկվում է արտոնագրերի տրամադրման ու քվոտաների սահմանման միջոցով, ինչի շնորհիվ դրանք դառնում են որոշ չափով բացառելի: Սակայն, եթե նման վերահսկողություն չկա, **այդ ռեսուրսները համարվում են մրցակցային, բայց ոչ բացառելի**:

Այս բարիքների մրցակցային բնույթն ու դրանց հեշտ հասանելիությունը սովորաբար հանգեցնում են դրանց գերշահագործմանը: Այս երևույթը հայտնի է որպես «ընդհանուր սեփականության ողբերգություն» *(tragedy of the commons)*: Այս դեպքում ռեսուրսն օգտագործվում է անհատական օգուտ ստանալու նպատակով՝ անտեսելով հանրային շահը, ինչի հետևանքով ռեսուրսը հաճախ վատնվում է: Դա առաջացնում է պետական միջամտության անհրաժեշտություն ռեսուրսների օգտագործման սահմանափակման ու կառավարման ուղղությամբ:

**Ակումբային բարիքներն** այն ապրանքներն ու ծառայություններն են, որոնք **ոչ մրցակցային են, բայց բացառելի**: Սա նշանակում է, որ մեկ անձի կողմից օգտագործումը չի խոչընդոտում մյուսների օգտագործմանը *(ոչ մրցակցային)*, սակայն հնարավոր է սահմանափակել այդ բարիքի հասանելիությունը միայն վճարող օգտվողների համար *(բացառելիություն)*: Ինչպես անունն է հուշում, ակումբային բարիքները հիմնականում հասանելի են միայն ակումբի անդամների համար, և դրանց օգտագործման համար սովորաբար պահանջվում է անդամավճար (Zeder, 2020):

***Օրինակ 14.*** *Գոլֆի ակումբը փրամադրում է խաղադաշտը՝ որպես ոչ մրցակցային բարիք. միաժամանակ մի քանի մարդիկ կարող են խաղալ՝ առանց միմյանց խանգարելու: Սակայն այստեղ կարող են մտնել միայն ակումբի անդամները՝ բացառելով բոլոր ոչ անդամներին:*

***Օրինակ 15.*** *Netflix-ի բաժանորդագրություն, բոուլինգի սրահ, սահադաշտ, մարզասրահ և այլն:*

## 4.5. Ապրանքների ու ծառայությունների բաշխման համակարգերը

Տնտեսական բարիքները՝ ապրանքներն ու ծառայությունները, բաշխվում են հասարակության անդամների միջև երկու հիմնական համակարգերի՝ շուկայի ու պետության միջոցով (Samuelson, 1954):

Սպառողներն իրենց պահանջմունքների մեծ մասը բավարարում են շուկայում ապրանքների ու ծառայությունների գնման միջոցով, որտեղ շահույթ հետապնդող ընկերությունները առաջարկում են իրենց արտադրանքը: **Շուկան** տնտե-

սագիտական իմաստով այն տարածքն է, որտեղ հանդիպում են առաջարկն ու պահանջարկը (Samuelson & Norhaus, 2010):

Ապրանքների ու ծառայությունների **գինը** շուկայում կատարում է մի շարք տարբեր գործառույթներ շուկայի երկու մասնակիցների համար: Գինը տեղեկացնում է, ուղղորդում որոշումները և խթանում՝ գնում կատարելու, միևնույն ժամանակ դուրս է թողնում շուկայից այն արտադրողներին ու գնորդներին, որոնք չեն կարող կամ չեն ցանկանում բավարարել պահանջվող պայմանները (Mankiw, 2020):

Շահույթ հետապնդող կազմակերպությունները կամ արտադրողները շուկայում առաջարկ կներկայացնեն միայն այն դեպքում, եթե ակնկալվող վաճառքից ստացվող եկամուտները գերազանցեն արտադրության ծախսերը՝ ապահովելով տնտեսական արդյունավետություն:

Սպառողները կամ գնորդները կդադարեն շուկայում գնումներ կատարել, եթե առաջարկվող ապրանքներն ու ծառայությունները չհամապատասխանեն իրենց նախընտրություններին, օգտակարության գնահատմանն ու ֆինանսական հնարավորություններին (Musgrave, 1959):

Շուկայական ապրանքների դեպքում գինն ու որակը մրցակցային չափանիշներ են արտադրողների համար և միաժամանակ որոշիչ դեր ունեն սպառողների համար: Գնում կատարելու որոշման մեջ սպառողն արտահայտում է իր սուբյեկտիվ գնահատականը՝ տվյալ ապրանքի միջոցով իր պահանջմունքի բավարարման վերաբերյալ: Պատրաստ լինելով տվյալ ապրանքը ձեռք բերել որոշակի գնով՝ սպառողը ներկայացնում է արտադրողին իր գնահատականը և խրախուսում է առաջարկ ներկայացնել:

Թե որակի ու գնի միջև ո՞ր հարաբերակցությունն է ընդունելի, որոշում է շուկան: Սպառողը համեմատում է բարձրորակ ապրանքի հավելյալ օգտակարությունը դրա հետ կապված լրացուցիչ ծախսերի հետ: Այն ապրանքները, որոնք չեն համապատասխանում սպառողի ակնկալիքներին, չեն սպառվում, որպես հետևանք էժանանում են: Շուկաներում գները տարբեր են, քանի որ տարբեր որակի ապրանքների համար սպառողը պատրաստ է վճարել տարբեր գումար՝ գին-օգտակարություն հարաբերակցության իր ընկալումներին համապատասխան (Mankiw, 2020):

Կարիքների բավարարումը շուկայի միջոցով ենթադրում է, որ սպառողներն ունեն որոշակի գնողունակություն, այսինքն՝ եկամուտ, ունեցվածք կամ տրանսֆերային եկամուտներ *(օրինակ՝ թոշակներ, նպաստներ)*, որոնք կախված են եկամտի բաշխումից: Շուկայում կիրառվում է «**բաշխում՝ ըստ վճարունակության**» սկզբունքը. միայն այն անձինք, որոնք պատրաստ են և ի վիճակի են վճարել պահանջվող գինը, կարող են ձևավորել պահանջարկ և բավարարել իրենց պահանջմունքները շուկայում: Գինը կատարում է շուկայի հավասարակշռման կամ մաքրման գործառույթ. շուկայում առաջարկն ու պահանջարկը հավասարակշռվում են գնի միջոցով: Առաջարկվող ապրանքն ամբողջությամբ գնում են, և սպառողները ստանում են իրենց անհրաժեշտ քանակությունը. չկա ո՛չ պակասորդ, ո՛չ ավելցուկ: Շուկայի հավասարակշռման գործառույթը ցույց է տալիս այն գնի մակարդակը, որի դեպքում շուկան «մաքրվում է». առաջարկն ու պահանջարկը հավասարվում են (Stigler, 1987):

Նրանք, ովքեր չեն կարող վճարել, շուկայում հանդես չեն գալիս որպես սպառող, նրանց կարիքը մնում է անտեսված: Այս դեպքում մենք գործ ունենք **շուկայի ձախողման** *(market failure)* հետ: Շուկայի ձախողումը մի իրավիճակ է, երբ ազատ շուկան առանց պետական միջամտության անարդյունավետ է բաշխում ռեսուրսները կամ սոցիալական տեսանկյունից անարդար է: Այսինքն՝ շուկան չի կարողանում բավարարել հասարակության անվճարունակ, խոցելի, անմրցունակ խմբերի կարիքները (Mankiw, 2020):

Շուկայի ձախողումն իրականում ոչ թե տեխնիկական հնարավորությունների բացակայության, այլ գնահատման խնդիր է: Որոշիչ հարցն այն է՝ արդյոք գոյացած ապրանքների բաշխումն ընդունելի է սոցիալական քաղաքականության տեսանկյունից: Գոյություն ունեն այնպիսի ապրանքներ ու ծառայություններ, որոնց բաշխումն ըստ եկամուտների ընդունելի է: Եվ կան այնպիսի ապրանքներ ու ծառայություններ, որոնց դեպքում անհրաժեշտ է պետական միջամտություն, քանի որ ըստ եկամուտների այդ բարիքների բաշխումը հակասում է հումանիզմի ու արդարության սկզբունքներին:

Այսպիսով՝ ապրանքների ու ծառայությունների բաշխման երկրորդ խոշոր մեխանիզմը պետությունն է: **Պետությունը** հանդես է գալիս ի դեմս պետական կառույցների, գերատեսչությունների ու սոցիալական ծառայությունների: Դրանց միջոցով են տրամադրվում և բաշխվում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնց դեպքում շուկան՝ որպես համակարգման մեխանիզմ, ձախողում է: Այս ապրանքներն ու ծառայությունները հանրային են կամ մերիտոր: Հանրային ապրանքներն ու ծառայություններն արտադրվում և բաշխվում են

պետական որոշումների հիման վրա (Lindahl, 1958): Գործի է դրվում պլանային մոտեցումը. ծառայությունները ֆինանսավորվում են հարկային միջոցներով: Հանրային համակարգում չեն գործում շուկայական սկզբունքները. չկան փոխանակում, գին, ծառայության սպառողի նախասիրությունների համար պայքար:

Պետությունը որոշումներ է կայացնում ոչ միայն հանրային ու մերիտոր բարիքների վերաբերյալ, այլև այն բարիքների, որոնց սպառումը հասարակական տեսանկյունից ցանկալի է: Այդ պատճառով օրենքների ու կարգավորումների հիման վրա փորձ է արվում ազդելու նաև հասարակության վարքագծի վրա արտադրության ու բաշխման գործընթացների պետական խթանման ու սահմանափակման մեխանիզմներով (Buchanan, 1968):

Մասնավոր բարիքների սպառողների մուտքի հնարավորությունները շուկա սահմանափակվում են գնով: Իսկ օրենքներն ու վարչական վերահսկողությունը կարգավորում են մերիտոր բարիքների հասանելիությունը:

Հանրային ու մերիտոր բարիքների առաջարկը, որպես կանոն, քաղաքական որոշում է:

Պետությունը կարող է միջամտել հետևյալ մեխանիզմներով՝

- սոցիալական հարաբերությունների կանոնակարգում *(օրինակ՝ շրջակա միջավայրի պահպանման վերաբերյալ օրենքներ):*

***Օրինակ 16.*** *Արգելվում է արդյունաբերական կեղտաջրերի արտահոսքը գետեր առանց մաքրման: Սահմանվում են տուգանքներ ապօրինի անփառահապումների համար: Քաղաքներում*

*սահմանվում են աղմուկի ու օդի աղտոտման սահմանային նորմեր:*

- Հարկային ու սուբսիդավորման քաղաքականություն:

***Օրինակ 17.*** *Գյուղատնտեսական ապրանք արտադրողներին պետությունը սուբսիդավորում է գարնանային սերմերի կամ պարարտանյութերի ձեռքբերման համար: Փոքր բիզնեսներին տրամադրվում են հարկային արտոնություններ սկսնակ ձեռնարկատիրությունների խթանման նպատակով: Սահմանվում են ավելի բարձր հարկեր վնասակար արտադրությունների (օրինակ՝ ծխախոտի) համար՝ սպառումը նվազեցնելու համար:*

- Հանրային ծառայությունների տրամադրում:

***Օրինակ 18.*** *Պետությունն ապահովում է հանրակրթական դպրոցների, առողջության պահպանման առաջնային օղակների գործունեությունը, տրամադրում է քաղաքային տրանսպորտի մատչելի ծառայություններ:*

- Տեղեկատվական թափանցիկության ապահովում:

***Օրինակ 19.*** *Պետական կառույցները պարտավոր են հրապարակել բյուջետային ծախսերը հասարակության վերահսկողության ապահովման նպատակով:*

***Օրինակ 20.*** *«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը քաղաքացիներին հնարավորություն է տալիս դիմելու և ստանալու տվյալներ պետական մարմիններից:*

***Օրինակ 21.*** *Հանրային լսումներ ու բաց տվյալների հարթակներ՝ քաղաքական որոշումների ու ծրագրերի վերաբերյալ հանրության տեղեկացված մասնակցության համար:*

## 4.6. Մերիտոր բարիքներ

Բացի մասնավոր ու հանրային բարիքներից՝ հարկ է տարբերել նաև **մերիտոր** *(լատ.՝ meritum – արժանի)* բարիքները: Դրանք պարունակում են ինչպես հանրային, այնպես էլ մասնավոր բարիքների հատկանիշներ, բաշխվում են ինչպես ազատ շուկայի մեխանիզմների, այնպես էլ պետության միջոցով:

Մերիտոր բարիքների շարքին են դասվում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք պետության կողմից տրամադրվում են հասարակությանը կամ հասարակության որոշ խմբերին, քանի որ առանձնապես արժեքավոր են ու կարևոր: Դրանք ունեն դրական ազդեցություն և նպաստում են հասարակական բարեկեցությանը. հանրօգուտ են: Մերիտոր բարիքները հաճախ գտնվում են պետության վերահսկողության ներքո կամ ֆինանսավորվում են հանրային միջոցներով: Ազատ շուկան այդ բարիքները կարող է չառաջարկել բավարար քանակով «ընկալվող արժեքի» կամ անհամաչափ պահանջարկի պատճառով (Finis Siegler, B., 1997, էջ 32):

***Օրինակ 22.*** *Մերիտոր բարիք են գրադարանները, կրթաթոշակային ծրագրերը, որոնք ուղղված են կրթության հասանելիության ապահովմանը բոլորի համար: Հայաստանում հանրակրթությունը հիմնականում հանրային դաշտում է. ֆինանսավորվում է պետական բյուջեից: Դրան զուգահեռ գործում են կրթական փարափեսակ ծառայություններ մատուցող մասնավոր դպրոցներ: Մի կողմից՝ յուրաքանչյուր ծնող ընտրություն է կատարում՝ որ դպրոց տանի երեխային, մյուս կողմից՝ պետությունն ապահովում է այդ անհրաժեշտ ու թանկարժեք բարիքի հասանելիությունը բոլոր երեխաների համար: ՀՀ բարձրագույն կրթության համակարգը հիմնականում մասնավոր դաշտում է, ուսա-*

*նողների գերակա մեծամասնությունը վճարում է ուսման վարձը, իսկ չվճարելու դեպքում կարող է դուրս մնալ բուհից: Միևնույն ժամանակ պետությունն ու բուհերը նախատեսում են սահմանափակ թվով անվճար տեղեր ամենապաղանդավոր ուսանողների համար, որպես արտոնություն, ինչպես նաև զեղչերի համակարգ տնտեսապես անապահով ուսանողների համար:*

***Օրինակ 23.*** *Առողջության առաջնային պահպանման միջոցառումները, սքրինինգները, պատվաստումները ֆինանսավորվում են պետական բյուջեից, քանի որ ուղղված են ոչ միայն անձի առողջության պահպանմանը, այլև հանրային առողջությանը, շատ դեպքերում՝ վարակի տարածման կանխարգելմանը:*

***Օրինակ 24.*** *Հանրային տրանսպորտը նույնպես մերիտոր բարիք է: Այն ապահովում է մարդկանց տեղափոխումը հնարավորինս օպտիմալ, էկոլոգիապես մաքուր ու մատչելի եղանակով: Որոշ ուղևորներ անվճար են երթևեկում, մյուսների համար գործում են զեղչեր, բայց ծառայությունը բոլորի համար նույնն է:*

***Օրինակ 25.*** *Թանգարանները, թատրոնները, համերգները, որոնք նպաստում են մշակութային կրթությանն ու կյանքի որակի բարելավմանը, նույնպես մերիտոր բարիքներ են: ՀՀ կրթության, գիտության, սպորտի և մշակույթի նախարարությունը (ՀՀ ԿԳՄՍՆ) յուրաքանչյուր տարի դպրոցականներին տրամադրում է մեկ համերգի, մեկ թատրոնի ու մեկ թանգարանի այցելության անվճար հնարավորություն, որպեսզի խթանի երեխաների հետաքրքրությունը մշակույթի հանդեպ:*

***Օրինակ 26.*** *Հայաստանի մարզերում գործող «Դպրոցական սնունդ» ծրագրի շրջանակում տարրական դասարանների աշակերտներին տրամադրվում է տաք սնունդ, որի նպատակն է խթանել առողջ ապրելակերպը, ձևավորել հանրային վարքականոնները, բարձրացնել կրթության որակը (ՀՀ ԿԳՄՍՆ, 2023):*

Այս բոլոր բարիքները՝ կրթություն, առողջապահություն, մշակութային միջոցառումներ, հանրային տրանսպորտ, ներկայացված են և՛ հանրային, և՛ մասնավոր դաշտում:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր պետություն ու հասարակություն յուրովի է օգտագործում մերիտոր բարիքները՝ սահմանելով, որ բարիքներն են բաշխվում հանրային դաշտում, իսկ որոնք՝ մասնավոր, որ խմբերն ունեն այս կամ այն բարիքից օգտվելու արտոնություն:

ԽՍՀՄ տարիներին առողջապահության համակարգն ամբողջությամբ հանրային դաշտում էր. ֆինանսավորվում էր պետական բյուջեից: Հետխորհրդային ժամանակաշրջանում անկախ Հայաստանում բյուջեի միջոցներն այլևս չէին բավարարում առողջապահական ծառայությունների ֆինանսավորման համար: Առողջապահական ծառայությունների մեծ մասը տեղափոխվեց մասնավոր դաշտ: Տարիներ անց ոտքի կանգնող անկախ Հայաստանի Հանրապետությունը, գիտակցելով այս իրավիճակի անարդարությունն ու երկարատև բացասական ազդեցությունը քաղաքացիների առողջական վիճակի, բարեկեցության ու տնտեսության վրա, սկսեց քայլ առ քայլ հասանելի դարձնել քաղաքացիների համար այնպիսի արժեքավոր բարիքներ, ինչպիսիք են ծննդօգնությունը՝ մինչև 7 տարեկան, իսկ հետագայում՝ մինչև 18 տարեկան երեխաների բուժօգնությունը և այլն (ՀՀ Կառավարության N 318-Ն որոշում N 1515-Ն, 2004)՝ դրանք վերադարձնելով հանրային դաշտ:

Պետությունը կարող է սուբսիդավորել մերիտոր բարիքները, տրամադրել դրանք որպես հանրային ծառայություններ, սահմանել արտոնություններ, իրականացնել իրազեկման ու կրթական քարոզարշավներ՝ խթանելով մերիտոր բարիքի սպառումը:

Պետությունը տեղափոխում է մերիտոր դաշտ նաև այն բարիքները, որոնց գերսպառումից ուզում է խուսափել:

*Օ***րինակ 27.** *ԱՄՆ-ում սահմանվում է համավճար որոշ դեղամիջոցների համար, որպեսզի քաղաքացիները չչարաշահեն դրանց օգտագործումը:*

Միևնույն ժամանակ պետությունը կարող է սահմանափակել որոշ **դեմերիտոր բարիքների** սպառումը, որոնք հանրության համար անցանկալի են:

***Օրինակ 28.*** *Ծխախոտի արտադրությունը արգելված չէ, սակայն ցանկալի չէ դրա օգտագործումը: Բազմաթիվ բժշկական հետազոտություններ ապացուցել են ծխելու բացասական ազդեցությունն առողջության վրա: Այդ իսկ պատճառով պետությունը սահմանափակում է ծխախոտի օգտագործումը՝ օրենքով արգելելով դրա վաճառքը 18 տարին չլրացած անձանց, տուգանքներ սահմանելով հանրային վայրերում ծխախոտի օգտագործման համար, սահմանելով բարձր սակագին ու իրականացնելով հանրային հակածխախոտային արշավներ: Համանման միջոցառումներ իրականացվում են նաև այլ դեմերիտոր բարիքների պարագայում՝ ալկոհոլ, հոգեմետ դեղեր և այլն:*

Հարցեր ու հանձնարարություններ

## Հարցեր

1. Ո՞ր բարիքներն է նպատակահարմար բաշխել շուկայի, իսկ որո՞նք՝ պետության միջոցով:
2. Հայաստանյան իրականության մեջ ի՞նչ մերիտոր բարիքներ գիտեք:
3. Ի՞նչ դեմերիտոր բարիքներ գիտեք: Որքանո՞վ են արդյունավետ դրանց սահմանափակման մեխանիզմները:

4. Շուկան՝ որպես բարիքների բաշխման մեխանիզմ, ո՞ր դեպքերում է ավելի արդյունավետ, քան պետությունը, և հակառակը:
5. Արդյո՞ք պետք է օրենսդրորեն սահմանափակել որոշ ազատ բարիքների կոմոդիֆիկացիան:
6. Ո՞ր հանրային բարիքները կարելի է մասնավորեցնել Հայաստանում՝ առանց սոցիալական վնասի:

**Հանձնարարություններ**

1. Գտե՛ք ազատ բարիք և մշակե՛ք դրա կոմոդիֆիկացման ծրագիրը:
2. Գտե՛ք որևէ տնտեսական մասնավոր բարիք ապակոմոդիֆիկացնելու հնարավորություն:
3. Թվարկե՛ք՝ ի՞նչ ազատ բարիքներ, բացի տեքստում նշված օրինակներից, կարելի է օգտագործել շահառուին օգնելու համար սոցիալական աշխատանքում:

**Խմբային բանավեճ**

Թեմա՝ «Կոմոդիֆիկացիան նպաստում է սոցիալական անհավասարության աճին»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթեփիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 5. ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

## 5.1. Արտադրական գործոններ

Ապրանքների ու ծառայությունների արտադրության համար անհրաժեշտ են որոշակի ռեսուրսներ: Դրանք կոչվում են արտադրական գործոններ: Տնտեսագիտության մեջ ընդունված է տարբերակել հետևյալ արտադրական գործոնները՝

1. աշխատանք *(աշխատուժ)*,
2. հող *(բնական ռեսուրսներ)*,
3. կապիտալ *(արտադրության միջոցներ, փող)* (Samuelson & Norhaus, 2010),
4. ձեռնարկատիրական ունակություններ,
5. տեղեկատվություն (Mankiw, 2021):

**Աշխատանքը** ***(աշխատուժը)***՝ որպես արտադրական գործոն, ընդգրկում է աշխատողների ֆիզիկական ու մտավոր ջանքերը, գիտելիքը, հմտությունները, կրթությունը, որակավորումն ու փորձը, որոնք անհրաժեշտ են ապրանքների ու ծառայությունների արտադրության համար:

**Հողը՝** որպես արտադրական գործոն, ներառում է բոլոր տեսակի բնական ռեսուրսները, որոնք օգտագործվում են տնտեսական բարիքների արտադրության համար, *օրինակ՝ անտառներ, գյուղատնտեսական նպատակներով օգտագործվող հողեր, օգտակար հանածոներ և այլ ռեսուրսներ:*

Տնտեսագետները տարբերակում են **կապիտալի** երկու տեսակ՝ **ֆիզիկական** ու **դրամական**:

- **Ֆիզիկական կապիտալը** մարդու կողմից ստեղծած բոլոր արտադրատեսակներն են՝ շինություններ, ճա-

նապարհներ, տրանսպորտ, ենթակառուցվածքներ, էներգակիրներ և այլն:

- **Դրամական կապիտալը** կանխիկ ու անկանխիկ ֆինանսական միջոցներն են և արժեթղթերը, որոնք օգտագործվում են արտադրության համար հումք ու նյութեր ձեռք բերելու նպատակով:

**Ձեռնարկատիրական գործունեությունը՝** որպես արտադրական գործոն, ընդգրկում է այն հմտություններն ու գիտելիքները, որոնք թույլ են տալիս արդյունավետ օգտագործել արտադրության գործոնները՝ ստանալով առավելագույն եկամուտ: Ձեռնարկատիրական գործունեություն սկսելու համար անհրաժեշտ են հատուկ հմտություններ՝

- տնօրինել արտադրական գործոնները՝ որոշակի բարիքներ արտադրելու նպատակով,
- ընդունել ճիշտ որոշումներ ու կարգավորել կոնֆլիկտներ,
- յուրացնել նոր տեղեկատվություն, ներդնել նոր տեխնոլոգիաներ ու ապրանքներ,
- ընկալել ռեսուրսների սխալ կառավարման ռիսկերը և կարողանալ հարմարվել փոփոխվող պայմաններին,
- ստանձնել պատասխանատվություն կայացրած որոշումների համար:

**Տեղեկատվությունը՝** որպես արտադրական գործոն, սկսել են դիտարկել վերջերս: Տեխնիկական առաջընթացի ու տնտեսության զարգացման դարում կարևորվում է տեղեկատվությունը՝ տվյալներ ու գիտելիք, որոնք նպաստում են արդյունավետ տնտեսական գործունեությանը:

Տեղեկատվության առանձնահատկություններն են՝

- այն կարելի է անսահմանափակ օգտագործել,
- ժամանակակից աշխարհում այն արագ փոխանցվում է համացանցի ու կապի այլ միջոցների շնորհիվ,
- հեշտ է բազմապատկել. հազար աշխատողներին միև-նույն հրահանգը կարելի է ուղարկել միաժամանակ:

### 5.2. Ապրանքների արտադրության գործընթացը

Ապրանքների արտադրության գործընթացը բաղկացած է հետևյալ հիմնական փուլերից՝

1. պլանավորում,
2. արտադրական գործոնների ներգրավում,
3. բուն արտադրության գործընթաց,
4. որակի վերահսկում,
5. պահեստավորում,
6. իրացում (Finis Siegler, 1997) *(տե՛ս Նկար 8):*




**Նկար 8. Ապրանքների արտադրության փուլերը**

**Պլանավորումը** ներառում է շուկայի ուսումնասիրություն, պահանջարկի ու մրցակցային միջավայրի վերլուծություն, ապրանքի հայեցակարգի մշակում, դրա հատկությունների ու

շարունակելիության սահմանում, արտադրական հզորություն-ների, ռեսուրսների ու լոգիստիկայի[36] պլանավորում:

**Արտադրական գործոնների ներգրավումը** ենթադրում է կապիտալի հայթայթում, անձնակազմի հավաքագրում ու վերապատրաստում, արտադրական տարածքների ու ենթակառուցվածքների կազմակերպում, հումքի, սարքավորումների և այլ պարագաների գնում:

**Բուն արտադրությանն ուղղված գործողությունները** ենթադրում են ռեսուրսների վերափոխում պատրաստի արտադրանքի: Այս փուլը կարող է ներառել տեխնոլոգիական տարբեր գործողություններ, հավաքում, փորձարկում և այլն՝ կախված ապրանքի բնույթից:

**Որակի վերահսկման** ընթացքում գնահատվում է ապրանքի համապատասխանությունը սահմանված չափանիշներին ու պահանջներին, թերությունների և անհամապատասխանությունների հայտնաբերում ու վերացում:

**Պահեստավորումը** ներառում է պատրաստի արտադրանքի փաթեթավորում՝ վնասվածքներից պաշտպանելու ու փոխադրման հարմարության նպատակով, պահեստավորման ու պահպանման համար անհրաժեշտ, անվտանգ պայմանների ստեղծումից մինչև իրացումը ու սպառողների ուղղությամբ արտադրանքի փոխադրման կազմակերպում:

---

36 **Լոգիստիկան** *(հին հուն.՝ λογιστική – մտածելու արվեստ)* նյութական, տեղեկատվական ու ֆինանսական ռեսուրսների հոսքերի կառավարումն է՝ դրանց առաջացման, ծագման կետից մինչև սպառող հասցնելու համար՝ նպատակ ունենալով ապահովել ապրանքների ու ծառայությունների արդյունավետ ու տնտեսապես շահավետ տեղափոխումը: Այն ներառում է տեղափոխման բոլոր փուլերի պլանավորում, կազմակերպում, կառավարում ու վերահսկում *(Шахназарян & Зуева, 2014)*:

**Իրացումը** ենթադրում է ապրանքի առաջխաղացում շուկայում, վաճառք ու մատակարարում սպառողներին:

## 5.3. Ծառայությունների արտադրության գործընթացը

Ծառայությունների արտադրությունը նույնպես ենթադրում է **պլանավորում** ու **արտադրության գործոնների ներգրավում**: Ծառայությունների արտադրության գործընթացի այս երկու փուլերին հաջորդող փուլերն էապես տարբերվում են ապրանքների արտադրությունից *(տե՛ս Նկար 9)*:




**Նկար 9.** Ծառայությունների արտադրության փուլերը

Երբ ծառայություն արտադրողը պատրաստ է համադրել արտադրության գործոններն ու ծառայություն մատուցել, անհրաժեշտ է, որ արտադրության գործընթացում ներառվի ևս մեկ գործոն՝ ծառայություն ստացողը: Վերջինս կա՛մ անձամբ է մասնակցում ծառայության արտադրությանը որպես շահառու կամ հաճախորդ, կա՛մ իրեն պատկանող որևէ իր է հանձնում ծառայություն մատուցողին՝ վերանորոգման կամ մշակման նպատակով: Ըստ Ռուդոլֆ Մալերիի՝ ծառայությունների արտադրության ժամանակ արտադրության գործոնների վերջնական համադրումը պահանջում է հաճախորդի ին-

տեգրում՝ որպես արտադրության արտաքին գործոնի (Maleri, 1994): Այս փուլում միաժամանակ կոնկրետանում է ծառայության բնույթը՝ ապահովելով որակի վերահսկում հաճախորդի կողմից, ինչպես նաև տեղի է ունենում ծառայության իրացումը: Իսկ պահեստավորումն անձին ուղղված ծառայությունների դեպքում պարզապես անհնար է *(տե՛ս Նկար 9)*:

***Օրինակ 1.*** *Խորհրդատվական ծառայությունները հասանելի են միայն որոշակի ժամերի և պահանջում են մասնագետների ներկայություն՝ որակյալ խորհրդատվություն իրականացնելու համար: Սակայն ծառայությունը չի մաշվի, մինչդեռ ծառայության դուռը չթակի հաճախորդը և չհայտնի տվյալ ծառայությունից օգտվելու իր ցանկությունն ու պատրաստակամությունը: Հաճախորդն ու խորհրդատուն համատեղ արտադրում են ծառայությունը, որը բխում է հաճախորդի կարիքներից:*

## 5.4. Ծառայությունների առանձնահատկությունները

Ծառայությունների առանձնահատկությունները բխում են դրանց արտադրության գործընթացից: Ֆիլիպ Հերդեր-Դորնիխի կարծիքով, որն էական դեր է ունեցել ծառայությունների տնտեսագիտության զարգացման գործում, ծառայությունների միակ դրական հատկանիշը կապված է **համաժամանակյա գործողությունների սկզբունքի** *(լատ.՝ principium uno actu)* հետ. ծառայությունների արտադրությունն ու սպառումը տեղի են ունենում միաժամանակ (Herder-Dorneich, 1994):

Չնայած հաղորդակցության ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը՝ անձին ուղղված ծառայություններում գերիշխում է համաժամանակյա գործողությունների սկզբունքը: Ծառայության արտադրությունն ու սպառումը կապված են ժամանակային ու տարածական տեսանկյունից:

Այս ծառայությունները կարող են իրականացվել միայն այն դեպքում, երբ սպառողը ներկա է: Տեխնոլոգիաների, համացանցի, տեսակապի ու ձայնակապի տարբեր միջոցների զարգացումն ու տարածումը հանգեցրել են որոշակի փոխակերպումների: Օրինակ՝ տեսակապի տարբեր միջոցների շնորհիվ կրթական, հոգեբանական, խորհրդատվական բազմաթիվ ծառայություններ տեղափոխվել են առցանց տիրույթ: Այդուհանդերձ, միևնույն ժամանակ միևնույն վիրտուալ տիրույթում ծառայություն մատուցողի ու սպառողի ներկայությունը պարտադիր է: Բացի դրանից՝ ծառայությունը չի կարող իրականանալ առանց սպառողի համագործակցության նվազագույն պատրաստակամության:

***Օրինակ 2.*** *Բժշկական ծառայությունները պահանջում են հիվանդի ներկայություն ու բժշկի խորհուրդների կատարում:*

***Օրինակ 3.*** *Վարսահարդարման ծառայությունները պահանջում են հաճախորդի մասնակցություն ու վարսերի հարդարման ժամանակ գլխի շարժումների որոշակի սահմանափակում:*

Սա նշանակում է, որ ծառայություն մատուցողը չի կարող ինքնուրույն որոշել՝ պարտադրելով ծառայության բնույթը. այն կախված է հաճախորդի ներգրավվածությունից: **Հաճախորդը դառնում է ծառայության համաարտադրող**՝ միաժամանակ հանդիսանալով ծառայության արտադրության գործընթացի սուբյեկտ ու օբյեկտ, ինչպես նաև արտադրության գործոն ու ծառայության արդյունքի մաս: Արտադրողի ու սպառողի միջև դասական տնտեսական բաժանումն այստեղ վերանում է: Սպառողը դառնում է «արտադրող-սպառող»: Այս երևույթը հետարդյունաբերական հասարակություններում բնորոշելու համար Ալվին Թոֆլերը 1980 թվականին ներմու-

ծել է «prosumer» եզրույթը՝ միացնելով անգլերեն «producer» *(արտադրող)* ու «consumer» *(սպառող)* բառերը (Toffler, 1980):

Անձին ուղղված ծառայությունների համատեքստում վերանում է նաև շուկաներում արտադրողների ու սպառողների ավանդական անանունությունը, քանի որ անձին ուղղված ծառայություններ մատուցելու ժամանակ ծառայություն մատուցողը փոխազդում է կոնկրետ անձի հետ: Իսկ սոցիալական աշխատանքի ծառայությունների համատեքստում ավելանում է նաև յուրաքանչյուր շահառուին անհատական մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը: Ծառայություն մատուցելու ու ստանալու նպատակով իրար համար սկզբունքորեն օտար արտադրողն ու սպառողը ստիպված են հարաբերություններ կառուցել (Finis Siegler, 1997, էջ 36-37):

Ծառայության որակը կախված է ոչ միայն ծառայություն մատուցողի որակավորումից, այլև հաճախորդի համագործակցությունից: Ծառայության արտադրությունը կարելի է բնորոշել որպես հաղորդակցական գործընթաց, որում ծառայություն մատուցողն ու հաճախորդը համատեղ ստեղծում են արդյունք:

Այսպիսով՝ ծառայությունների մասին խոսելիս հարկ է նշել հետևյալ առանձնահատկությունները.

1. առանց հաճախորդի ծառայության արտադրությունն անհնար է,
2. հաճախորդը հանդես է գալիս որպես համաարտադրող,
3. ծառայությունների որակը կախված է ոչ միայն ծառայություն մատուցողից, այլև հաճախորդից,

4. ծառայությունները տարբեր են, անհամասեռ. յուրաքանչյուր ծառայություն առանձնահատուկ է ու եզակի,
5. ծառայությունների որակի գնահատումը բարդ է:

### 5.5. Ծառայության որակի գնահատում

Ինչպես արդեն նշվեց, ծառայության որակի գնահատումը բարդ գործընթաց է, բայց տնտեսագիտության ու կառավարման տեսությունների շրջանակում մշակվել են ծառայությունների որակի չափման մոտեցումներ:

Յուրաքանչյուր ծառայություն ներառում է նյութական բաղադրիչներ, որոնք նույնպես ազդում են ծառայության որակի վրա: Օրինակ՝ կրթական ծառայությունների իրականացումն անհնար է առանց համապատասխան նյութատեխնիկական բազայի, ներառյալ ուսումնական տարածքը, նստարանները, գրասեղանները, գրենական պարագաները, դասագրքերը, դիդակտիկ նյութերը, սանհանգույցը, ժամանակակից պայմաններում՝ նաև համակարգիչներն ու համացանցը: Նմանապես, առողջապահական ծառայությունները պահանջում են նյութական հիմք՝ մասնագիտացված բժշկական շինություններ, շտապօգնության մեքենաներ, ախտորոշիչ ու բուժական սարքավորումներ, դեղամիջոցներ, ներարկիչներ և բժշկական այլ պարագաներ: Այդ նյութական ռեսուրսները ձևավորում են ծառայության մատուցման ֆիզիկական միջավայրը՝ ապահովելով դրա որակական մակարդակը: Այդ իսկ պատճառով ծառայությունները գնահատելիս նախևառաջ հարկ է անդրադառնալ դրա նյութական տարրերի՝ ապրանքների, որակի ցուցանիշներին:

Արիստովն առանձնացնում է ապրանքների որակի ցուցանիշների հետևյալ խմբերը.

1. **Նպատակի ցուցանիշները** սահմանում են ապրանքի օգտագործումից ստացած օգուտը, դրա գործառույթները: *Օրինակ՝ գրիչը պետք է գրի, փոշեկուլը արդյունավետորեն կլանի փոշին, մաքրի հատակը, կահույքը, ջահը լուսավորի որոշակի տարածք և այլն*:
2. **Հուսալիության ցուցանիշներն** արտացոլում են տվյալ ապրանքի որոշակի ժամանակահատվածում գործառական օգտակարությունը պահպանելու հատկությունները: Հուսալիության ցուցանիշը ներառում է անխափանության, ամրության, վերանորոգելիության ու պահպանման բնութագրերը:
   *Անխափանությունը* գնահատում է գործառական վիճակը՝ որոշակի ժամանակահատվածում առանց խափանումների պահպանելով ապրանքի հնարավորությունը:
   *Ամրությունը* բնութագրում է ապրանքի կատարած աշխատանքն առանց վերանորոգման մինչև առաջին խափանումը:
   *Վերանորոգելիությունը* բնութագրում է վերականգնման համար անհրաժեշտ ռեսուրսները՝ ծախսերն ու վերականգնման տևողությունը:
   *Պահպանումը* բնութագրում է ապրանքի օգտագործման ընթացքում դրա որակների պահպանումը:
3. **Տեխնոլոգիական ցուցանիշները** վերաբերում են կառուցվածքային-տեխնոլոգիական լուծումների արդյունավետությանը: Օրինակ՝ կան թանաքային, գելային,

ինքնահոս գրող գրիչներ և այլն: Օդորակիչները կարող են լինել շարժական, պատին ամրացվող, պատուհանային, ինվերտորային, խելացի և այլն:

4. **Էրգոնոմիկ** *(հին հուն.՝ ἔργον – աշխատանք, νόμος – օրենք)* **ցուցանիշները** ցույց են տալիս ապրանքների համարեցումը մարդկանց օրգանիզմի հիգիենիկ, անտրոպոմետրիկ[37], ֆիզիոլոգիական, հոգեֆիզիոլոգիական ու հոգեբանական առանձնահատկություններին: Էրգոնոմիկ ապրանքները նվազեցնում են հոգնածությունը, կանխում են սխալները՝ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը:

***Օրինակ 4.*** *Մանկական խաղալիքները համարեցված են երեխաների փարիքային առանձնահափկություններին:*

***Օրինակ 5.*** *Հագուսփն ու կոշիկը փարբեր չափսի են լինում, որպեսզի հարմար լինեն փարբեր մարդկանց:*

***Օրինակ 6.*** *Սեղանի ու աթոռի բարձրությունը կարելի է փոփոխել՝ կախված օգփվողի ֆիզիոլոգիական առանձնահափկություններից:*

***Օրինակ 7.*** *Գոյություն ունեն համակարգչային մկնիկներ ձախլիկների ու աջլիկների համար:*

***Օրինակ 8.*** *Հաշմանդամություն ունեցող աշխափակիցների համար հարմարեցնում են աշխափափեղերը, իսկ աշակերփների համար՝ ուսուցման գործընթացը:*

---

[37] **Անտրոպոմետրիան** *(հուն.՝ Ανθρωπος – մարդ և μετρεω – չափել)* մարդու մարմնի ու նրա առանձին մասերի չափումն է, ֆիզիկական հատկանիշների միջոցով մարդու հասակը, քաշը, շրջագծերը, տրամագծերն ու այլ չափանիշները որոշելու հետազոտական մեթոդ *(Barros, Felipe & Paulo e Silva, 2008)*:

Էրգոնոմիկ ցուցանիշները կարևոր են նաև այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են առողջապահական սարքավորումները, տրանսպորտը, արդյունաբերական մեքենաներն ու կենցաղային տեխնիկան: Էրգոնոմիկ ապրանքներն ապահովում են արտադրական գործընթացի անվտանգությունը, արդյունավետությունն ու երկարաժամկետ օգտագործումը:

5. **Էսթետիկ ցուցանիշները** բնութագրում են ապրանքի արտաքին ձևավորումը: Դրանք ներառում են ձևի արտահայտչականությունը, գունային լուծումների ներդաշնակությունը, տեսողական ընկալման համարժեքությունը: Ապրանքի էսթետիկ բնութագրերը կարևոր են ոչ միայն սպառողի հուզական գոհունակության ապահովման, այլև ապրանքի վաճառքի հաջողության տեսանկյունից: Ապրանքի էսթետիկ լուծումները նաև փոխանցում են օգտատիրոջն ապրանքի մասին անհրաժեշտ տեղեկատվությունը:
6. **Ստանդարտացման ցուցանիշները** ցույց են տալիս, թե որքանով է տվյալ ապրանքը համապատասխանում պետական կամ միջազգային պահանջներին և տեխնիկական պայմաններին *(օրինակ՝ Հայաստանի ստանդարտ (ՀՍՏ), International Organization for Standardization (ISO) և այլն):* Ստանդարտացման ցուցանիշները կարևոր են ապրանքի որակի, հուսալիության, համատեղելիության ու արտադրության արդյունավետության գնահատման համար: Դրանք նաև դյուրինացնում են ապրանքի վերահսկումը, հավաստագրումը, արտահանումն ու ներմուծումը:

***Օրինակ 9.*** *Եթե էլեկտրական թեյնիկը համապատասխանում է ՀՍՏ-ին, նշանակում է, որ այն անվտանգ է, անցել է ստուգումներ, համատեղելի է կենցաղային էլեկտրահամակարգի հետ, հեշտությամբ վերանորոգելի է:*

7. **Պատենտային ու իրավական ցուցանիշները** բնութագրում են ապրանքի իրավաբանական պաշտպանվածության աստիճանը, այսինքն՝ արդյո՞ք արտադրանքը, նրա բաղադրիչները կամ տեխնոլոգիաները պաշտպանված են հեղինակային իրավունքով, պատենտով, ապրանքանիշով կամ իրավական այլ գործիքներով:
8. **Տնտեսական ցուցանիշները** կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) *արտադրության ծավալի ցուցանիշներ*՝ մեկ աշխատողի հաշվով արտադրանքի քանակ, ընդհանուր արտադրանքի ինքնարժեք և այլն, բ) *ձեռնտու լինելու ցուցանիշներ*, որոնք արտահայտում են ապրանքի շուկայում հաջողության հնարավորությունը՝ կախված ծախսերից ու գնից, գ) *խնայողության ցուցանիշներն* արտացոլում են այն ծախսերը, որոնք տնտեսվել են արտադրության ու շահագործման ընթացքում ու նոր տեխնոլոգիաների կամ ռեսուրսների խնայողաբար օգտագործելու արդյունքում:
9. **Քննադատական ցուցանիշներն** օգտագործվում են իրավական ցուցանիշներ մշակելու համար: Դրանք ներառում են շրջակա միջավայրի պահպանության, մարդու անվտանգության ու տեխնիկական օբյեկտների նորմալ գործառման ապահովման պահանջները (Аристов, 2011, էջ 52-63):

Ներկայացված ապրանքի որակի ցուցանիշների կառուցվածքն ամբողջությամբ կիրառելի է ցանկացած ծառայության նյութական տարրերի գնահատման համար: Սակայն ծառայությունները յուրահատուկ են և բազմազան: Դա բարդացնում է ծառայության որակի նորմային ցուցանիշների մշակումը, որը հնարավոր կլինի կիրառել ցանկացած տեսակի ծառայության որակի գնահատման ժամանակ:

Այս պատճառով անհրաժեշտ է դիտարկել և՛ այն ցուցանիշները, որոնք կիրառվում են ծառայությունների որակի գնահատման ժամանակ, և՛ գնահատման գործընթացի յուրահատկությունները: Ծառայություններն ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք անդրադառնում են դրանց որակի գնահատման վրա: Այդ համատեքստում տարբերակում են ծառայությունների որակի հետևյալ ցուցանիշները.

1. **օգտագործվող նյութական տարրերի**՝ այն նյութերի ու գործիքների որակը, որոնք օգտագործվում են ծառայությունը մատուցելիս,
2. **մատուցվող ծառայության հուսալիությունը** ենթադրում է հաճախորդի վստահությունն առ այն, որ ծառայությունը կտրամադրվի և կիրականացվի պայմանավորված, նախատեսված ձևով՝ կայուն, անխափան ու կանխատեսելի:

***Օրինակ 10.*** *Բանկային ծառայությունների դեպքում ավանդի վերադարձը երաշխավորված է:*

***Օրինակ 11.*** *Ռեստորանում նույն ուտեստը պատվիրելիս հաճախորդը պետք է միևնույն համի ու որակի սնունդ ստանա:*

***Օրինակ 12.*** *Բուհում կրթական ծրագրի ու դասընթացների կայուն անցկացումը, ըստ ուսումնական պլանի, հստակ ժամկետներով, առանց չեղարկումների կամ որակի անկման, կապահովի*

*մասնագետի որակավորման համապատասխանությունը ՀՀ որակավորումների ազգային շրջանակին (ՀՀ Կառավարության N 714-Ն որոշում, 2011):*

***Օրինակ 13.*** *Բուժհաստատությունում ծառայության մատուցումը կատարվում է ըստ ժամանակացույցի, առանց վերջին պահին չեղարկումների կամ ռեսուրսների բացակայության: Նույն մասնագետին դիմելիս բուժառուն ակնկալում է ստանալ նույն որակի ծառայություններ. դեղերը կլինեն տեղում, բժշկական անձնակազմը՝ պատրաստ:*

***Օրինակ 14.*** *Հայաստանում յուրաքանչյուր նպաստառու ընտանիք ստանում է նպաստը սահմանված ժամկետում՝ մինչև յուրաքանչյուր ամսվա հինգերորդ օրը:*

3. **Ժամանակին ծառայության մատուցում:** Հատկապես սոցիալական ոլորտի ծառայությունները պահանջում են հստակ ժամանակին կատարում:

***Օրինակ 15.*** *Ընտանեկան բռնության դեպքում սոցիալական աշխատողի ժամանակավրեպ միջամտությունը կարող է անդառնալի հետևանքների բերել:*

***Օրինակ 16.*** *Հանրակրթական ծառայությունները խիստ ժամանակային կարգավորում ունեն: Մի կողմից՝ չի կարելի խախտել մատուցվող գիտելիքի հաջորդականությունը: Մյուս կողմից՝ Հայաստանում երեխան պետք է սկսի հաճախել դպրոց 6 տարեկանում. ավելի ուշ փոփոխվում են երեխայի ճանաչողական կարողությունները, և այդ ծավալի նյութը (երեք այբուբեն, հանրահաշիվ) նա դժվարությամբ կյուրացնի:*

***Օրինակ 17.*** *Հիվանդանոցային ծառայությունների մատուցումը լոգիստիկ խիստ տրամաբանություն ունի: Երբ հիվանդն ընդունվում է հիվանդանոց, նախ իրականացվում է դիմումի գրանցում, ապա՝ բուժզննում, անհրաժեշտության դեպքում՝ լաբորատոր ու ախտորոշիչ հետազոտություններ, որից հետո՝ հոսպիտալացում, բուժում և, ի վերջո, դուրսգրում: Այս ամբողջ շղթան պահանջում*

*է արդյունավետ լոգիստիկ կազմակերպում՝ ժամանակի, ռեսուրսների, տարածքի ու աշխատակազմի ճիշտ բաշխմամբ: Եթե լաբորատոր տվյալները, օրինակ, չփոխանցվեն ժամանակին, կուշանա դեղորայքի նշանակումը, ինչը կարող է ազդել հիվանդի վերականգնման արդյունավետության վրա: Բացի դրանից՝ հիվանդանոցներում պահեստային դեղորայքի, պարենի, բժշկական նյութերի ու տեխնիկական միջոցների մատակարարումը նույնպես ենթակա է ճշգրիտ պլանավորման՝ հիվանդների անվտանգությունն ու անխափան սպասարկումն ապահովելու նպատակով:*

4. **Ծառայության ամբողջականություն/ լիարժեքություն:** Ծառայությունը պետք է մատուցվի ողջ ծավալով՝ կարիքը բավարարելու համար:

***Օրինակ 18.*** *Դպրոցը չի կարող ապահովել կրթական ծառայության ամբողջականություն, եթե աշակերտին տրամադրում է միայն առարկայական դասընթացներ, բայց բացակայում են լրացուցիչ կրթությունը, դասագրքերը, ներառական աջակցությունն ու արտադասարանային միջոցառումները:*

***Օրինակ 19.*** *Եթե հղի կնոջը տրամադրվում է միայն ուլտրաձայնային հետազոտություն, բայց բացակայում են կանոնավոր հսկողությունը, խորհրդատվությունը, ծննդաբերության նախապատրաստումն ու ծնողավարման դասընթացները, ապա ծառայությունն ամբողջական չէ:*

***Օրինակ 20.*** *Եթե խոցելի ընտանիքին տրամադրվում է միայն պարենային փաթեթ, բայց չեն տրամադրվում մասնագիտական խորհրդատվություն, ֆինանսական գրագիտության ու կենցաղավարման դասընթացներ, աշխատանքի տեղավորման ու վերականգնողական ծառայություններ, ապա ծառայությունը մասնակի է: Ամբողջական սոցիալական ծառայությունը ենթադրում է կարիքի բազմակողմանի գնահատում, բազմապրոֆիլ միջամտություն (օրինակ՝ խորհրդատվություն, բնակարանային աջակցու-*

*թյուն, կրթական աջակցություն և այլն), մշփադիփարկում ու արդյունքի գնահափում:*

5. **Սոցիալ-հոգեբանական ցուցանիշներ:** Ինչպե՞ս է ծառայություն մատուցող անձնակազմը վերաբերվում հաճախորդին՝ հարգանք, անվերապահ դրական ընկալում, քաղաքավարություն, հարմարավետություն, արձագանքման արագություն, էմպատիա, ակտիվ լսում և այլն:
6. **Հասանելիություն:** Հաճախորդը պետք է կարողանա ծառայությունից օգտվել առանց լրացուցիչ խոչընդոտների կամ դժվարությունների՝ ֆիզիկական խոչընդոտների, բյուրոկրատական քաշքշուքների, անբավարար տեղեկատվության, հեռախոսային անհարմար հավելվածների ու տեխնոլոգիական այլ լուծումների:
7. **Հաղորդակցություն:** Ինչպե՞ս է ծառայություն մատուցող կազմակերպությունը տրամադրում տեղեկատվություն ծառայության ու դրանից օգտվելու մասին, որքա՞ն հեշտ և հասանելի է տեղեկատվությունը:
8. **Անվտանգություն:** Ծառայությունը չպետք է վնասի հաճախորդի կյանքը, առողջությունն ու շրջակա միջավայրը:

Այս ցուցանիշները կապված են հաճախորդի սպասումների հետ. հաճախորդն ակնկալում է ոչ միայն ծառայության որոշակի արդյունք, այլև փորձառություն, հարմարավետություն, դրական հարաբերություններ, տրամադրություն: Այդ պատճառով հաճախակի կիրառվում է **«ծառայության**

**ակնկալվող իմիջ»**[38] գնահատման մոդելը, երբ որակի գնահատումը պայմանավորված է նրանով, թե ինչքանով է ծառայությունը համապատասխանում հաճախորդի ակնկալիքներին:

Որպես կանոն, ծառայության սպառողը գիտակցաբար է ընտրում ծառայության կոնկրետ մատուցողին: Ծառայության ակնկալվող իմիջը ձևավորվում է հաճախորդի սեփական, այլ մարդկանց փորձի, գովազդի, տեղեկատվության տարբեր աղբյուրներում առկա գնահատականների ազդեցությամբ:

## 5.6. Ծառայությունների դասակարգման հիմքերը

Քանի որ ծառայությունների սահմանման հստակ ու համընդհանուր մոտեցում գոյություն չունի, տարբեր հեղինակներ փորձել են դրանք դասակարգել՝ որոշակի հստակություն մտցնելու համար:

1983 թվականին **Յուդիթ Գութհոֆն** առաջարկել է ծառայությունների դասակարգման երկու հիմք՝

1. ծառայության մատուցողի ու հաճախորդի միջև **համագործակցության բնույթը**՝ անդամակցություն, պաշտոնական հարաբերություններ, ոչ ֆորմալ հարաբերություններ:

***Օրինակ 21.*** *Ապահովագրական ծառայությունները պահանջում են անդամակցություն ու պարբերական անդամավճար: Հիվանդանոցային ծառայությունները պաշտոնական են, քանի որ սպա-*

---

[38] **Իմիջը** նպատակային ձևավորված կերպար է, որը ստեղծվում է՝ որոշակի օբյեկտի *(անձի, կազմակերպության, ապրանքի և այլն)* վերաբերյալ ընկալումների ու հանրային կարծիքի վրա ազդելու համար: Իմիջը ներառում է ինչպես օբյեկտի իրական հատկությունները, այնպես էլ նրան վերագրվող բնութագրիչները՝ ձևավորելով որոշակի տպավորություն թիրախային լսարանի մոտ *(Մելքոնյան, 2007)*:

*սարկում են՝ հիմք ընդունելով բժշկի ուղեգիրը: Իսկ ռեստորան կամ վարսավիրանոց այցելությունը ոչ ֆորմալ է:*

2. Ծառայության **մատուցման պարբերականությունը**՝ մեկամգամյա կամ պարբերական, շարունակական:

***Օրինակ 22.*** *Ոստիկանության ծառայությունները շարունակական բնույթ են կրում, նրանք պաշտպանում են հասարակական կարգուկանոնը՝ անկախ նրանից՝ քաղաքացին նրանց դիմում է, թե ոչ: Իսկ թատրոն այցելությունը մեկանգամյա ծառայություն է:*

**Կլաուս Օֆֆեի ու Յոհաննես Բերգերի** *(1984 թ.)* դասակարգումը ցույց է տալիս, որ ծառայությունները ստեղծվում են ինստիտուցիոնալ տարբեր համատեքստերում և տվյալ համատեքստից կախված՝ մատուցման տարբեր տրամաբանություններ ունեն: Նրանք տարբերակում են **պետական, մասնավոր ու ներինստիտուցիոնալ** համատեքստերը:

**Պետական ծառայությունները** ստեղծվում են քաղաքական որոշումների արդյունքում: Պետական համատեքստում մատուցվող ծառայությունները ֆինանսավորվում են պետության կողմից և համապետական ծածկույթ ունեն: **Մասնավոր ծառայություններն** արտադրվում են տնտեսավարող ձեռնարկությունների կողմից՝ հաճախորդի մասնակցությամբ և վաճառվում են շուկայում: Այս ծառայությունները ենթարկվում են շուկայի կանոններին: Մասնավոր համատեքստում մատուցվող ծառայությունները միայն նրանց համար են, ով ուզում է և կարող է դրանցից օգտվել: **Ներինստիտուցիոնալ ծառայությունները** նախատեսված չեն վաճառքի համար, այլ անմիջապես սպառվում են ծառայություն մատուցող կազմակերպության ներսում: Այս դեպքում խոսքը վերաբերում է կազմակերպության աշխատողների կողմից իրականացվող

այն աշխատանքին, որն ուղղված է արտադրության կազմակերպմանն ու իրականացմանը: Ներինստիտուցիոնալ ծառայություններից օգտվում են միայն տվյալ ինստիտուտին որոշակի առնչություն ունեցող քաղաքացիները:

***Օրինակ 23.*** *Գերատեսչական մանկապարտեզ հաճախում են միայն տվյալ գերատեսչության աշխատակիցների երեխաները:*

Եթե համեմատենք մասնավոր փաստաբանական գրասենյակում ու հանրային պաշտպանի կողմից մատուցվող փաստաբանական ծառայությունները, դրանց բովանդակությունը գրեթե նույնն է: Տարբեր են ծառայություն մատուցող մասնագետի եկամտի աղբյուրները: Մասնավոր փաստաբանական գրասենյակի դեպքում մասնագետը վճարվում է ուղիղ հաճախորդի կողմից, իսկ հանրային պաշտպանը վարձատրվում է պետական բյուջեից:

Երկու դեպքում էլ խորհրդատվությունը պահանջում է հաճախորդի ներկայություն, համագործակցություն, ինչպես նաև նվազագույն չափով կանխատեսելիություն: Ծառայությունը հնարավոր չէ պահեստավորել. այն իրականացվում է սպառման պահին:

**Պետեր Գրոսսը** *(1983 թ.)* առաջարկում է ծառայությունները դասակարգելու այլ երկու հիմք՝

1. անձին ու իրին ուղղված ծառայություններ,
2. ուղղակի և անուղղակի ծառայություններ *(տե՛ս Նկար 10):*




**Նկար 10.** Ծառայությունների դասակարգումն ըստ Պ. Գրոսսի

***Օրինակ 24.*** *Անձին ուղղված ծառայություններ են բժշկի, իրավաբանի, հոգեբանի, մանկավարժի, սոցիալական աշխատողի և այլ մասնագետների ծառայությունները, որոնք աշխատում են մարդու հետ: Իրին ուղղված ծառայություններ են ավտոմեքենայի, համակարգչի, կոշիկի և այլ իրերի նորոգումը: Եթե այդ ծառայությունները մատուցողին ընտրում է հաճախորդը, և ինքն է վճարում դրանց համար, ապա դրանք ուղղակի ծառայություններ են: Իսկ եթե ծառայության ստացումը միջնորդավորված է որևէ կազմակերպության կողմից, ապա այն անուղղակի է: Օրինակ, երբ ԵՊՀ դասախոսը մասնակցում է ԵՊՀ-ի կողմից ֆինանսավորվող որակավորման բարձրացման դասընթացին, դա անձին ուղղված անուղղակի ծառայություն է:*

**Ջոնաթան Գերշունին** *(1984 թ.)* ցույց է տալիս, որ ծառայությունները հնարավոր է տեղավորել չորս տնտեսագիտական տարբեր չափումներում, սակայն դրանք միաժամանակ պետք է դիտարկվեն բոլոր մակարդակներում՝

- որոշակի մասնագիտություն կամ գործունեություն,
- տնտեսության որևէ ոլորտ,
- բուն մատուցվող ծառայություն,

- գործառույթ, կարիք կամ պահանջմունք, որոնց բավարարմանն է ուղղված ծառայությունը:

Ծառայության այս բազմաչափ բնույթը նա բացատրում է առողջապահական ոլորտի օրինակով:

> ***Օրինակ 25.*** *Հիվանդանոցում (տնտեսության ոլորտ) բժիշկը (մասնագիտություն) ախտորոշում է (ծառայություն) հիվանդին բուժելու (գործառույթ) նպատակով (Gershuni, 1984):*

Վերոնշյալ հեղինակները ծառայությունները դասակարգում են ըստ դրանց ծագման կամ օգտագործման եղանակի: Իսկ **Դիթեր Շեֆերն** *(1981 թ.)* ընդգծում է սոցիալական ծառայությունների առանձնահատուկ որակը: Նա դասակարգում է ծառայությունները՝ հիմնվելով այն կարիքների վրա, որոնց բավարարմանը դրանք ուղղված են: Շեֆերի կարծիքով սոցիալական ծառայությունների կողմից բավարարվող պահանջմունքները բացառիկ դեպքերում են ի հայտ գալիս: Նորմալ պայմաններում դրանք գոյություն չունեն կամ ձգտում են զրոյի: *Օրինակ՝ լիովին առողջ մարդը բժշկական ծառայությունների կարիք չունի, ապահովված ընտանիքն ընտանեկան նպաստի կարիք չունի և այլն:* Կարիքն ի հայտ է գալիս, երբ որևէ մարդ կամ ընտանիք վնասվածք է ստանում կամ կորուստ է ունենում. կարիքը ձևավորվում է որպես հետևանք (Schäfer, 1981):

Շեֆերն առաջարկում է սոցիալական ծառայությունները դասակարգել ըստ անձի վրա ազդեցության ինտենսիվության՝

1. խորհրդատվություն,
2. միջամտություն,
3. բուժում,

4. խնամք (Schäfer, 1981):

Անձի վրա ամենաինտենսիվ ազդեցությունն այս դասակարգման մեջ ունի խնամքը:

**Խորհրդատվությունը** *(counseling)* նպատակ ունի աջակցելու անհատին կամ ընտանիքին՝ հասկանալու, վերլուծելու ու լուծումներ գտնելու իրենց սոցիալական, հոգեբանական կամ կենսական հիմնախնդիրների համար: Ծառայության այս տեսակը պակաս ինտենսիվ է, քանի որ ներառում է խոսակցական, խորհրդատվական ու ուղղորդող աշխատանք՝ առանց ֆիզիկական կամ միջավայրային ուղղակի ներգործության:

**Միջամտությունը** *(intervention)* նպատակ ունի կանխելու կամ դադարեցնելու խնդրի խորացումը ուղղակի ներգործությամբ կամ գործողություններով: Այն ավելի ինտենսիվ է, քանի որ ներառում է ոչ միայն խորհրդատվություն, այլև միջնորդում, բնաիրային ու նյութական այլ աջակցություն, կրթական, առողջապահական ու սոցիալական այլ համակարգերի ակտիվացում:

**Բուժումն** *(treatment)* ուղղված է արդեն առկա հոգեբանական, ֆիզիկական կամ սոցիալական խնդիրների հաղթահարմանն ու վերականգնմանը: Այն ավելի բարձր ինտենսիվության ծառայություն է, քանի որ հաճախ պահանջում է մասնագիտական բժշկական, հոգեբանական կամ թերապևտիկ միջամտություն:

**Խնամքն** *(care)* ապահովում է անձի երկարաժամկետ կամ շարունակական բարեկեցությունը, երբ նրա ինքնուրույնությունը սահմանափակ է: Այդ իսկ պատճառով խնամքն ամենաբարձր ինտենսիվության ծառայություն է, որը ներա-

ռում է ֆիզիկական, հոգեբանական ու սոցիալական աջակցություն՝ հաճախ ամբողջական ու շարունակական (Finis Siegler, 1997, էջ 30), *օրինակ՝ փարեցների խնամք կամ հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա աջակցություն ու խնամք:*

## 5.7. Սոցիալական աշխատանքի ծառայությունների պետական, համայնքային ու ՀԿ համատեքստը Հայաստանում

Կարևոր է տարբերել Հայաստանում մատուցվող ծառայությունները՝ ըստ հետևյալ երեք համատեքստերի.

1. **պետական սոցիալական ծառայություններ**, որոնք մատուցվում են հանրապետության ամբողջ տարածքում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (ՀՀ ԱՍՀՆ) Միասնական սոցիալական ծառայության 49 տարածքային կենտրոնների (ՄՍԾ ՏԿ) ու նույն նախարարության 17 պետական ոչ առևտրային կազմակերպությունների (ՊՈԱԿ) կողմից: ՄՍԾ-ն միավորում է սոցիալական պաշտպանության 4 հիմնական ուղղությունները՝ սոցիալական աջակցություն, սոցիալական ապահովություն, բժշկասոցիալական փորձաքննություն ու զբաղվածություն (ՀՀ ԱՍՀՆ ՄՍԾ, 2025): Դրանք թիրախավորում են հետևյալ խոցելի խմբերի ներկայացուցիչներին՝ անապահով ընտանիքներ ու աղքատներ, տարեցներ ու կենսաթոշակառուներ, հաշմանդամություն ունեցող անձինք ու աշխատանք փնտրողներ: ՀՀ ԱՍՀՆ 17 ՊՈԱԿ-ները ներառում են մանկատներ, երեխայի ու ընտանիքի

աջակցության կենտրոններ, խնամքի կենտրոններ ու օթևաններ (ՀՀ ԱՍՀՆ, 2025)։

2. **ՀՀ համայնքներում** սոցիալական ծառայությունների մատչելիության ու հասցեականության ապահովման համար։ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին ՀՀ օրենքի 47-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ղեկավարի սոցիալական պաշտպանության բնագավառում սեփական լիազորություններն իրականացնելու համար 5000-ից ավել բնակիչ ունեցող համայնքների աշխատակազմում ստեղծվել են **համայնքի սոցիալական աշխատողի հաստիքներ**։ Համայնքի սոցիալական աշխատողի հիմնական իրավունքներն ու պարտականությունները սահմանված են «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքով։
3. **Հասարակական կազմակերպությունների (ՀԿ) կողմից մատուցվող սոցիալական ծառայություններ**։ Հայաստանում ՀԿ-ները մատուցում են ծառայություններ ամենատարբեր ոլորտներում՝ երեխաների պաշտպանություն, հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնում, բռնության ու թրաֆիքինգի կանխարգելում, տարեցների խնամք, փախստականների պաշտպանություն, խոցելի խմբերի իրավունքների ադվոկացիա[39] և այլն։ ՀԿ-ները ֆինանսավորվում են տարբեր

[39] **Ադվոկացիան** սոցիալական աշխատանքում գործողությունների ամբողջություն է, որի նպատակն է աջակցել, պաշտպանել կամ խթանել անհատի կամ սոցիալական որևէ խմբի իրավունքները կամ շահերը։ Այն

աղբյուրներից: Ֆինանսավորման մեծ մասն ապահովում են միջազգային դոնոր կազմակերպությունների ծրագրերը, սփյուռքի ու եկեղեցու բարեգործական հիմնադրամները: Վերջին տարիներին ավելանում է ՀԿ-ների պետական ֆինանսավորումը պատվիրակված ծառայությունների տեսքով: Պետությունը պատվիրակում է ՀԿ-ներին ընտանեկան բռնության կանխարգելման, երեխաների ցերեկային խնամքի, տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ու տնային սպասարկման ծառայությունները:

## 5.8. Կանխարգելումն ու միջամտությունը որպես սոցիալական աշխատանքի ծառայություններ

Սոցիալական աշխատանքի ծառայությունների ևս մեկ կարևոր դասակարգում տարբերակում է **կանխարգելումն** ու **միջամտությունը**: Թեև դրանք տարբեր գործողություններ են ենթադրում, բայց խիստ փոխկապակցված են, քանի որ տարբեր ձևով արձագանքում են սոցիալական միևնույն հիմնախնդիրներին:

- **Կանխարգելումն** ուղղված է ռիսկերի նվազեցմանն ու բարօրության խթանմանը՝ խնդիրների առաջացումը

ուղղված է որոշում կայացնողների, քաղաքականություն մշակողների կամ հասարակական կարծիքի վրա ազդեցություն գործելուն՝ սոցիալական փոփոխություններ իրականացնելու ու թիրախային խմբի բարեկեցությունը բարձրացնելու համար *(NASW, 2021)*:

կանխելու նպատակով: Այն պրոակտիվ[40] գործողություն է (Santana-Hernández, 2021):

- **Միջամտությունը** նպատակ ունի արձագանքելու արդեն իսկ առկա խնդիրներին՝ նպատակային գործողությունների միջոցով իրավիճակը կարգավորելու նպատակով (Scottish Government, 2005): Միջամտությունը ռեակտիվ գործողություն է:

Այս երկու մոտեցումներն էլ կարևոր են դրական արդյունքների խթանման ու շահառուների կյանքի որակի բարձրացման համար:

Սոցիալական աշխատանքում տարբերում են կանխարգելման երեք մակարդակ:

- **Առաջնային կանխարգելումը** նպատակ ունի ամբողջ բնակչության մակարդակով կանխելու հիմնախնդիրների առաջացումը և տարածումը բարեկեցության մակարդակի կայունացման ու ռիսկի գործոնների նվազեցման միջոցով:

***Օրինակ 26.*** *Երեխա սպասող բոլոր ծնողներին պոլիկլինիկաներում առաջարկում են դրական ծնողավարման դասընթացներ՝ երեխաների նկատմամբ բռնության կանխարգելման նպատակով:*

- **Երկրորդային կանխարգելումը** կիրառվում է հիմնախնդրի խորացումը կանխելու համար այն անհատ-

---

[40] **Պրոակտիվ** *(proactive)* կոչվում է այն գործելակերպը, որը ներառում է ապագա կարիքները, հիմնախնդիրները կամ փոփոխությունները կանխատեսելու ու մինչև դրանց առաջացումը կարգավորելու պատրաստակամությունը՝ ի տարբերություն արդեն տեղի ունեցած իրադարձություններին արձագանքելու, որոնք ռեակտիվ *(reactive)* են կոչվում *(Bateman & Crant, 1993)*:

ների կամ խմբերի հետ աշխատելիս, որոնք ռիսկային գոտում են:

***Օրինակ 27.*** *Տրավմայի ենթարկված դեռահասներին տրամադրվում է սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն՝ դպրոցից դուրս մնալու կամ իրավախախտ վարքագծի զարգացման ռիսկը կանխելու նպատակով:*

- **Երրորդային կանխարգելումն** ուղղված է արդեն առկա հիմնախնդիրների հետևանքների մեղմմանն ու երկրորդային բարդությունների կանխարգելմանը վերականգնման ու շարունակական աջակցության միջոցով (Bhushan et al., 2020):

***Օրինակ 28.*** *Ընտանեկան բռնության ենթարկված անձին ապաստարանում կազմակերպում են սոցիալ-հոգեբանական երկարաժամկետ աջակցություն՝ նպաստելով տրավմայի հաղթահարմանը, նոր հմտությունների ձևավորմանն ու հասարակություն վերաինտեգրմանը:*

**Միջամտության** նպատակները սոցիալական աշխատանքում հետևյալն են՝

1. Առկա հիմնախնդրին արձագանքումը, որը ենթադրում է աջակցության ու ռեսուրսների տրամադրում այն անհատներին, ընտանիքներին կամ համայնքներին, որոնք արդեն իսկ հայտնվել են կյանքի դժվարին իրավիճակում:
2. Ուղիղ ծառայությունների մատուցում խորհրդատվության, դեպքի վարման, շահերի պաշտպանության և այլ աջակցության ձևաչափով՝ օգնելու շահառուներին հաղթահարել դժվարություններն ու հասնել իրենց նպատակներին:

3. Վերականգնում ու դրական փոփոխությունների խթանում, ինչն օգնում է հաճախորդներին հաղթահարել անցյալի տրավմաները, զարգացնել դիմակայունություն ու կառուցել դրական ապագա (Baker, 2013):

Կանխարգելումը նպատակ ունի խոչընդոտելու հիմնախնդիրների առաջացումը, մինչդեռ միջամտությունը վերաբերում է արդեն առկա խնդիրների լուծմանը: Միևնույն ժամանակ սոցիալական աշխատանքի ցանկացած միջամտություն պարունակում է կանխարգելման տարրեր. սոցիալական աշխատողը կանխում է հետագա բացասական զարգացումները, վերականգնում է անձի կարգավիճակը՝ խթանելով դրական զարգացումներ: Սոցիալական աշխատանքի արդյունավետ մոտեցումը պահանջում է կանխարգելման ու միջամտության համադրություն:

Մի շարք գիտնականներ կանխարգելումը համարում են ծախսարդյունավետ՝ համեմատած միջամտության հետ, քանի որ՝

- կանխարգելումը կիրառվում է հիմնախնդրի առաջացումից առաջ, իսկ միջամտությունը՝ այն ժամանակ, երբ հիմնախնդիրն արդեն սրվել է կամ քրոնիկ բնույթ է ստացել,
- կանխարգելման ժամանակ հիմնախնդիրը թեթև է արտահայտված կամ միջին, իսկ միջամտության ժամանակ՝ արդեն ծանր ու խորը,
- կանխարգելման միջոցառումների տևողությունը կարճաժամկետ է, իսկ միջամտության պարագայում՝ երկարաժամկետ,

- կանխարգելումն ավելի լայն հանրային ազդեցություն ունի, քան միջամտությունը: Օրինակ՝ կանխարգելումը կրճատում է հանցագործությունների քանակը, իսկ միջամտությունը փորձում է փոխել կոնկրետ իրավախախտի վարքն ու փոխհատուցել կոնկրետ հանցագործության վնասը,
- կանխարգելման պարագայում մեկ անձի հաշվով ծախսն ավելի ցածր է, քան միջամտության պարագայում:

Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ կանխարգելումը բազմաթիվ ոլորտներում *(երեխաների պաշտպանություն, ընտանեկան բռնության կանխում, հանցավորության նվազեցում և այլն)* 3-10 անգամ ավելի ծախսարդյունավետ է, քան հետագա միջամտությունները: Երկարաժամկետ խնայողությունները ձևավորվում են միջամտության ծառայությունների թվի կրճատման հաշվին *(օրինակ՝ շտապօգնության կանչերի կրճատում, ազատազրկման դեպքերի նվազում, գործազրկության ցուցանիշի նվազում և այլն)*: Կանխարգելման միջոցառումները նպաստում են կրթական, առողջապահական ու զբաղվածության ոլորտների արդյունքների բարելավմանը (Fang, Brown, Florence & Mercy, 2012; Karoly, Kilburn & Cannon, 2005; Washington State Institute for Public Policy, 2004):

Հարկ է հաշվի առնել նաև մի շարք մարտահրավերներ: Կանխարգելման օգուտները հաճախ ուշ են երևան գալիս, մինչդեռ ծախսերը պահանջվում են անմիջապես, ինչը կարող է խոչընդոտել ներդրումները: Բացի դրանից՝ դժվար է չափել այն, ինչը տեղի չի ունեցել, այսպես կոչված՝ «չիրադարձու-

թյունը» *(non-event)*, ինչը բարդացնում է կանխարգելման արդյունավետության ապացուցումը:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Տեղեկատվությունը՝ որպես արտադրության գործոն, ինչպե՞ս է փոփոխել ու ազդել ապրանքների ու ծառայությունների արտադրության վրա:
2. Ինչպե՞ս է ծառայությունների արտադրության գործընթացը տարբերվում ապրանքների արտադրությունից, և ինչպե՞ս է դա պայմանավորում ծառայության մատուցման առանձնահատկությունները:
3. Բացատրե՛ք «prosumer» եզրույթի իմաստն ու կիրառումը ծառայությունների համատեքստում:
4. Ինչո՞ւ է Շեֆերի սոցիալական ծառայությունների դասակարգման մեջ խնամքը դիտարկվում որպես ամենաինտենսիվ ազդեցություն ունեցող:

**Հանձնարարություններ**

1. Գնահատե՛ք որևէ ապրանք՝ օգտվելով ապրանքի որակական ցուցանիշներից:
2. Գնահատե՛ք որևէ ծառայություն՝ օգտվելով ծառայության որակական ցուցանիշներից:

**Խմբային բանավեճեր**

Թեմա 1. «Ծախսարդյունավետության տեսանկյունից կանխարգելումն առավել կարևոր է»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթետիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

Թեմա 2. «Պետությունը պետք է պատվիրակի սոցիալական ծառայությունների մեծ մասը ՀԿ-ներին»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթետիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 6. ՇԱՀՈՒՅԹ ՀԵՏԱՊՆԴՈՂ ՈՒ ՇԱՀՈՒՅԹ ՉՀԵՏԱՊՆԴՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 6.1. Շահույթ հետապնդող կազմակերպություններ

Ապրանքներն ու ծառայություններն արտադրվում են և՛ շահույթ հետապնդող *(profit organizations – PO)*, և՛ շահույթ չհետապնդող կազմակերպություններում *(non-profit organizations – NPO)*: Շահույթ հետապնդող կազմակերպությունների (ՇՀԿ) առաջնային նպատակը եկամտի ստեղծումն է տնտեսական ոլորտում: Դրանք մրցում են այլ ընկերությունների հետ՝ սպառողների ուշադրությունն ու հավանությունը գրավելու համար: Որքան ավելի լավ են դրանք կարողանում արտադրվող ապրանքներն ու ծառայությունները համապատասխանեցնել սպառողների կարիքներին ու ներկայացնել շուկայում, ավելի բարձր վաճառքի արդյունքներ են ունենում:

Մասնավոր կազմակերպությունների շահույթի ստացման համար նրանք պետք է վաճառեն իրենց ապրանքներն ու ծառայություններն արտադրության ինքնարժեքը գերազանցող գնով: Նման կազմակերպությունները կարող են երկարաժամկետ գործել շուկայում միայն այն դեպքում, երբ կարողանում են նվազեցնել իրենց արտադրական ծախսերն ու հնարավորինս էժան արտադրել: Թե որ ապրանքը կամ ծառայությունը հնարավորություն կտա հասնելու այս նպատակին, երկրորդական հարց է ՇՀԿ-ի համար: Գլխավորն այն է, որ ներդրված կապիտալը շահույթ բերի (Samuelson & Norhaus, 2010): Այդ իսկ պատճառով ՇՀԿ-ն կարելի է հանդիպել բոլոր ոլորտներում, ներառյալ առողջապահությունը, կրթությունն ու սոցիալական ոլորտը:

## 6.2. Շահույթ չհետապնդող կազմակերպություններ

Շահույթ չհետապնդող կազմակերպությունների (ՇչՀԿ) գործունեության նպատակն է սպառողների կարիքների բավարարման համար որոշակի ապրանքների ու ծառայությունների արտադրությունը:

Քանի որ ՇչՀԿ առաջնային նպատակն ապրանքների ու ծառայությունների պահանջարկի բավարարումն է, դրանք նաև բնորոշվում են որպես պահանջարկին ուղղված տնտեսավարող կազմակերպություններ: ՇչՀԿ-ները գործում են հիմնականում ծառայությունների ոլորտում և շահույթ ստանալու նպատակ չեն հետապնդում:

ՇչՀԿ բազմաթիվ անդամներ միաժամանակ նաև շահառուներ են. նրանք հիմնվում են նույնացման սկզբունքի վրա, ինչպես, օրինակ, կոոպերատիվները կամ ինքնօգնության կազմակերպությունները: Դրանք ցույց են տալիս, որ հնարավոր է միավորել մասնավոր շահն ու հասարակական նպատակները:

ՇչՀԿ-ին բնորոշ են նաև հետևյալ բնութագրիչները. ՇչՀԿ ապրանքներն ու ծառայությունները, որպես կանոն, չեն վաճառվում շուկայում, չունեն շուկայական գին, ապրանքներ ու ծառայություններ ստացողները սովորաբար չեն վճարում դրանց համար: Բացակայում է փոխանակման ուղիղ գործընթացը: ՇչՀԿ որոշ ծառայություններ մատուցվում են կամավորների կողմից: Բազմաթիվ ՇչՀԿ-ներ անդամակցային կառուցվածք ունեն. ծառայությունները մատուցվում են, որպես կանոն, հենց անդամներին, ընտրված խոցելի խմբի ներկայացուցիչներին կամ ընդհանուր առմամբ հասարակությանը (Finis Siegler, 1997, էջ 38-40):

ՇչՀԿ-ն անվանում են նաև հասարակական կամ երրորդ սեկտոր պետությունից և շուկայից հետո: Երրորդ սեկտորում ներքին դրդապատճառներն ու բարոյական արժեքները կարևորագույն դեր են կատարում, եթե ոչ առաջնային: Շաադն առաջարկում է անվանել այս սեկտորը «բարոյական սեկտոր» (Schaad, 1995):

Հայաստանյան իրականության համար ՇչՀԿ-ները համեմատաբար նոր երևույթ են: Դրանց մեծամասնությունը իրավական տեսանկյունից հասարակական կազմակերպության (ՀԿ) կարգավիճակ ունեն: 1980-ական թվականների վերջին ու 1990-ական թվականների սկզբին քաղաքացիական հասարակության գաղափարը գրավիչ էր հետսոցիալիստական պետությունների համար, որոնք փորձում էին վերականգնվել պետական սոցիալիզմի ծայրահեղություններից հետո (Paturyan & Gevorgyan, 2021): Դա մի ժամանակաշրջան էր, երբ հայերը հավատում էին քաղաքացիական հասարակության իդեալներին ու Խորհրդային համակարգի ժողովրդավարացման հնարավորությանը: 1991 թ. անկախացումից հետո, երբ մի շարք միջազգային մարդասիրական կազմակերպություններ, ինչպիսիք են «CARE», «Oxfam», «Save the Children» և այլ կազմակերպություններ, հիմք դրեցին իրենց մշտական առաքելություններին Հայաստանում և սկսեցին իրականացնել երկարաժամկետ ծրագրեր: Հետխորհրդային վաղ շրջանում տրանսազգային, միջազգային, օտարերկրյա, ինչպես նաև սփյուռքի կազմակերպությունների քանակը զգալիորեն ավելացավ: Միջազգային կազմակերպություններն սկսեցին դրամաշնորհներ տրամադրել տեղական ՀԿ-ներին քաղաքացիական հասարակության ու ժողովրդա-

վարացման խթանման նպատակով: Արդյունքում մինչև 1997 թվականը ՀՀ արդարադատության նախարարությունը գրանցել էր 2000-ից ավելի ՀԿ:

1994 թվականին Երևանում ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության *(United States Agency for International Development – USAID)* ֆինանսավորմամբ բացված «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը տրամադրում էր ՀԿ ստեղծելու ձևաչափ, ինչպես նաև սովորեցնում էր ինչպես գտնել ֆինանսավորում ու դիմել դոնորներին: Նրանք սկսում էին յուրացնել «ՀԿ լեզուն», մասնավորապես ինչպես ներկայացնել իրենց կազմակերպությունը, ծրագրերն ու նպատակները (Ishkanian, 2003):

Այսպիսով՝ ՀԿ-ները Հայաստանում դարձան սոցիալական ծառայություններ մատուցող ու խոցելի խմբերի շահերը պաշտպանող կարևորագույն օղակներ:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Որո՞նք են ՇՀԿ ու ՇչՀԿ հիմնական տարբերությունները:
2. Ինչո՞ւ են ՀԿ-ներն անվանում նաև «երրորդ սեկտոր» կամ «բարոյական սեկտոր»:
3. Ի՞նչ միջազգային կազմակերպություններ են գործում Հայաստանում: Վերլուծե՛ք դրանց առաքելությունը:

**Հանձնարարություններ**

1. Գծե՛ք սխեմա, որը կցուցադրի շահույթի ստացման գործընթացը ՇՀԿ-ում և արժեքի ստեղծման գործընթացը ՇչՀԿ-ում:
2. Վերլուծե՛ք Ձեր համայնքում գործող ՇչՀԿ-ներ՝ ներկայացնելով նրանց գործունեության ոլորտը, նպատակներն ու ազդեցությունը: Ներկայացրե՛ք կարճ (1 էջ) առաջարկություն, թե ինչպես կարող է ՇչՀԿ-ն իր գործունեությունը դարձնել ավելի արդյունավետ՝ պահպանելով շահույթ չհետապնդող կարգավիճակը:

**Խմբային բանավեճեր**

Թեմա 1. «Պետությունը պետք է ֆինանսավորի ՇչՀԿ- ները, եթե անգամ դրանք արդեն ունեն միջազգային դրամաշնորհներ»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթետիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

Թեմա 2. «Երրորդ սեկտորը (ՇչՀԿ) կարո՞ղ է լիարժեքորեն փոխարինել պետությանը սոցիալական ծառայություններ մատուցելու հարցում»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթետիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 7. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

## 7.1. Պետական բյուջե

2023 թվականի դրությամբ ՀՀ պետական բյուջեից սոցիալական նպաստների ու կենսաթոշակների վրա ծախսվել է 715 553.8 մլն ՀՀ դրամ, ինչը կազմում է ՀՀ համախմբված բյուջեի ծախսերի 27%-ը (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024, էջ 464):

Պետական բյուջեն[41] սոցիալական ոլորտի ֆինանսավորման հիմնական ու անփոխարինելի աղբյուրն է, որն ապահովում է սոցիալական քաղաքականության[42] իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները:

Սոցիալական ոլորտը *(կրթություն, առողջապահություն, սոցիալական պաշտպանություն, բնակարանային ապահովում, կենսաթոշակային համակարգ և այլն)* պահանջում է կայուն, կանխատեսելի ու նպատակային ֆինանսավորում, որի հիմնական աղբյուրը պետական բյուջեն է:

---

[41] **Պետական բյուջեն** երկրի ֆինանսական հիմնական փաստաթուղթն է, որով կարգավորվում են եկամուտների (հարկեր, տուրքեր, մաքսատուրքեր և այլն) ու ծախսերի (սոցիալական ծրագրեր, կրթություն, պաշտպանություն և այլն) բաշխումը *(Samuelson & Nordhaus, 2010)*:

[42] **Սոցիալական քաղաքականությունը** հանրային հիմնախնդիրների կարգավորման կոլեկտիվ ռազմավարությունն է, պետության կողմից իրականացվող գործողությունների, սկզբունքների ու օրենքների ամբողջությունը, որը նպատակ ունի խթանելու հասարակական բարեկեցությունը, հաղթահարելու սոցիալական անհավասարությունները, ապահովելու աջակցության համակարգեր անհատների ու խմբերի համար: Այն, հիմնվելով քաղաքական գաղափարախոսության վրա, ապահովում է հասարակության մեջ ռեսուրսների վերաբաշխումը՝ ազդելով սոցիալական շերտավորման վրա *(Alcock & May, 2014; Esping-Andersen, 1990)*:

Սոցիալական ծախսերի իրականացման համար բյուջեի եկամուտները պետք է լինեն բավարար ու կայուն: Դրանք հիմնականում ձևավորվում են՝

- հարկային մուտքերի *(եկամտային հարկ*[43]*, ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ)*[44]*, շահութահարկ*[45]*)*,
- արտաքին ֆինանսավորման *(վարկեր*[46]*, դրամաշնորհներ*[47]*)*,

---

[43] **Եկամտային հարկը** հարկ վճարողների կողմից օրենքով սահմանված կարգով, չափով ու ժամկետներում ՀՀ պետական բյուջե վճարվող ուղղակի հարկ է, որը գանձվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց ստացած եկամուտներից *(աշխատավարձ, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված շահույթ, վարձավճարներ, շահաբաժիններ և այլն)*՝ պետության բյուջեի եկամուտները ձևավորելու նպատակով: Այն կարող է լինել պրոգրեսիվ, ամրագրված կամ համահարթեցված դրույքաչափով՝ կախված երկրի հարկային համակարգից *(«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը, 2010)*:

[44] **ԱԱՀ-ն** անուղղակի հարկ է, որը վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, ՀՀ տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: ՀՀ-ում ԱԱՀ ստանդարտ դրույքաչափը 20 % է, և այն հաշվարկվում է վաճառքի գնի մեջ *(«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենք, 1997)*:

[45] **Շահութահարկն** ուղղակի հարկ է, որը հաշվարկվում և վճարվում է կազմակերպության համախառն եկամուտից հանած թույլատրելի ծախսերի ու այլ նվազեցումների արդյունքում ստացված շահույթից, և որի տոկոսադրույքը, հաշվարկման կարգն ու վճարման ժամկետները սահմանվում են պետության հարկային օրենսգրքով *(«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը, 1997)*:

[46] **Վարկը** ֆինանսական հարաբերություն է, որի շրջանակում վարկատուն *(օրինակ՝ բանկը կամ վարկային կազմակերպությունը)* պայմանագրով տրամադրում է վարկառուին որոշակի գումար կամ նյութական արժեքներ, իսկ վարկառուն պարտավորվում է դրանք վերադարձնել սահմանված ժամկետում ու պայմաններով, հաճախ՝ տոկոսային վճարով *(ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, 1998)*:

- պետական սեփականության կառավարումից ստացված եկամուտների միջոցով (Zhao, Yue, Liu & Shan, 2024):

Բյուջեի համահավասարակշռվածությունը կարևոր նախապայման է սոցիալական ծառայությունների շարունակականության համար: Ֆինանսական ճգնաժամերի կամ հարկային պակասուրդների դեպքում առաջին հերթին տուժում են սոցիալական ծրագրերը:

Բյուջետային ծախսերի սոցիալական ուղղվածությունն ազդում է սոցիալական անհավասարության, խոցելի խմբերի ինտեգրման ու պաշտպանության, զբաղվածության աճի, պետության նկատմամբ հանրային վստահության վրա:

Սոցիալական ոլորտի ֆինանսավորումը հաճախ կանգնում է մի շարք խնդիրների առջև.

- սահմանափակ բյուջետային հնարավորություններ, որոնք չեն բավարարում սոցիալական հիմնախնդիրների արդյունավետ կարգավորման համար,
- ոչ արդյունավետ ծախսեր,
- թիրախավորման թերություններ՝ **(ա) ներառման սխալներ**, երբ սոցիալական միջոցառումներում ներառվում են նրանք, ովքեր իրականում դրա կարիքը չունեն, **(բ) բացառման սխալներ**, երբ սոցիալական միջոցառումներում չեն ներառվում նրանք, ովքեր իրականում դրա կարիքն ունեն (Fisk & Haase 2007),

[47] **Դրամաշնորհը** գումարային միջոց է, որը տրամադրվում է պետության կամ դոնոր կազմակերպության կողմից անհատին կամ կազմակերպությանը հատուկ նպատակով *(Cambridge Dictionary,* 2025*)*:

- ծրագրերի կրկնություն, վերածածկ կամ ներդաշնակության բացակայություն, հակասություն:

Պետական բյուջեն սոցիալական քաղաքականության իրականացման ողնաշարն է. սոցիալական պաշտպանության ամրապնդումն ու հասարակական բարեկեցության բարձրացումն անմիջականորեն պայմանավորված են պետության բյուջետային հնարավորություններով, քաղաքական կամքով ու կառավարման արդյունավետությամբ:

## 7.2. Համայնքային (տեղական) բյուջե

Համայնքային կամ տեղական իշխանություններն ավելի մոտ են կանգնած բնակիչներին, ավելի լավ են պատկերացնում կարիքները՝ հանդիսանալով սոցիալական քաղաքականության իրականացնողը տեղական մակարդակում: Եթե կենտրոնական իշխանությունները սահմանում են սոցիալական պաշտպանության, կրթության ու առողջապահության հիմնական շրջանակային կարգավորումները, ապա տեղական իշխանությունները հիմնականում պատասխանատվություն են կրում ոլորտային ծառայությունների արդյունավետ ու նպատակային մատուցման համար:

Սոցիալական քաղաքականության ֆինանսավորման ապակենտրոնացումը հնարավորություն է տալիս համայնքներին.

- մշակելու ծառայությունները՝ հաշվի առնելով ժողովրդագրական ու տարածաշրջանային առանձնահատկությունները,

- արագ արձագանքելու արտակարգ իրավիճակներին *(օրինակ՝ հրդեհներ, ջրհեղեղներ, բնակարանային աջակցություն և այլն)*,
- ապահովելու քաղաքացիական մասնակցությունը սոցիալական քաղաքականության պլանավորման ու մշտադիտարկման գործընթացում (Smoke, 2015)։

Տեղական բյուջեից հիմնականում ֆինանսավորվում կամ համաֆինանսավորվում են՝

- մանկապարտեզներն ու կրթական այլ հաստատությունները,
- առողջության առաջնային պահպանման կենտրոններն ու ամբուլատորիաները,
- համայնքային սոցիալական ծառայությունները,
- բնակարանային ու կոմունալ վարձավճարների սուբսիդիաները խոցելի խմբերի համար,
- տեղական զբաղվածության ծրագրերն ու վերապատրաստման նախաձեռնությունները,
- տարեցների ու հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ու աջակցության ծրագրերը։

Սոցիալական ոլորտում իրենց լիազորությունները իրականացնելու համար տեղական իշխանությունները հիմնվում են՝

- պետական բյուջեից փոխանցումների վրա *(սուբվենցիաներ*[48]*, սուբսիդիաներ, համահարթեցման դոտացիաներ*[49]*)*,

[48] **Սուբվենցիան** *(լատ.՝ subventio – աջակցություն, օժանդակություն)* պետական բյուջեից համայնքների կամ մարզային բյուջեներին տրվող նպատակային դրամաշնորհ է, որն օգտագործվում է հստակ ծրագրի կամ

- տեղական հարկերի ու տուրքերի վրա *(օրինակ՝ գույքահարկ, հողի հարկ),*
- համայնքային սեփականության կառավարումից ստացած եկամուտների վրա,
- դոնորների կամ միջազգային կազմակերպությունների աջակցության վրա (Shah, 2007):

Տեղական բյուջեն հաճախ կանգնում է մի շարք մարտահրավերների առջև.

- եկամուտներ գեներացնելու սահմանափակ կարողություններ, հատկապես գյուղական կամ տնտեսապես անապահով համայնքներում,
- կենտրոնական իշխանությունից չափազանց մեծ կախվածություն,
- ծառայությունների որակի ու մատչելիության անհավասար մակարդակ տարբեր տարածաշրջաններում,
- պլանավորման, մշտադիտարկման ու գնահատման կարողությունների թերացումներ (Council of Europe, 2011):

---

աշխատանքների իրականացման համար, օրինակ՝ ճանապարհների վերանորոգում, մանկապարտեզի շինարարություն, ջրամատակարարման բարելավում և այլն *(OECD, 2008)*:

[49] **Դոտացիա** *(ֆր.՝ dotation – հափկացում, ապահովում)*՝ պետական բյուջեից անհատույց ու ոչ նպատակային ֆինանսական միջոցների փոխանցում տեղական ինքնակառավարման մարմիններին կամ այլ ստորաբաժանումների՝ իրենց եկամուտների պակասը լրացնելու համար, բյուջետային հավասարակշռության ապահովման նպատակով *(OECD, 2008)*: ՀՀ պետական բյուջեն կարող է դոտացիա հատկացնել բյուջեի պակասուրդ ունեցող համայնքներին՝ ապահովելու նվազագույն կրթական, կոմունալ ու սոցիալական ծառայությունների մատուցումը:

## 7.3. Դոտացիաները, սուբսիդիաներն ու սուբվենցիաները որպես ֆինանսական աջակցության միջոցներ

Դոտացիաները, սուբսիդիաներն ու սուբվենցիաները միջբյուջետային փոխանցումների տեսակներ են: Մի բյուջեից մյուս բյուջեին տրամադրվում է ֆինանսական աջակցություն, պետության կողմից՝ քաղաքացիներին ու կազմակերպություններին: Դրանց հիմնական տարբերությունը տրամադրման նպատակների ու պայմանների մեջ է *(տե՛ս Աղյուսակ 3)*: **Դոտացիաները** ոչ նպատակային ֆինանսական օգնություն են, **սուբսիդիաները՝** նպատակային աջակցություն, իսկ **սուբվենցիաները՝** միջոցներ, որոնք տրամադրվում են կոնկրետ ծրագրի իրականացման համար:

**Աղյուսակ 3.** Դոտացիա, սուբսիդիա ու սուբվենցիա. համեմատական վերլուծություն

| **Բնութագիր** | **Դոտացիա** | **Սուբսիդիա** | **Սուբվենցիա** |
|---|---|---|---|
| **Սահմանում** | Ոչ նպատակային աջակցություն համայնքներին՝ բյուջեի հավասարակշռման նպատակով | Նպատակային ֆինանսական աջակցություն քաղաքացիներին կամ կազմակերպություններին | Նպատակային ֆինանսավորում համայնքներին ծրագիր իրականացնելու համար |
| **Նպատակ** | Եկամուտների պակասի լրացում, նվազագույն հանրային ծառայությունների ապահովում | Գների նվազեցում, արտադրության խթանում, սոցիալ-տնտեսական բեռի մեղմում | Կոնկրետ ծրագիր *(օրինակ՝ ենթակառուցվածքի զարգացում)* |
| **Շահառու** | Տեղական ինքնակառավարման մարմիններ, համայնքներ | Քաղաքացիներ, գյուղացիներ, գործարարներ, կազմակերպություններ | Համայնքներ կամ մարզեր |
| **Փոխադարձ պարտավորություն** | Չկա համաֆինանսավորման պա- | Շահառուից հաճախ ոչինչ չի պահանջ- | Սովորաբար պահանջում է համաֆի- |

| **Բնութագիր** | **Դոտացիա** | **Սուբսիդիա** | **Սուբվենցիա** |
|---|---|---|---|
| | հանջ, օգտագործվում է շահառուի հայեցողությամբ: | վում փոխարենը *(սակայն կարող են լինել հետվերադարձի պայմաններ ծրագիրը չկատարելու դեպքում):* | նանսավորում շահառու համայնքի կողմից: |
| **Իրավական կարգավորում** | «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, հավասարեցման բանաձևեր | Սոցիալական կամ տնտեսական քաղաքականության շրջանակում՝ կառավարության ծրագրերով | «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենք, պետական որոշումներ |

***Օրինակ 1.*** *2023 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել են դոտացիաներ ֆինանսապես թույլ համայնքներին, որպեսզի վերջիններս կարողանան ապահովել իրենց հիմնական գործառույթները՝ մանկապարտեզների աշխատակիցների աշխատավարձերի վճարում, համայնքային կառույցների (օրինակ՝ քաղաքապետարանի) կոմունալ վճարներ, հանրային լուսավորության կամ աղբահանության նվազագույն ծախսերը: Եթե համայնքի սեփական հարկային եկամուտները բավարար չեն նույնիսկ աշխատավարձերի վճարման համար, պետությունը նրան հատկացնում է դոտացիա, որպեսզի համայնքը չկանգնի ֆինանսական կոլապսի առջև: Այս գումարները կապված չեն որևէ կոնկրետ ծրագրի հետ և օգտագործվում են համայնքի հայեցողությամբ՝ բյուջետային բացը փակելու համար:*

***Օրինակ 2.*** *2023 թվականին ՀՀ Կառավարությունը գյուղատնտեսական ոլորտի զարգացման նպատակով սուբսիդավորել է գյուղտեխնիկայի ձեռքբերումը՝ գյուղացիներին տրամադրելով պետական աջակցություն գյուղտեխնիկայի արժեքի մի մասի փոխհատուցման տեսքով: Եթե գյուղացին ցանկանում է «Գյուղտեխնիկայի սուբսիդավորման ծրագրով» գնել տրակտոր՝ 20 միլիոն դրամ արժողությամբ, պետությունը սուբսիդավորում է դրա 40 %-ը, այսինքն՝ 8 միլիոն դրամը: Գյուղացին վճարում է մնացած 12 միլիոնը վարկային կամ կանխիկ միջոցներով:*

***Օրինակ 3.*** *2023 թվականին ՀՀ պետական բյուջեից համայնքներին հատկացվել են սուբվենցիաներ՝ տեղական նշանակության ծրագրերի համաֆինանսավորման նպատակով: Դրանք հիմնականում ուղղվել են համայնքային ենթակառուցվածքների զարգացմանը: Գեղարքունիքի մարզի համայնքներից մեկը «Խմելու ջրի մատակարարման համակարգի վերականգնում» ծրագիր է ներկայացրել՝ գյուղում խմելու ջրի նոր ցանց կառուցելու համար, որի ընդհանուր արժեքը կազմում է 50 միլիոն դրամ: Պետությունը սուբվենցիայի միջոցով ֆինանսավորում է ծրագրի 70 %-ը, այսինքն՝ 35 միլիոն դրամը: Մնացած 30 %-ը՝ 15 միլիոն դրամը, համաֆինանսավորում է համայնքը: Ծրագիրը կյանքի է կոչվում այն պայմանով, որ սուբվենցիան կօգտագործվի միայն նշված նպատակով:*

## 7.4. Սոցիալական ապահովագրություն

Սոցիալական ապահովագրությունը սոցիալական ոլորտի ֆինանսավորման ևս մեկ եղանակ է: Այն շատ արդյունավետ է օգտագործվում ժամանակակից բարեկեցության պետությունների կողմից: Այն գործում է **ռիսկերի համատեղ փոխհատուցման** սկզբունքի հիման վրա. անհատները, գործատուներն ու որոշ դեպքերում նաև պետությունը կատարում են մուծումներ միասնական հիմնադրամներ, որոնք ապահովում են եկամուտների պաշտպանություն ու ծառայությունների մատչելիություն սոցիալապես ծանր իրավիճակներում *(օրինակ՝ գործազրկություն, հիվանդություն, հաշմանդամություն, ծերություն)*:

Սոցիալական ապահովագրությունը ռեսուրսների վերաբաշխման այնպիսի միջոց է, որը ենթադրում է պարբերական մուծումներ, ներդրումներ ընդհանուր հիմնադրամին, որից հետագայում ռիսկային իրավիճակում հայտնվելու դեպքում

ներդրողները/շահառուներն ստանում են փոխհատուցում: Շահառուի իրավունակությունն ու փոխհատուցման չափը սովորաբար կախված են աշխատանքային փորձից ու կատարված վճարումներից:

Սոցիալական ապահովագրության հիմնական սկզբունքներն են՝

- պարտադիր մասնակցություն, հատկապես աշխատող անձանց համար,
- ամսական վճարումները կախված են եկամուտների մակարդակից,
- համերաշխություն ու վերաբաշխում,
- օրենսդրորեն երաշխավորված իրավունքներ ու պաշտպանություն (ILO, 2014):

Սոցիալական ապահովագրությունը ինքնաբավ ֆինանսական մեխանիզմ է, որը թեթևացնում է սոցիալական պաշտպանության հարկային ընդհանուր բեռը: Այն հիմնված է հատուկ նպատակով հավաքագրված միջոցների վրա, սահմանում է կայուն ու կանխատեսելի ֆինանսավորում, հատկապես երկարաժամկետ ծրագրերի համար: Սովորաբար սոցիալական ապահովագրությունն օգտագործվում է հետևյալ ծրագրերի ֆինանսավորման համար՝ կենսաթոշակներ, գործազրկության նպաստներ, բժշկական ծառայություններ, աշխատանքային վնասի ու մայրության արձակուրդի աջակցություն և այլն:

Այս համակարգն առաջնորդվում է **համերաշխության սկզբունքով**. բարձր եկամուտ ունեցողները վճարում են ավելի շատ, իսկ ծառայությունները տրամադրվում են ըստ կարիքի, ոչ թե մուծման ծավալի: Ապահովագրությունները վերա-

հսկվում են պետության կողմից, բայց կառավարվում են ինք-նավար հիմնադրամների միջոցով (Barr, 2020):

Յուրաքանչյուր պետություն ունի իր մոտեցումը տարբեր ոլորտներում պարտադիր սոցիալական ապահովագրության մեխանիզմների կիրառման հարցում:

**Գերմանիայի** պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգը բարեկեցության ապահովման ամենահին համակարգերից մեկն է: Այն ձևավորվել է դեռևս 1880-ական թվականներին Օտտո ֆոն Բիսմարկի *(1815-1898թթ.)* նախաձեռնությամբ:

Գերմանիայում պարտադիր սոցիալական ապահովագրության համակարգն ընդգրկում է (1) բժշկական ապահովագրություն, (2) աշխատավայրում դժբախտ պատահարներից ապահովագրություն, (3) կենսաթոշակային ապահովագրություն, (4) գործազրկության ապահովագրություն ու (5) խնամքի ապահովագրություն: Գերմանիայում գործում են ապահովագրական բազմաթիվ հիմնադրամներ, որտեղ ամեն ամիս եկամտից մուծումներ են կատարվում: Օրինակ՝ Գերմանիայում գործում է շուրջ 100 բժշկական ապահովագրական հիմնադրամ *(գերմ.՝ Krankenkassen)*: Ապահովագրական վճարը կատարվում է աշխատողի ու նրա գործատուի կողմից՝ հավասար չափաբաժիններով (Seeleib-Kaiser, 2008):

**1. Բժշկական ապահովագրությունը** *(գերմ.՝ Krankenversicherung)* Գերմանիայում գործում է 1883 թվականից: Այն ապահովում է դեղորայքի, ստացիոնար ու ամբուլատոր բուժօգնության հասանելիությունը: 2024 թվականի դրությամբ յուրաքանչյուր ապահովագրված անձի ամսական վճարի չափը կազմում էր 14.6 %. 7.3 % վճարում է գործատուն, 7.3 %՝ աշխատողը (Bundesministerium für Gesundheit, 2024):

**2. Աշխատավայրում դժբախտ պատահարներից ապահովագրությունը** *(գերմ.՝ Unfallversicherung)* գործում է 1884 թվականից: Այս ապահովագրության ամենամսյա վճարն ամբողջությամբ կատարվում է գործատուի կողմից: Ապահովագրական վճարի չափը տարբեր է՝ կախված աշխատանքային ոլորտից: Ապահովագրական միջոցները տրամադրվում են աշխատավայրում ստացած վնասվածքների կամ մասնագիտական հիվանդությունների դեպքում դժբախտ պատահարի զոհ դարձած աշխատողի բուժման, վերականգնման, վնասի փոխհատուցում համար (Knoll-Jung, 2024):

**3. Կենսաթոշակային ապահովագրությունը** *(գերմ.՝ Rentenversicherung)* գործում է 1889 թվականից: 2024 թվականին յուրաքանչյուր ապահովագրված անձի ամսական վճարի չափը կազմում էր 18.6 %: Դարձյալ կեսը վճարում է գործատուն, կեսը՝ աշխատողը: Կենսաթոշակային տարիքը Գերմանիայում 66 տարեկանն է, որն աստիճանաբար բարձրացվում է մինչև 67 (Deutsche Rentenversicherung, 2025):

**4. Գործազրկության ապահովագրությունը** *(գերմ.՝ Arbeitslosenversicherung)* գործում է 1927 թվականից: 2024 թ. դրությամբ յուրաքանչյուր ապահովագրված անձի ամսական վճարի չափը կազմում էր 2.6 %: Դարձյալ կեսը վճարում է գործատուն, կեսը՝ աշխատողը: Գործազրկության նպաստը տրամադրվում է գործազուրկներին աշխատանքի որոնման ընթացքում: Գործազրկության նպաստ ստանալու ժամկետը կախված է աշխատած տարիների քանակից, բայց չի կարող գերազանցել երկու տարին: Նպաստի չափը կազմում է նախկին եկամտի մոտ 60 %-ը (Boss, 2018):

**5. Խնամքի ապահովագրություն** *(գերմ.՝ Pflegeversicherung)* գործում է 1995 թվականից: Այս ապահովագրությունը նպատակ ունի փոխհատուցելու ծերության կամ հաշմանդամության պայմաններում խնամքի ծախսերը տանը կամ հաստատությունում: 2024 թվականի դրությամբ յուրաքանչյուր ապահովագրված անձի ամսական վճարի չափը կազմում էր 3.4-3.5 %՝ կախված ընտանեկան կարգավիճակից: Երեխաներ չունեցող անձինք վճարում են ավելի բարձր տոկոսադրույք (Beitman, 2023): Դարձյալ կեսը վճարում է գործատուն, կեսը՝ աշխատողը:

**Հայաստանում** պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը գործարկվել է 2014 թվականից, իսկ 2018 թվականից՝ դարձել պարտադիր 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված բոլոր աշխատող անձանց համար (Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա, 2025):

Այս համակարգը կառուցված է համաֆինանսավորման սկզբունքով. ամսական պարտադիր վճարի կեսը վճարում է աշխատողը, իսկ մյուս կեսը՝ պետությունը. յուրաքանչյուր աշխատող ամսական կատարում է 5 % մուծում իր աշխատավարձից, որը փոխանցվում է իր անհատական կենսաթոշակային հաշվին: Պետությունը ավելացնում է մինչև 5 % համաֆինանսավորում («Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը, 2010):

Այս գումարները կառավարվում են կուտակային ֆոնդերի կառավարիչների կողմից՝ ներդրվելով տնտեսության մեջ: Ամեն աշխատողի հաշվին կուտակվում է գումար, որը կարող է օգտագործվել միայն կենսաթոշակային տարիքում:

Սոցիալական ապահովագրությունը մի շարք առավելություններ ունի: Այն ապահովում է կանխատեսելի ու հատուկ

նպատակով օգտագործվող ֆինանսավորում, ձևավորում է մասնակցության ու պատասխանատվության զգացում, խթանում է սերունդների միջև համերաշխությունը:

Բնականաբար, սոցիալական ապահովագրությունը մի շարք մարտահրավերների է բախվում՝

- ծածկույթի բացեր, հատկապես ոչ ֆորմալ հատվածի աշխատողների շրջանում,
- ծրագրերի ֆինանսական կայունության խնդիր տարեց բնակչության աճի պայմաններում,
- որակյալ վարչարարության անհրաժեշտություն,
- հավասարության խախտման ռիսկեր, եթե մուծումները ռեգրեսիվ են, իսկ նպաստները՝ չինդեքսավորված (Palier, 2010):

## 7.5. Բարեգործական հիմնադրամներ

Բարեգործական հիմնադրամները սոցիալական ոլորտի ֆինանսավորման կարևոր աղբյուրներից են: Դրանք հաճախ հավասարակշռում են ֆինանսավորման բացերն այն ոլորտներում, որտեղ պետական ու տեղական բյուջեների կամ ապահովագրական միջոցները չեն բավարարում: Բարեգործական հիմնադրամներն անհատներից, կազմակերպություններից և այլ հաստատություններից ստացվող նվիրատվությունների միջոցով հանդես են գալիս որպես սոցիալական ոլորտի հավելյալ կամ այլընտրանքային ֆինանսավորման աղբյուր՝ լրացնելով բացերը, ապահովելով ճկունություն ու խթանելով նորարար մոտեցումներ:

Մարդասիրության, համերաշխության ու համայնքային մասնակցության սկզբունքների վրա հիմնված բարեգործա-

կան ֆինանսավորումն ապահովում է ինչպես ուղղակի դրամական աջակցություն կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց, այնպես էլ երկարաժամկետ համայնքահեն սոցիալական ծրագրերի ֆինանսավորում:

Բարեգործական նվիրատվությունների դրդապատճառները բազմազան են՝ կրոնական գաղափարախոսություն, բարոյական պատասխանատվություն, կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն կամ հարկային արտոնություններ: Երբ այս դրդապատճառները կառավարվում են հստակ մեխանիզմներով՝ դրամաշնորհների, հովանավորությունների կամ նպատակային հատկացումների միջոցով, դառնում են սոցիալական ոլորտի ռազմավարական ֆինանսավորման աղբյուր:

Բարեգործական միջոցները կարող են հավաքագրվել ու բաշխվել տարբեր կառույցների միջոցով, այդ թվում՝

- **ոչ առևտրային կազմակերպություններ,** որոնք սովորաբար կառավարում են մեծ կապիտալներ և ֆինանսավորում տրամադրում մրցակցային դրամաշնորհների միջոցով՝ նպաստելով տարբեր ոլորտներում սոցիալական աշխատանքի զարգացմանը՝ անօթևանության կանխարգելումից մինչև երեխաների պաշտպանության ծրագրեր:

***Օրինակ 4.*** *«World Vision» Հայաստան շահույթ չհետապնդող կազմակերպությունն իրականացնում է երեխաների պաշտպանության, ընտանիքների ամրապնդման, մանկական աղքատության հաղթահարման ու համայնքային զարգացման ծրագրեր: Ֆինանսավորումն իրականացվում է միջազգային դոնորների ու կազմակերպության գլոբալ ցանցի միջոցով (World Vision International, 2025):*

***Օրինակ 5.*** *«Առաքելություն Հայաստան» ՀԿ-ն գործում է փախստականների, տեղահանված անձանց, միգրանտների ու սոցիալապես անապահով խմբերի աջակցության ոլորտում, իրականացնում է խնամքի ծառայություններ, տնային օգնություն, սոցիալական աշխատանք ու իրավաբանական խորհրդատվություն՝ սերտորեն համագործակցելով պետական համակարգի հետ (Mission Armenia NGO, 2025):*

***Օրինակ 6.*** *ՀՕՖ (Հայ օգնության ֆոնդի) բարեգործական հիմնադրամի առաքելությունն է հզորացնել հայ ժողովրդին: 1988-2025 թվականների ընթացքում ՀՕՖ-ն իրականացրել է ավելի քան սոցիալական, կրթական, առողջապահական, տնտեսական զարգացման ու մշակութային 300 ծրագիր, որոնց ընդհանուր արժեքը գերազանցում է 380 միլիոն ԱՄՆ դոլարը (FAR, 2024):*

- **«Ժողովրդական ֆինանսավորման»** *(crowdfunding)* շնորհիվ հնարավոր է հավաքագրել ֆինանսական միջոցներ դժվարին իրավիճակում հայտնված անհատների կամ կազմակերպությունների համար: Դրանք կարող են լինել նվիրատվություններ ընտանիքի անդամներից, ընկերներից, նրանց ծանոթներից, անծանոթներից, բիզնեսներից և այլ աղբյուրներից: Այս նպատակով հաճախ օգտագործվում են սոցցանցերը. դրանց շնորհիվ մարդիկ կարող են հասնել թիրախային ավելի լայն լսարանին:

***Օրինակ 7.*** *Բուժօգնության դրամահավաքների դեպքում սոցցանցերում տարածվում են անհատների պատմությունները, լուսանկարները, բժշկական փաստաթղթերն ու հաշվեհամարները, որոնց կարելի է փոխանցում անել տվյալ անհատին օգնելու նպատակով: Քաղցկեղով երեխաների բուժման, սրտի վիրահատության կամ արտասահմանում բուժման նպատակով դրամահավաքներն ակտիվորեն տարածվում են ֆեյսբուքյան անձնական ու ՀԿ էջերով, խմբերի միջոցով (օրինակ՝ «City of Smile» հիմնադրամ):*

***Օրինակ 8.*** *«Մեր տուն» նախաձեռնությունը 2020 թվականի պատերազմից հետո սոցցանցերի օգնությամբ հավաքագրեց ֆինանսական միջոցներ՝ Արցախից տեղահանված ընտանիքներին կացարաններ տրամադրելու նպատակով:*

- **Կորպորատիվ բարեգործություն**. բիզնեսներն իրականացնում են սոցիալական գործառույթն իրենց կորպորատիվ սոցիալական պատասխանատվության (ԿՍՊ) ծրագրերի շրջանակում: Հայաստանում վերջին տարիներին ԿՍՊ ծրագրեր իրականացնող կազմակերպություններն զգալիորեն ակտիվացել են (խոշոր բիզնեսներ, բանկեր, հեռահաղորդակցման ու էներգետիկայի ոլորտի ընկերություններ): Ֆրիդմանի պնդմամբ ԿՍՊ ծրագրերն ավելացնում են բիզնեսների շահույթը (Friedman, 1970):

***Օրինակ 9. «****Ալեքս Հոլդինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունն աջակցում է Արցախից տեղահանված ընտանիքներին սննդով, կացարանով, բիզնեսները սուբսիդավորելով:*

***Օրինակ 10.*** *«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունը ֆինանսավորում է Սյունիքի մարզում դպրոցների վերանորոգումը, մարզահամալիրների կառուցումը և այլն:*

- **Կրոնական կառույցների նվիրատվությունները** նույնպես կարևոր աղբյուր են սոցիալական օգնության ու մարդասիրական նախաձեռնությունների ֆինանսավորման համար:

***Օրինակ 11.*** *Հայ առաքելական սուրբ եկեղեցին մշտապես իրականացնում է սոցիալական ծրագրեր՝ ուղղված սոցիալապես անապահով խմբերի, երեխաների, տարեցների, հիվանդների,*

*հաշմանդամություն ունեցող անձանց ու պատերազմից տուժածների բարօրությանը:*

***Օրինակ 12.*** *Հայ ավետարանչական եկեղեցին Հայաստանում իրականացնում է հոգևոր, կրթական, սոցիալական ու բազմաբնույթ բարեգործական ծրագրեր, որոնք ուղղված են ինչպես եկեղեցու անդամների, այնպես էլ ընդհանուր համայնքի բարօրությանն ու զարգացմանը:*

Բարեգործական ֆինանսավորումը մի շարք առավելություններ ունի.

- ճկունություն, երբ ի տարբերություն պետական ֆինանսավորման՝ բարեգործական միջոցները թույլ են տալիս արագ արձագանքել սոցիալական նոր խնդիրներին,
- նորարարություն, երբ հնարավորություն է ընձեռում ֆինանսավորելու փորձարարական ծրագրեր ու աջակցության նոր մոդելներ,
- համայնքային մասնակցություն ու իրավունքների պաշտպանություն, երբ հնարավոր է ուղղել միջոցները տեղական նախաձեռնություններին, խոցելի խմբերի պաշտպանությանն ու ակտիվիստական գործունեությանը,
- թիրախավորված աջակցություն, երբ կարելի է միջամտել այն ոլորտներում, որտեղ պետության աջակցությունը բացակայում է կամ անբավարար է:

Չնայած դրական կողմերին՝ բարեգործական ֆինանսավորումն ունի նաև որոշ սահմանափակումներ.

- կայունության բացակայություն, քանի որ միանվագ կամ անկանոն նվիրատվությունների վրա հիմնվելը

կարող է խոչընդոտել երկարաժամկետ պլանավորու-
մը,

- անհամաչափ բաշխում, քանի որ նվիրատուների ա-
ռաջնահերթությունները միշտ չէ, որ համընկնում են ի-
րական կարիքներին,
- հաշվետվողականության բացակայության ռիսկ, քանի
որ երբեմն միջոցների կառավարումը կարող է լինել ոչ
թափանցիկ,
- կախվածության վտանգ, քանի որ հասարակական
համակարգերի կայուն զարգացման փոխարեն հնա-
րավոր է ձևավորվի բարեգործական միջոցներից
կախվածություն:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Որո՞նք են ՀՀ սոցիալական ոլորտի ֆինանսավորման
աղբյուրները:
2. Նշե՛ք պետական բյուջեի եկամտային հիմնական աղբ-
յուրները:
3. Ի՞նչ հիմնական խնդիրների է բախվում սոցիալական
ոլորտի ֆինանսավորումը:
4. Ի՞նչ տարբերություն կա դոտացիայի, սուբսիդիայի ու
սուբվենցիայի միջև:
5. Նշե՛ք Գերմանիայի պարտադիր սոցիալական ապա-
հովագրության համակարգի հինգ հիմնական բաղա-
դրիչները:

6. Բացատրե՛ք, թե ինչ դեր ունեն տեղական բյուջեները սոցիալական քաղաքականության իրականացման գործում:

**Հանձնարարություններ**

1. Ձեր կարծիքով Հայաստանում սոցիալական ոլորտի ո՞ր հիմնախնդիրը նպատակահարմար է կարգավորել սոցիալական ապահովագրության համակարգի միջոցով:
2. Գտե՛ք վիճակագրական տվյալներ Հայաստանում կուտակային կենսաթոշակային համակարգի վերաբերյալ և կանխատեսե՛ք՝ որքան է կազմելու միջին կենսաթոշակը 2040 թվականին:
3. Մեկ ամսվա ընթացքում գրանցե՛ք Ձեր կողմից կատարած բոլոր ծախսերը՝ ըստ կատեգորիաների *(օրինակ՝ սնունդ, փրանսպորփ, կոմունալ, ժամանց և այլն)*: Ապա կատարե՛ք դրանց վերլուծություն և արդյունքներն ամփոփ ձևով ներկայացրե՛ք՝ օգտագործելով գծապատկերներ ու աղյուսակներ:

**Խմբային բանավեճ**

Թեմա՝ «Սոցիալական ոլորտի ֆինանսավորումը պետք է առավելապես հիմնվի հարկային եկամուտների վրա, ոչ թե սոցիալական ապահովագրական մոդելի վրա»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթեփիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 8. ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

## 8.1. Աղքատության կրճատումը որպես սոցիալական աշխատանքի նպատակ

Սոցիալական ոլորտում աղքատության կրճատումն ու անհավասարության նվազեցումը դիտարկվում են որպես անհրաժեշտություն, ինչպես նաև սոցիալական պաշտպանության համակարգերի ձևավորման հիմնական ուղղություն: Այս նպատակադրման վերաբերյալ համաձայնությունն արտահայտված է բազմաթիվ երկրների քաղաքական հայտարարություններում, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ սահմանադրություններում: Աղքատության կրճատման նպատակը դրսևորվում է նաև սոցիալական պաշտպանության ծրագրերի արագ ընդլայնման ու վերջին տարիներին նկատված բազմաթիվ նորարարությունների միջոցով: Այն հաստատված է նաև որպես ՄԱԿ-ի կայուն զարգացման առաջին նպատակ (ԿԶՆ), որը նախատեսված է իրականացնել մինչև 2030 թվականը (Grosh, Leite, Wai-Poi & Tesliuc, 2022): Այդուհանդերձ, աղքատությունը շարունակում է մնալ համաշխարհային ամենաշարունակական ու բազմաչափ հիմնախնդիրներից մեկը՝ ազդելով անհատների, ընտանիքների ու համայնքների կյանքի բոլոր կողմերի վրա (Rank, Eppard & Bullock, 2021):

Սոցիալական աշխատողների միջազգային ֆեդերացիան (IFSW) ու Սոցիալական աշխատանքի դպրոցների միջազգային ասոցիացիան (IASSW) շեշտում են սոցիալական աշխատողի մասնագիտական պարտականությունը՝ պայքարելու աղքատության դեմ ու նպաստելու բոլոր մարդկանց բարե-

կեցությանը (IFSW & IASSW, 2014): Սոցիալական աշխատողները ձգտում են հզորացնել աղքատության մեջ ապրող մարդկանց՝ օգնելով բավարարել ոչ միայն նրանց հրատապ կարիքները, այլև վերացնել այն կառուցվածքային ու համակարգային խոչընդոտները, որոնք պայմանավորում են անհավասարությունը:

Հետաքրքիր է այն փաստը, որ աղքատությունը սկսում են դիտարկել որպես սոցիալական հիմնախնդիր, «հասարակության հիվանդություն», հետևաբար սոցիալական քաղաքականության օբյեկտ XX դարի սկզբում, երբ բարեկեցության ընդհանուր մակարդակը սկսում է աճել և որպես աղքատ բնորոշվում են հասարակության շուրջ 20 %-ը, այսինքն՝ էապես ավելի քիչ, քան մինչ այդ:

Աղքատությունը կրճատելու համար նախ պետք է սահմանել այն: Աղքատությունը չի սահմանափակվում միայն ֆինանսական միջոցների պակասով, այն ներառում է զրկանքներ կյանքի տարբեր ոլորտներում՝ կրթություն, առողջապահություն, բնակարանային պայմաններ ու սոցիալական մասնակցություն: ՄԱԿ-ի սահմանմամբ աղքատությունը մարդու ընտրության ու հնարավորությունների սահմանափակում է, արժանապատվության ոտնահարում (UNDP, 1997): Հետևաբար սոցիալական աշխատողները պետք է աղքատությանը մոտենան որպես բազմաչափ ու փոխհատական երևույթ, որն ազդում է մարդկանց վրա՝ կախված սեռից, տարիքից, էթնիկ պատկանելությունից, հաշմանդամությունից ու այլ գործոններից: Աղքատությունը՝ որպես սոցիալական երևույթ, խորությամբ ընկալելու ու դրա հետ աշխատելու հնարավորություն

ունենալու համար հարկ է պատասխանել մի շարք փոխկապակցված հարցերի:

- Ի՞նչ է աղքատությունը:
- Ինչպե՞ս որոշել աղքատության գիծը:
- Բնակչության ո՞ր մասն է աղքատ:
- Բնակչության ո՞ր մասն է ծայրահեղ աղքատ:
- Ինչպե՞ս են ապրում աղքատները:
- Որքա՞ն է կազմում աղքատության ճեղքվածքը:
- Ո՞ր սոցիալական խմբերն են առավել աղքատ:
- Որո՞նք են աղքատների եկամտի աղբյուրները:
- Ի՞նչ սեփականություն ունեն աղքատները:
- Որքանո՞վ են աղքատները պաշտպանված օրենքով:
- Որքանո՞վ են հասանելի սոցիալական բարիքներն աղքատների համար:
- Ինչպիսի՞ն է աղքատների համար սոցիալական ծառայությունների որակը:
- Որքա՞ն է կազմում գործազրկության մակարդակն աղքատների շերտում:
- Ինչպիսի՞ն են աղքատների բնակության էկոլոգիական պայմանները (Кюркчян, 1995):

Դեռևս 1988 թվականին անգլիացի գիտնականները փորձել են դասակարգել կենսական անհրաժեշտ բարիքները և ստացել են հետևյալ ցանկը.

1. յուրաքանչյուր երեխայի համար հարմարավետ ննջասենյակ,
2. ննջասենյակում ու բնակելի սենյակում գորգեր,
3. ջեռուցման համակարգի առկայություն,
4. առանձին զուգարան տան մեջ,

5. չոր ու տաք բնակարան,
6. հարևաններից առանձին բաղնիք,
7. շաբաթական առնվազն 1 անգամ միս ուտելու հնարավորություն,
8. մեծերի համար օրական 2 անգամ տաք սնունդ,
9. երեխաների համար երեքանգամյա սննդի ապահովում,
10. նոր, չօգտագործված հագուստ,
11. յուրաքանչյուր անհատի համար ջրակայուն վերարկու,
12. յուրաքանչյուր երեխայի համար 2 զույգ կոշիկ,
13. խաղալիքներ երեխաների համար,
14. հեռուստացույց,
15. սառնարան,
16. լվացքի մեքենայի առկայություն,
17. տոներ նշելու հնարավորություն,
18. ժամանցը կազմակերպելու հնարավորություն,
19. տարեկան 1 անգամ ընկերներին ու ընտանիքի անդամներին նվերներ անելու հնարավորություն,
20. տարեկան 1 անգամ արձակուրդն այլ վայրում անցկացնելու հնարավորություն,
21. սպորտով զբաղվելու հնարավորություն,
22. հասարակական տրանսպորտից օգտվելու հնարավորություն (Bradshaw et al., 2008):

Բնականաբար, նշված ապրանքների ու ծառայությունների կառուցվածքը փոփոխվում և համալրվում է հասարակության զարգացմանը համընթաց: Սակայն դրանք կարելի է միավորել աղքատությունը բնորոշող հետևյալ հիմնական խմբերում՝

- ֆիզիկական անհարմարություն *(սով, աղքատիկ զգեստապահարան, վատ կացարան, աղմուկ, աղտոտվածություն, տրանսպորտի բացակայություն, աշխատանքային վատ պայմաններ),*
- առողջական վատ վիճակ *(կյանքի ցածր տևողություն, հիվանդությունների բարձր մակարդակ),*
- անպաշտպանվածություն *(տուն, գնաճ, ճգնաժամ, հանցագործությունների բարձր մակարդակ, օդի, ջրի աղտոտվածություն),*
- սոցիալ-տնտեսական անբավարար պայմաններ *(ցածր եկամուտներ, ֆինանսական կախվածություն),*
- սոցիալ-հոգեբանական անբարենպաստ վիճակ *(կրթություն, ցածր ինքնագնահատական, խտրականություն)* (Townsend, 1979):

Աղքատության ամենատարածված սահմանումներն ամփոփված են աղքատության հայեցակարգերում՝ բացարձակ աղքատություն, հարաբերական աղքատություն, սուբյեկտիվ աղքատություն ու աղքատության մշակույթ (Кюркчян, 1995):

Աղքատության կրճատման ուղղությամբ սոցիալական աշխատանքը մշակել է հետևյալ հիմնական մոտեցումներն ու միջամտության տրամաբանությունները.

- **ուժեղացում ու ակտիվացում,** երբ սոցիալական աշխատանքը բացահայտում է մարդկանց, ընտանիքների ու համայնքների ներուժի, կարողությունների, ռեսուրսների արդյունավետ օգտագործման ռազմավարությունների մշակում,
- **խտրականության դեմ պայքար,** երբ սոցիալական աշխատանքը վերլուծում է իշխանության անհավասար

բաշխման ու խտրականության դերն աղքատության համատեքստում՝ որոնելով անհավասարության ու խտրականության, ինչպես նաև դրանց հետևանքների կանխման ու հաղթահարման ուղիներ,

- **համակարգային տեսությունն** օգնում է սոցիալական աշխատողին հասկանալ, թե ինչպես են տարբեր սոցիալական ինստիտուտներ *(կրթություն, աշխապաշուկա, առողջապահություն)* փոխկապակցված ձևով նպաստում կամ խոչընդոտում մարդու զարգացմանը:

Աղքատության հաղթահարումը ոչ միայն սոցիալական աշխատանքի նպատակն է, այլև մասնագիտական ու բարոյական պարտականություն: Սոցիալական աշխատողները գործում են որպես անհատական փորձառության ու քաղաքական, ինստիտուցիոնալ փոփոխությունների միջև կապող օղակ (Midgley, 1995):

## 8.2. Բացարձակ աղքատության հայեցակարգ

Բացարձակ աղքատության հայեցակարգը դիտարկում է աղքատությունը որպես մարդու ֆիզիկական գոյության համար անհրաժեշտ նվազագույն ռեսուրսների՝ սննդի, օթևանի, հագուստի, ջրի, հիմնարար առողջապահական ու սանիտարական ծառայությունների անհասանելիություն կամ բացակայություն: Այն սահմանվում է որպես գոյատևման նվազագույն շեմից ցածր կենսամակարդակ: Այս մոտեցումը շեշտադրում է՝ արդյոք մարդն ունի բավարար միջոցներ՝ ֆիզիոլոգիական հիմնարար պահանջները բավարարելու համար:

Բացարձակ աղքատությունը սովորաբար չափվում է եկամտային ու սպառման տվյալների հիման վրա: Գործըն-

թացը ներառում է «աղքատության գծի» *(poverty line)* սահմանում, որը համարժեք է ռեսուրսների այն նվազագույն չափին, որն անհրաժեշտ է բավարար կենսապայմաններ ապահովելու համար: Եթե անհատի կամ ընտանիքի եկամուտը ցածր է այդ շեմից, ապա նրանք համարվում են բացարձակ աղքատության պայմաններում ապրող:

Աղքատության գիծը հաշվարկելու համար Համաշխարհային բանկն ուսումնասիրում է տարբեր երկրների ազգային աղքատության գծերը, որոնք արտացոլում են տվյալ երկրում սննդի, հագուստի ու կացարանի նվազագույն կարիքները: Քանի որ զարգացած երկրներում գծերը բարձր են, իսկ զարգացողներում՝ ցածր, համաշխարհային համեմատություն կատարելու համար անհրաժեշտ է ընդհանուր չափանիշ սահմանել: 1990 թվականին Համաշխարհային բանկն ու անկախ հետազոտողներն ուսումնասիրեցին աշխարհի ամենաաղքատ 15 երկրների աղքատության գծերը, որոնք բերվեցին ընդհանուր արժույթի՝ գնողունակության համարժեքության հիմքով: Դրանց միջին արժեքը կազմեց մոտ 1 դոլար օրական մեկ անձի համար, ինչը դարձավ առաջին գլոբալ աղքատության գիծը:

Քանի որ աշխարհում ապրելու համար անհրաժեշտ ծախսերը ժամանակի ընթացքում փոփոխվում են, գլոբալ աղքատության գիծը նույնպես պետք է պարբերաբար վերանայվի՝ այս փոփոխությունները ճիշտ արտացոլելու համար: 2005 թվականին գների համեմատելիության նոր տվյալների հիման վրա աղքատության գիծը վերանայվեց՝ դառնալով 1.25 դոլար, իսկ 2015 թվականին՝ 1.90 դոլար: Ըստ 2012 թվականի տվյալների՝ ավելի քան 900 միլիոն մարդ աշխարհում ապ-

րում էր այդ գծից ցածր, իսկ 2015 թվականին այդ թիվը կանխատեսվում էր շուրջ 700 միլիոն (World Bank, 2015):

2025 թվականի հունիսին Համաշխարհային բանկը վերահաշվարկել և թարմացրել է աղքատության գիծը: **Նոր միջազգային աղքատության գիծը կազմում է 3.00 ԱՄՆ դոլար** մեկ անձի հաշվով օրական, որը փոխարինում է նախկինում կիրառվող 2.15 դոլարի շեմին, որը հիմնված էր 2017 թվականի գնողունակության համարժեքության տվյալների վրա (World Bank, 2025) *(տե՛ս Գծապատկեր 1)*:




**Գծապատկեր 1.** Համաշխարհային բանկի կողմից հաշվարկվող աղքատության համընդհանուր գծի փոփոխությունը
*(1990-2025 թթ.)*

Կատարելագործելով բացարձակ աղքատության հայեցակարգը՝ սկսեցին տարբերակել աղքատության վերին ու ստորին գծերը, ընդ որում՝ վերջինս արտահայտում էր աղքատների ու ծայրահեղ աղքատների միջև առկա սահմանը:

Կարևոր է նշել, որ գլոբալ աղքատության գիծը նախատեսված է համաշխարհային միտումների ու միջազգային նպատակների իրականացման չափման համար, մինչդեռ

քաղաքականության ու ծրագրային միջամտությունների համար ավելի նպատակահարմար է կողմնորոշվել ազգային աղքատության շեմերով:

Անդրադառնանք Հայաստանում բացարձակ աղքատության չափման համար օգտագործվող պաշտոնական վիճակագրությանը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի (Արմստատ) տվյալների ու ՀՀ առողջապահության նախարարության կողմից մշակված սննդամթերքի կազմի, կառուցվածքի ու էներգետիկայի 2024 թվականի երկրորդ եռամսյակի միջին ընթացիկ գներով հաշվարկի՝ ամսական մեկ շնչի հաշվով **պարենային զամբյուղը կազմում է 41 657 ՀՀ դրամ**, իսկ **նվազագույն սպառողական զամբյուղը՝ 77 065.5 ՀՀ դրամ** (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024):

ՀՀ-ում աղքատության գնահատականի հիմքում ընկած է հիմնական կարիքների արժեքի մեթոդը, որն սպառման տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության միջոցով փաստագրված այն զամբյուղի դրամական արժեքի գնահատումն է, որն անհրաժեշտ է տնային տնտեսությունների պարենային ու ոչ պարենային հիմնական կարիքները հոգալու համար: Այս դրամական արժեքը կոչվում է «աղքատության գիծ»: ՀՀ-ում հաշվարկվում է աղքատության չորս տարբեր գիծ.

ա) **պարենային աղքատության գիծ**, որն արտացոլում է օրվա ընթացքում մեկ միջին անհատի բնականոն գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ նվազագույն էներգետիկ պահանջը (ՆԷՊ) բավարարող սպառումը: ՀՀ ժողովրդագրական առանձնահատկություններից ելնելով՝ 2019-

2023 թվականներին մեկ անձի համար օրական միջին ՆԷՊ-ը հաշվարկվել է 2 307 կիլոկալորիայի (կկալ) չափով,

բ) **աղքատության ստորին գիծ**, որը հաշվարկվում է՝ պարենային աղքատության գծին ավելացնելով հիմնական ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների սպառման ցածր մասնաբաժինը,

գ) **աղքատության վերին գիծ**, որը հաշվարկվում է՝ պարենային աղքատության գծին ավելացնելով հիմնական ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների սպառման բարձր մասնաբաժինը,

դ) **աղքատության միջին գիծն** աղքատության ստորին ու վերին գծերի միջինն է *(տե՛ս Աղյուսակ 4)*:

2019 թվականից աղքատության հիմնական ցուցանիշները, ըստ մարզերի ու Երևան քաղաքի, հաշվարկվում են՝ աղքատության միջին գծին համաձայն (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024):

**Աղյուսակ 4.** Աղքատության գծերը ՀՀ-ում *(2020-2023 թթ. ՀՀ դրամ)* (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024, էջ 162)

| Թվական | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|
| **Ծայրահեղ (պարենային) աղքատության գիծ** | 23828 | 26500 | 29934 | 29786 |
| **Աղքատության ստորին գիծ** | 35324 | 38548 | 42708 | 43036 |
| **Աղքատության միջին գիծ** | 44482 | 48145 | 52883 | 53590 |
| **Աղքատության վերին գիծ** | 53641 | 57744 | 63060 | 64146 |

Գոյություն ունեն բազմաթիվ ոչ ֆինանսական ցուցանիշներ՝ կրթություն, առողջապահություն, ջրամատակարարման և էլեկտրականության սպառում և այլն, որոնք կարևոր են աղքատության բազմաչափ բնույթը հասկանալու համար:

Բացի ֆինանսական գնահատումից, չափման այլ ձևերը կարող են ներառել սննդային անապահովություն, հիգիենայի միջոցների բացակայություն, երեխայի թերսնուցում, մատչելի բնակարանի պակաս ու առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորության բացակայություն:

Բացարձակ աղքատության հայեցակարգի համեմատական պարզությունը թույլ է տալիս համաշխարհային մակարդակով գնահատել կենսապահովման նվազագույն մակարդակից ցածր ապրող մարդկանց թիվը: Այն օգտագործվում է որպես համընդհանուր չափանիշ՝ տարբեր երկրներում ծայրահեղ կարիքավորների նույնականացման, սոցիալական միջոցառումների մշակման ու միջազգային զարգացման ծրագրերի ազդեցության գնահատման նպատակով: Այս մոտեցումը հատկապես կիրառելի է ցածր եկամուտ ունեցող երկրներում, որտեղ մարդկանց մեծ մասի գոյատևման պայմանները կախված են սննդի, կացարանի ու հիգիենայի հասանելիությունից:

Միևնույն ժամանակ բացարձակ աղքատության հայեցակարգը հնարավորություն չի տալիս չափելու աղքատությունն ավելի խորությամբ, քանի որ հաշվի չեն առնվում.

- տարբեր բնակավայրերում կյանքի արժեքի տարբերությունը: Մեծ քաղաքում, փոքր քաղաքում ու գյուղում կյանքի արժեքը տարբեր է: Տարբեր են նաև կլիմայական տարբեր գոտիներում բնակվող մարդկանց պահանջմունքները,
- անշարժ գույքի առկայությունը, *օրինակ՝ միևնույն եկամուտ ունեցող ու սեփական բնակարանում ապրող փարեց ամուսինների ընտանիքի ու բնակարանի*

*խնդրի լուծման առջև կանգնած երիտասարդ ընտանիքի պահանջմունքները տարբեր են,*

- ընտանիքի կարգավիճակը պայմանավորում է իրական պահանջմունքների ու կարիքների տարբերությունը,
- ընտանիքներ, որոնց եկամուտները բարձր են աղքատության գծից, սակայն ծախսերն այս կամ այն պատճառով գերազանցում են սպառման միջին չափանիշները, *օրինակ՝ ծանր հիվանդություններ, պարտքեր և այլն,*
- հասարակության տնտեսական բնութագրիչների փոփոխության ժամանակ սննդի և այլ կարիքների բավարարման համար անհրաժեշտ ծախսերի վերանայման ու համադրման անհրաժեշտությունը:

Աղքատության գծերը, այս բոլոր սահմանափակումների հետ մեկտեղ, լայնորեն ու բավականին արդյունավետորեն կիրառվում են սոցիալական քաղաքականության ու սոցիալական պաշտպանության մեխանիզմների մշակման ժամանակ: Աղքատության գծերի սահմանումից հետո առաջանում է այդ շեմերից ներքև գտնվող մարդկանց նույնականացման խնդիրը, որի լուծումը առնչվում է մեթոդական դժվարություններին, ինչպես՝ ընտանիքների եկամուտների ու ծախսերի հաշվարկ, կարիքավորության աստիճանի որոշում և այլն:

## 8.3. Հարաբերական աղքատության հայեցակարգ

Հարաբերական աղքատության հայեցակարգը համեմատաբար ավելի ուշ է առաջացել: Այն գալիս է որոշակիորեն շտկելու բացարձակ աղքատության հայեցակարգի թերացումները:

Հարաբերական աղքատության հայեցակարգը հիմնվում է այն գաղափարի վրա, որ անկախ մարդու եկամտի բացարձակ մեծությունից, եթե եկամուտն էապես տարբերվում է տվյալ հասարակության մեջ ընդունված միջին մակարդակից, ապա մարդն իրեն աղքատ է զգում (Townsend, 1979)։ Այս հայեցակարգի համաձայն՝ աղքատության կրճատումը նպատակ է հետապնդում ձգտելու եկամուտների առավել արդար բաշխմանն ու հասարակության մեջ մարդկանց բարեկեցության մակարդակի հավասարությանը։

Գոյություն ունեն հարաբերական աղքատության չափման մի քանի մեթոդներ։ Ամենատարածված մեթոդներից մեկը ենթադրում է հասարակության բաժանում հինգ *(քվինտիլային)* կամ տասը *(դեցիլային)* եկամտային խմբերի։

Նախ հաշվառվում է բոլոր տնային տնտեսությունների եկամուտը, այնուհետև ստացված տվյալները դասակարգվում են ըստ աճման կարգի՝ նվազագույնից առավելագույն, ապա ստացված բազմությունը բաժանվում է 5 կամ 10 հավասար *(20%-անոց կամ 10%-անոց)* խմբերի *(հավասար՝ ըստ տնային տնտեսությունների քանակի),* և հաշվարկվում է, թե յուրաքանչյուր խմբի եկամուտն ամբողջ ազգաբնակչության եկամտի քանի՞ տոկոսն է կազմում։ Տվյալ մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս.

- գնահատելու հասարակության մեջ բևեռացման աստիճանը,
- հաշվարկելու վերին խավի ու միջին խավի հեռավորությունն ու մեկուսացվածությունը,
- ուսումնասիրելու եկամուտների բաշխվածությունը միջին խավում,

- դիտարկելու ժամանակի ընթացքում եկամուտների վերաբաշխման դինամիկան (European Commission, 2004):

Հարաբերական աղքատության չափման համար կիրառվում է ևս մեկ մեթոդ՝ եկամուտների կենտրոնացման՝ Ջինիի գործակիցը: Ջինիի գործակիցը վիճակագրական մոդել է, որն առաջարկել և մշակել է իտալացի վիճակագիր ու ժողովրդագիր Կորադո Ջինին իր «Ցուցանիշի փոփոխականությունն ու անկայունությունը» աշխատությունում, որը հրապարակվել է 1912 թվականին: Ջինիի գործակիցը ցույց է տալիս սոցիալական որոշակի խմբի մոտ եկամուտների կենտրոնացման աստիճանն ու բնակչության եկամուտների բաշխման փաստացի ծավալի շեղումը դրանց հավասարաչափ բաշխման գծից: Հավասարաչափ բաշխման դեպքում այն հավասար է զրոյի, բացարձակ անհավասարության պայմաններում այն հավասար է մեկի:

Ջինիի գործակցի հաշվարկման համար ընտանիքները/տնային տնտեսությունները դասակարգվում են ըստ եկամուտների մեծության՝ X առանցքով: Եկամուտներն արտացոլված է Y առանցքի վրա: Լորենցի կորը[50] սոցիալական անհավասարության գրաֆիկական պատկեր է, որը ցույց է տալիս, թե ինչպես է եկամուտը բաշխված բնակչության քվինտիլային/դեցիլային խմբերի միջև:

Ջինիի գործակիցը հաշվարկելու համար Լորենցի կորով ու եկամուտների բացարձակ հավասարության գծով սահման-

---

50 **Լորենցի կորն** *(Lorenz curve)* առաջարկել է ամերիկացի տնտեսագետ Մաքս Օտտո Լորենցը դեռևս 1905 թվականին որպես բնակչության եկամուտների անհավասարության չափման ցուցանիշ:

նագծված մակերեսը բաժանվում է X առանցքով, եկամուտնե-րի բացարձակ հավասարության գծով ու եկամուտների բա-ցարձակ անհավասարության գծով սահմանագծված եռան-կյան մակերեսի վրա: Եթե եկամուտները հավասար են բաշխված, ապա բոլոր խմբերը ստանում են եկամուտների համաչափ բաժին, և Լորենցի կորը համընկնում է գլխավոր անկյունագծի՝ եկամուտների բացարձակ հավասարության գծին *(տե՛ս Նկար 11)*:



**Նկար 11.** Ջինիի գործակցի հաշվարկ ու Լորենցի կոր
(Media Economics, 2014)

Իրականում աղքատ խմբերը ստանում են համեմատա-բար քիչ եկամուտ, և Լորենցի կորը ծռվում է դեպի ներքև՝ հե-ռանալով բացարձակ հավասարության գծից: Որքան ուժեղ է այդ շեղումը, այնքան մեծ է եկամուտների անհավասարու-թյունը: Եթե Ջինիի գործակիցը հավասար է 0-ի, ապա հասա-րակության մեջ բացարձակապես համաչափ են բաշխվում եկամուտները: Իսկ եթե Ջինիի գործակիցը հավասար է 1-ի, ապա հասարակության մեջ բացարձակ անհավասարություն է. եկամուտները կուտակված են մեկ անձի կամ տնային տնտեսության ձեռքում: Բնականաբար, իրական կյանքում

Ջինիի գործակիցը հավասար չի լինում ո՛չ զրոյի, ո՛չ մեկի, այլ ձգտում է զրոյի կամ մեկի: Հետևաբար որքան Ջինիի գործակցի արժեքը մոտ է զրոյին, այնքան համաչափ են բաշխված եկամուտները հասարակության մեջ: Եվ, ընդհակառակը, որքան Ջինիի գործակիցը մոտենում է մեկին, այնքան ավելի մեծ է հասարակության մեջ եկամուտների բևեռացումը՝ հասարակության ամենահարուստ ու ամենաաղքատ շերտերի եկամուտների միջև տարբերությունը:

**Աղյուսակ 5.** ՀՀ բնակչության դրամական եկամուտներն ըստ քվինտիլային խմբերի, Ջինիի գործակից *(2019-2023 թթ., %)*

| Թվական | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|
| **Դրամական եկամուտներ, ընդամենը** | 100 | 100 | 100 | 100 | 100 |
| **այդ թվում՝ ըստ բնակչության քվինտիլային (20 %) խմբերի** | | | | | |
| **Առաջին քվինտիլ (նվազագույն եկամուտներով)** | 5 | 6 | 6 | 6 | 6 |
| **Երկրորդ քվինտիլ** | 12 | 12 | 11 | 12 | 12 |
| **Երրորդ քվինտիլ** | 16 | 17 | 16 | 16 | 16 |
| **Չորրորդ քվինտիլ** | 24 | 22 | 23 | 23 | 23 |
| **Հինգերորդ քվինտիլ (առավելագույն եկամուտներով)** | 43 | 43 | 44 | 43 | 43 |
| **Եկամուտների կենտրոնացման գործակից (Ջինի ինդեքս)** | 0.381 | 0.363 | 0.364 | 0.352 | 0.348 |

Հայաստանում 2023 թվականի տվյալներով Ջինիի գործակիցը հավասար էր 0.348. 2019 թվականի համեմատ այն կրճատվել է 0.033 կետով (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024, էջ 26) *(տե՛ս Աղյուսակ 5)*:

Ջինիի գործակիցը հնարավորություն է տալիս քանակական ձևով գնահատելու եկամուտների կամ հարստության բաշխման անհավասարության աստիճանը տվյալ հասարա-

կությունում: Այն օգտագործվում է սոցիալ-տնտեսական տարբեր խմբերի միջև սոցիալական անհավասարության բացահայտման, քաղաքականության արդյունավետության գնահատման, ինչպես նաև երկրների միջև համեմատություններ կատարելու համար: Գործակիցը թույլ է տալիս վերլուծել, թե ինչպես է տնտեսական աճը բաշխվում հասարակության տարբեր խավերի միջև, և արդյո՞ք այդ բաշխումը նպաստում է սոցիալական արդարության ապահովմանը:

Միևնույն ժամանակ Ջինիի գործակցի հաշվարկման գործընթացում տարրերի խմբավորման սկզբունքը միշտ չէ հստակ: Ջինիի գործակիցը հնարավորություն չի տալիս հաշվի առնել եկամտի աղբյուրը: Բացի դրանից՝ Ջինիի գործակիցը հնարավորություն է տալիս հաշվարկելու միայն դրամային եկամուտները, այնինչ որոշ տարածաշրջաններում կարևոր դեր է խաղում բնամթերքով կամ արժեթղթերի տեսքով ստացվող եկամուտը: Եվս մեկ թերացում պայմանավորված է Ջինիի գործակցի հաշվարկման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման մեթոդների տարբերությամբ, ինչը նվազեցնում է գործակցի ճշգրտությունն ու համեմատելու արդյունավետությունը:

Հարաբերական աղքատության հայեցակարգը նույնպես պահանջում է աղքատության գծի հաշվարկ, որի դեպքում աղքատությունը որոշվում է՝ ելնելով տվյալ հասարակության մեջ եկամուտների միջին մակարդակից կամ բարեկեցության վերաբերյալ  համընդհանուր պատկերացումներից:

### 8.4. Սուբյեկտիվ աղքատության հայեցակարգ

Հարաբերական աղքատության հայեցակարգը, հիմնվելով բացարձակ աղքատության հայեցակարգի գործիքակազմի՝ վիճակագրական ցուցանիշների ու աղքատության գծերի վրա, շատ ավելի մանրամասնորեն է վերլուծում հասարակության մեջ անհավասարության մակարդակը, սակայն այն նույնպես թույլ չի տալիս հասկանալ աղքատության երևույթը բավական խորությամբ:

Այս բացերը լրացնելու համար ի հայտ է գալիս սուբյեկտիվ աղքատության հայեցակարգը, որի ելակետային դրույթը պայմանավորված է նրանով, որ սեփական իրավիճակի վերաբերյալ մարդու կարծիքը պետք է որոշիչ լինի աղքատության սահմանման հարցում, քանի որ անհատը այն սոցիալական միջավայրի փորձագետն է, որում ապրում է: Ի տարբերություն աղքատության բացարձակ ու հարաբերական հայեցակարգերի՝ սուբյեկտիվ աղքատության հայեցակարգը աղքատությունը չափելիս կիրառում է ոչ թե վիճակագրական տվյալներ ու ցուցանիշներ, այլ սոցիոլոգիական հարցումների արդյունքներ, որոնց գնահատականներն առավել ճշգրտորեն են արտահայտում մարդկանց ընկալումները սեփական սոցիալ-տնտեսական իրավիճակի վերաբերյալ:

Սուբյեկտիվ աղքատության հայեցակարգի սահմաններում մշակվել է երկու մոտեցում, որոնք կիրառում են աղքատության շեմի ու բարեկեցության մակարդակի մոդելավորման համար: Առաջին դեպքում մոդելի համար հիմք են նվազագույն եկամտի վերաբերյալ հարցի պատասխանները: Հարցը կարող է ձևակերպված լինել այսպես. *«Ամսական որքա՞ն եկամուտ է անհրաժեշտ Ձեզ ու Ձեր ընտանիքին, որ-*

*պեսզի «ծայրը ծայրին» հասցնեք»*, կամ այսպես՝ *«Նշե՛ք այն նվազագույն գումարի չափը, որից պակաս եկամտի դեպքում Ձեր ընտանիքը չի կարող գոյատևել»*:

Հարցվողի կողմից նշվող գումարը կախված է բազմաթիվ գործոններից, մասնավորապես ընտանիքի իրական եկամտից, ընտանիքի բնութագրիչներից *(ընտանիքի անդամների թիվ, տարիք և այլն)*: Սուբյեկտիվ աղքատության հայեցակարգի գործիքակազմի հիմքում այն ենթադրությունն է, որ նրանք, ում մոտ իրական եկամուտը համընկնում է նվազագույն պահանջվածին, առավել իրատեսորեն են պատկերացնում նվազագույն շեմը: Ավելի բարձր եկամուտներ ունեցող հարցվողները hակված են նվազագույն անհրաժեշտ եկամտի չափի մեծացմանը: Իսկ նվազագույն շեմից ցածր եկամուտ ունեցող հարցվողները, որպես կանոն, շեմից ցածր գումարներ են նշում:

Վերջին տարիներին կատարված հետազոտություններն ուղղված են սուբյեկտիվ աղքատության հայեցակարգի շրջանակում աղքատության շեմի մոդելավորման ժամանակ կարևորագույն այլ գործոնների ազդեցության ուսումնասիրմանը, որոնց թվում են.

1. **<u>ընտանիքում վաստակողների թիվը</u>**: Այն ընտանիքները, որոնց անդամներից շատերն են վարձատրվող աշխատանք կատարում, հավակնում են ավելի բարձր սպառողական հնարավորությունների, քան ավելի քիչ վարձատրվող անդամներ ունեցող ընտանիքները:
2. **<u>Ընտանիքի կառուցվածքը</u>**: Եթե հաշվի առնվի միայն ընտանիքի անդամների թիվը, ապա սխալ պատկերացում կստեղծվի այն մասին, որ ընտանիքի անդամնե-

րի թվի աճը համամասնորեն ավելացնում է հիմնական պահանջմունքների բավարարմանն ուղղված անհրաժեշտ եկամուտը: Օրինակ՝ երկու տարեկան երեխայի համար նախատեսված ծախսն էապես տարբերվում է հասուն մարդուն անհրաժեշտ ծախսից: Վեց անձից բաղկացած ընտանիքի ծախսերը գերազանցում են երեք անձից բաղկացած ընտանիքի ծախսերը, բայց ոչ ուղիղ համեմատական կարգով: Վեցհոգանոց մի ընտանիքը կարող է ներառել չորս չափահաս աշխատունակ անձ ու երկու անչափահաս, իսկ մյուսը՝ միայնակ մայր ու հինգ անչափահաս երեխաներ:

3. **Ընտանիքում հաշմանդամություն կամ քրոնիկ հիվանդություն ունեցող անդամի առկայությունը**: Այս պարագայում բժշկական սպասարկման ու վերականգնողական ծառայությունների համար պահանջվում են լրացուցիչ ծախսեր:
4. **Ընտանիքի գլխավորի տարիքը:** Տարբեր տարիքի մարդկանց պահանջմունքներն ու հավակնությունները հասարակության մեջ օբյեկտիվորեն տարբեր են, տարբեր են նաև եկամուտները: Երիտասարդ ընտանիքի գլուխը, որպես կանոն, համեմատաբար ցածր եկամուտներ ունի, բայց բարձր հավակնություններ: Հետևաբար որքան ավելի բարձր է ընտանիքի գլխավորի տարիքը, այնքան ավելի բարձր է ընտանիքի բարեկեցության մակարդակը:
5. **Հարցվողի սեռը**: Կանանց ու տղամարդկանց եկամուտները տարբեր են. կանայք, որպես կանոն, ուշ են մուտք գործում աշխատաշուկա և միջինում ավելի

ցածր են վարձատրվում, քան տղամարդիկ *(տե՛ս Աղյուսակ 6)*:

**Աղյուսակ 6.** Միջին ամսական անվանական աշխատավարձը՝ ըստ սեռի *(2019-2023 թթ., ՀՀ դրամ)* (ՀՀ վիճակագրական կոմիտե, 2024, էջ 138)

| Թվական | 2019 | 2020 | 2021 | 2022 | 2023 |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | 182 673 | 189 716 | 204 048 | 235 576 | 269 994 |
| **Տղամարդ** | 222 510 | 231 520 | 250 186 | 295 778 | 341 388 |
| **Կին** | 145 198 | 150 306 | 161 421 | 179 882 | 202 524 |
| **Կնոջ աշխատավարձի %-ային հարաբերակ-ցությունը տղամարդու աշխատավարձի նկատմամբ** | 65.3 | 64.9 | 64.5 | 60.8 | 59.3 |

Օրինակ՝ վիճակագրական տվյալների համաձայն՝ Հայաստանում թե՛ կանանց, թե՛ տղամարդկանց միջին ամսական անվանական աշխատավարձն աճում է, բայց ոչ համաչափ: Եթե 2019 թվականի տվյալներով կնոջ աշխատավարձը կազմում էր տղամարդու աշխատավարձի 65.3 %-ը, ապա 2023 թվականին այս ցուցանիշը նվազել է մինչև 59.3 % *(տե՛ս Աղյուսակ 6)*:

6. **Ընտանիքի անդամների կրթական մակարդակը** նույնպես ազդում է անձի հավակնությունների, ինչպես նաև ընտանիքի պահանջմունքների կառուցվածքի վրա:
7. **Հարցման նախօրեին ընտանիքի եկամտի էական փոփոխությունը** նույնպես կարող է անդրադառնալ հարցման արդյունքների վրա. ընտանիքի եկամտի մակարդակի կտրուկ աճը կամ նվազումը կարող է էա-

կանորեն ազդել նվազագույն եկամտի վերաբերյալ հարցին պատասխանների վրա: Նախ կարող են ազդել եկամտի նախորդ մակարդակի ժամանակ ձևավորված կարծրատիպերը, այնուհետև հարցվողը կորցնում է եկամտի ու պահանջմունքների համասարակշռության զգացողությունը:

8. **Եկամտի հիմնական ու կողմնակի աղբյուրների հարաբերակցությունը**: Սուբյեկտիվ գնահատականներ տալիս հարցվողը գլխավորապես կողմնորոշվում է եկամտի հիմնական աղբյուրից ստացվող եկամտով, եթե անգամ եկամտի կողմնակի աղբյուրները չեն զիջում կամ անգամ գերազանցում են եկամտի գլխավոր աղբյուրից ստացվող եկամուտը (OECD, 2013):

Աղքատության սուբյեկտիվ հայեցակարգի շրջանակում աղքատության չափման մյուս մոտեցման համաձայն՝ կենսամակարդակի մոդելը կառուցվում է ըստ եկամուտների մակարդակի գնահատման վերաբերյալ հարցի պատասխանների: Հարցը կարող է հնչել հետևյալ կերպ. *«Հաշվի առնելով այսօրվա իրականությունը՝ ամսական որքա՞ն գումարի առկայության դեպքում Դուք Ձեզ կզգաք.*

1. շատ վատ _________
2. վատ _________
3. անբավարար _________
4. բավարար _________
5. լավ _________*»:*

Հարցվողների պատասխանները տեղադրվում են ըստ կենսամակարդակի աճման, ինչը, ըստ էության, արտացոլում է եկամուտների ու բարեկեցության մակարդակի հարաբե-

րակցությունը: Նույն հարցը հակառակ հերթականությամբ, ըստ կենսամակարդակի նվազման, հարցվողին տալու պարագայում հարցվողները, որպես կանոն, ավելի ցածր գումարներ են նշում (Sen, 1985):

Եկամտի ու գումարի վերաբերյալ հարցերին զուգահեռ հաճախ տրվում են ընտանիքի բարեկեցության մակարդակը նկարագրող հարցեր: Օրինակ՝ Լևադա կենտրոնը Ռուսաստանում գործածում է հետևյալ հարցն ու համապատասխան կարգային սանդղակը: Հարցը հնչում է հետևյալ կերպ. *«Ինչպե՞ս կգնահատեք Ձեր ընտանիքի ներկայիս նյութական վիճակը՝ ելնելով ամսական եկամուտներից ու հնարավորություններից»*: Իսկ կարգային սանդղակի պատասխանների տարբերակները հետևյալն են.

1. նույնիսկ սննդի համար բավարար գումար չունենք,
2. գումարը բավարար է միայն սննդի համար,
3. գումարը բավարար է սննդի ու հագուստի համար, սակայն կենցաղային տեխնիկա գնել չենք կարող,
4. գումարը բավարար է սննդի, հագուստի ու կենցաղային էժան տեխնիկայի համար, բայց խոշոր տեխնիկայի *(օրինակ՝ սառնարան)* գնումը դժվար է,
5. կարող ենք ձեռք բերել անհրաժեշտ հիմնական ապրանքները, բայց երկարաժամկետ օգտագործման ապրանքներ *(կահույք, տեխնիկա)* գնելու համար հարկավոր է խնայողություններ անել կամ գնումը հետաձգել,
6. կարող ենք գնել երկարաժամկետ օգտագործման ապրանքներ, սակայն չենք կարող մեզ թույլ տալ արտերկրում հանգստանալ,

7. կարող ենք և՛ հանգստանալ, և՛ խնայողություններ անել, սակայն անշարժ գույք կարող ենք գնել միայն վարկով,
8. կարող ենք մեզ թույլ տալ և՛ հանգիստ, և՛ անշարժ գույք առանց վարկ վերցնելու (Levada Center, 2020):

Հարցումների արդյունքների վրա հիմնվող սուբյեկտիվ աղքատության հայեցակարգի աղքատության ցուցանիշները մեծապես կախված են հարցի ձևակերպումից ու հետազոտության արդյունքների ներկայացումից (Ravallion, 2012):

## 8.5. Աղքատության մշակույթ

«Աղքատության մշակույթ» հայեցակարգի հեղինակը Օսկար Լյուիսն *(1914-1970 թթ.)* է: Նա դիտարկում է աղքատությունը որպես ենթամշակույթ[51], որն ունի իր ուրույն կառուցվածքը, ռացիոնալության ընկալումն ու սերնդեսերունդ փոխանցվող կենսաոճը (Lewis, 1966):

«Աղքատության մշակույթ» հայեցակարգն աղքատությունը դիտարկում է ոչ միայն որպես եկամտով պայմանավորված սպառման հնարավորությունների ցածր մակարդակ կամ բացակայություն, այլ որպես անձի մշակույթի ու արժեհամակարգի հետևանք: Աղքատության ենթամշակույթի հետ սերտորեն կապված են սոցիալական այնպիսի երևույթներ, ինչպիսիք են մարգինալացումը, սոցիալական ինստիտուտներից

[51] **Ենթամշակույթը** *(subculture)* հասարակության այն մասն է, որն առանձնանում է իր յուրահատուկ նորմերով, արժեհամակարգով ու կենսակերպով, տարբերվում է գերիշխող մշակույթից *(dominant culture)*՝ չհակասելով վերջինիս: Ենթամշակույթներ կարող են առաջանալ՝ հիմնվելով տարիքային, մասնագիտական, կրոնական առանձնահատկությունների վրա *(Смелзер, 1994)*:

օտարումը, ապատիան[52], մոտիվացիայի պակասը, ձգտման բացակայությունը, ցածր ինքնագնահատականը և այլն: Այս հայեցակարգի կողմնակիցների կարծիքով աղքատության մշակույթի պարագայում եկամտի աճն էապես չի փոխում իրավիճակը. աղքատության մշակույթը կրող մարդիկ շարունակում են ապրել մեկ օրով, և ունենալով ավելի շատ եկամուտ՝ ծախսում են այն՝ չմտածելով վաղվա օրվա մասին: Եկամտի բարձրացումը չի հանգեցնում կենսառճի փոփոխմանն ու բարելավմանը:

Օ. Լյուիսն իր հետազոտություններն իրականացրել է Պուերտո-Ռիկոյում, Մեքսիկայում, Հնդկաստանում ու ԱՄՆ-ում, և այս բոլոր երկրներում նա հայտնաբերել է տևական աղքատության մեջ ապրող ընտանիքների մի ստվար զանգված, որոնք մոտիվացված չեն փոխելու իրենց ապրելակերպը՝ աղքատությունը հաղթահարելու նպատակով: Այսպիսի շերտ ձևավորվել է նաև Հայաստանում. դրանք սերնդեսերունդ նպաստ համակարգից օգտվող ընտանիքներն են, որոնք ամեն կերպ փորձում են պահպանել իրենց անապահով կարգավիճակը՝ նպաստից ու դրանով պայմանավորված սոցիալական ծառայությունների փաթեթից օգտվելու համար:

Թեև էմպիրիկ հետազոտությունները վկայում են աղքատների նման խավի առկայության մասին բոլոր հասարակություններում, խիստ վտանգավոր է աղքատության մշակույթի բնութագրիչները վերագրել աղքատության գծից ներքև գտնվող բոլոր ընտանիքներին: Նման միտումը հարցականի

---

52 **Ապատիան** *(հին հունարեն՝ ἀ – առանց + πάθος – կիրք, հուզմունք, գրգռվածություն)* անտարբերության, արտաքին աշխարհի, զգացմունքների ու շարժառիթների նկատմամբ հետաքրքրության բացակայության վիճակ է:

տակ կդներ սոցիալական քաղաքականության միջոցառումների նպատակահարմարությունն ու ծախսարդյունավետությունը՝ մեղադրելով աղքատներին աղքատ լինելու մեջ, իսկ աղքատության հաղթահարումը դարձնելով անհնարին:

Այս խնդիրը լուծելու համար ամերիկացի գիտնական Էդվարդ Բանֆիլդն առաջարկում է տարանջատել «**աղքատության մշակույթ**» ու «**իրավիճակային աղքատություն**» հասկացությունները: Աղքատության մշակույթը «զուտ այսօրվա օրով ապրելու» մարդկանց կողմնորոշման արդյունք է: Իսկ նրանք, ովքեր պատահականորեն են հայտնվել աղքատության ճիրաններում և փնտրում են ստեղծված իրավիճակից դուրս գալու ուղիներ՝ օգտագործելով յուրաքանչյուր հնարավորություն՝ իրավիճակը փոփոխելու համար, իրավիճակային աղքատության մեջ են: Սոցիալական քաղաքականության միջոցառումներն առավել արդյունավետ են հատկապես իրավիճակային աղքատության հաղթահարման հարցում:

Բանֆիլդի պնդմամբ աղքատության իրավիճակում պատահականորեն հայտնված մարդը կարող է վերականգնել իր կարգավիճակը, երբ արտաքին պատճառներն անհետանում են: Ի հակադրություն վերջինիս՝ նրանք, ովքեր երկար են մնում հասարակության «հատակում», արտաքին պայմանների ազդեցությունից՝ հայտնվում են այդտեղ անկախ հեռանկարի մասին մտածելու և ապագան կառուցելու հոգեբանական անկարողության արդյունքում: Աղքատության մշակույթի կրողն ի վիճակի չէ պլանավորել իր ապագան, կազմակերպվել և մղվել դեպի նպատակի իրականացումը (Banfield, 1958):

Աղքատության ենթամշակույթի ներկայացուցիչների համար ուղղահայաց սոցիալական շարժունության[53] հնարավորությունները խիստ սահմանափակ են: Աղքատության մշակույթի հայեցակարգի համաձայն՝ տարանջատվում են աղքատության այնպիսի պատճառներ, ինչպիսիք են՝ սեփականությունը պահպանելու անկարողությունը, խնայողություններ անելու հմտության բացակայությունը, միջանձնային կայուն հարաբերությունների կառուցման հմտության պակասը, կրթություն ստանալու մոտիվացիայի բացակայությունը, առկա սոցիալական ինստիտուտներում ինտեգրման ցածր մակարդակը:

Լյուիսն առանձնացնում է աղքատության մշակույթի հոգեբանական ու սոցիալական հետևյալ բնութագրիչները.

- փոքր տարածքում *(բնակարանում)* մեծ թվով մարդկանց ապրելը,
- սեփականության բացակայությունը,
- ալկոհոլիզմի բարձր մակարդակը,
- հանցագործությունների բարձր մակարդակը,
- երեխաների նկատմամբ բռնության դեպքերի բարձր հաճախականությունը,
- ընտանիքում կանանց նկատմամբ բռնությունը,

---

53 **Սոցիալական շարժունությունը** *(social mobility)* հասարակության մեջ անհատի կամ սոցիալական խմբի կարգավիճակի, զբաղեցրած դիրքի փոփոխությունն է: Ուղղահայաց սոցիալական շարժունությունը ենթադրում է անհատի կամ խմբի տեղաշարժը սոցիալական հիերարխիայի աստիճաններով: Վերընթաց ուղղահայաց սոցիալական շարժությունը ենթադրում է սոցիալական դիրքի բարելավում *(օրինակ՝ պաշտոնի, աշխատավարձի բարձրացում)*: Վարընթաց ուղղահայաց սոցիալական շարժությունը սոցիալական դիրքի փոփոխություն դեպի ավելի ցածր դիրքն է *(օրինակ՝ գործազրկություն, պաշտոնի իջեցում, եկամտի կրճատում) (Смелзер, 1994)*:

- միայնակ մայրերի մեծ թիվը,
- վաղ սեռական հարաբերությունները, արտամուսնական կապերը,
- ավտորիտար վարքագծի նկատմամբ ուժեղ հակվածությունը,
- հնազանդության զգացումը, կոնֆորմիզմը[54],
- հոգեկան շեղումները,
- բժիշկների, իշխանության ու եկեղեցու նկատմամբ թերահավատությունը,
- ազգային թույլ ինքնությունը,
- գիտելիքների սահմանափակ մակարդակը, մասնավորապես հասարակության մեջ տեղի ունեցող իրադարձությունների ու զարգացումների վերաբերյալ (Lewis, 1961):

Աղքատության մշակույթի ընդդիմախոսները, համարելով, որ այս հայեցակարգը ռեակցիոն բնույթ է կրում և պարալիզացնում է սոցիալական քաղաքականությունը, քանի որ «հանցագործության մեղքը բարդում է զոհի վրա» *(անգլ.՝ blaming the victim)*, հետևյալ փաստարկներն են բերում.

1. աղքատությունը ոչ թե հոգեբանական, այլ սոցիալական պաթոլոգիա է,
2. աղքատները ոչ աղքատներից տարբերվում են ոչ թե իրենց անձնային որակներով, այլ տնտեսական ու սոցիալական հնարավորություններով,

[54] **Կոնֆորմիզմն** անձի միտումն է՝ իր վերաբերմունքը, համոզմունքներն ու վարքագիծը հարմարեցնելու խմբի արժեքներին ու նորմերին՝ սոցիալական ճնշման, ընդունված լինելու ցանկության կամ հակասություններից խուսափելու նպատակով, նույնիսկ այն դեպքում, երբ դա հակասում է իր անձնական համոզմունքներին *(Cialdini & Goldstein, 2004)*:

3. աղքատության մեջ մարդիկ հայտնվում են սոցիալական ինստիտուտների կողմից դուրսմղման արդյունքում (Ryan, 1971):

Ընդդիմախոսների մյուս մասը, չժխտելով աղքատության մշակույթի առկայությունը, համարում են, որ այդ հայցակարգը վերաբերելի է միայն այն աղքատների պարագայում, որոնք ապրում են աղքատության մեջ արդեն մի քանի սերունդ շարունակ: Եվ այս խումբը կազմում է աղքատների փոքր տոկոսը (Gans, 1995):

Աղքատության մշակույթի հայեցակարգի ընդդիմախոսները մեծ վտանգ են տեսնում, քանի որ այս հայեցակարգի ներքո աղքատությունը դիտարկվում է որպես փակուղի, անելանելի վիճակ, և այն աղքատության հաղթահարման ուղղությամբ իշխանությունների պասիվ գործունեության արդարացում է:

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Ի՞նչ տարբերություններ կան բացարձակ ու հարաբերական աղքատության հայեցակարգերի միջև:
2. Ինչպե՞ս է հաշվարկվում Ջինիի գործակիցը, և ի՞նչ է այն ցույց տալիս:
3. Ինչո՞ւ են քննադատում «աղքատության մշակույթ» հայեցակարգը:
4. Ինչպե՞ս են սոցիալական աշխատողները մասնակցում աղքատության կրճատմանը:

5. Ոչ ֆինանսական ո՞ր ցուցանիշներ են կարևոր՝ աղքատության բազմաչափությունը գնահատելու համար:

**Հանձնարարություններ**

1. Համեմատե՛ք վերջին տասնամյակի ընթացքում Ջինիի գործակցի արժեքի փոփոխությունը Հայաստանում և այլ երկրներում: Կազմե՛ք գծապատկեր և մեկնաբանե՛ք այն:
2. Ներկայացրե՛ք, թե վերջին տասնամյակում ինչպես է փոփոխվել պարենային աղքատության գիծը Հայաստանում: Համեմատե՛ք այն գլոբալ աղքատության գծի հետ:
3. Օգտվելով սուբյեկտիվ աղքատության չափման հարցադրումներից՝ իրականացրե՛ք 10 հոգու հարցում և համեմատե՛ք պատասխանները՝ ըստ սեռի, տարիքի, կրթության և այլ ցուցանիշների:

**Խմբային բանավեճեր**

Թեմա 1. «Աղքատության մշակույթ հայեցակարգը անընդունելի է սոցիալական աշխատողների համար»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթետիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# ԳԼՈՒԽ 9. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## 9.1. Գաղափարախոսական կողմնորոշումները սոցիալական քաղաքականության համատեքստում

Սոցիալական քաղաքականության արժեքների, նպատակների ու առաջնահերթությունների ձևավորման հարցում վճռորոշ դեր են խաղում քաղաքական գաղափարախոսությունները: Գաղափարախոսական բաժանումներից ամենաներկարակյացն ու ազդեցիկը աջ ու ձախ գաղափարական երկբաժանումն (դիխոտոմիան) է:

Չնայած «աջ/ձախ» բաժանումը հաճախ վիճարկվում է որպես հնացած կամ անարդյունավետ, այս երկու բևեռները ոչ միայն արտահայտում են հասարակության, արդարության ու պետության դերի վերաբերյալ տարբեր պատկերացումներ, այլև ազդում են այն քաղաքական որոշումների վրա, որոնք ուղղակիորեն անդրադառնում են մարդկանց կյանքի ու առօրյայի վրա:

Սոցիալական աշխատողների ու քաղաքականություն մշակողների համար այս գաղափարական հիմքերը ընկալելը գործնական անհրաժեշտություն է: Այն, թե ինչպես է կառավարությունը մոտենում աղքատության, կրթության, առողջապահության, բնակարանային ապահովման ու զբաղվածության ծառայությունների հիմնահարցերին, հաճախ կախված է նրանից՝ որտեղ է այն՝ աջ ու ձախ գաղափարախոսական առանցքում:

Ձախակողմյան մոտեցումները շեշտադրում են սոցիալական արդարությունը, ռեսուրսների վերաբաշխումն ու բարե-

կեցության համակարգերի ընդլայնումը: Իսկ աջակողմյա հայացքների տեր քաղաքական գործիչները նախընտրում են անհատական պատասխանատվությունը, շուկայի վրա հիմնված լուծումներն ու պետական միջամտության սահմանափակումը *(տե՛ս Նկար 12)*:




**Նկար 12.** Ձախ ու աջ քաղաքական բևեռները

Այս տարբերությունն ուղղակիորեն առնչվում է սոցիալական աշխատողների աշխատանքին, որոնք գործում են անհատական կարիքների ու հանրային քաղաքականության հատման կետում: Սոցիալական աշխատողները պաշտպանում են խոցելի խմբերի շահերը, միջնորդ են քաղաքացիների ու սոցիալական ինստիտուտների միջև և մասնակցում են քաղաքականության մշակմանն ու գնահատմանը: Այս դերն արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ է խորապես գիտակցել այն գաղափարախոսական շրջանակը, որոնք ձևավորում են օրենսդրական կարգավորումները, ուղղորդում են բյուջետային հատկացումներն ու ինստիտուցիոնալ առաջնահերթությունները:

## 9.2. Աջ ու ձախ. պատմական ակունքներ ու հիմնարար տարբերություններ

Լինել **աջ** նշանակում է երազել երկրի՝ Հայաստանի **հզորության** մասին: Լինել **ձախ** նշանակում է երազել քաղաքացիների՝ հայերի **երջանկության** մասին: Սա պաշտոնական

սահմանում չէ, և առաջին հայացքից պարզ չէ՝ ինչպես կարող են «պետության հզորությունն» ու «մարդկանց երջանկությունը» լինել տարբեր բևեռներում, իրար հակադրվել:

Քաղաքական ուժերի աջերի ու ձախերի բաժանումն արմատներով գալիս է 1789 թվականից, երբ Ֆրանսիայի խորհրդարանի նախագահի աջ ու ձախ կողմերում նստում էին տարբեր կուսակցությունների ներկայացուցիչները: Ձախ կողմում նստում էին **Յակոբինները**, որոնք ձգտում էին ավելի խորքային փոփոխությունների, իսկ աջ կողմում՝ **Ժիրոնդիստները**, որոնք պաշտպանում էին սահմանադրական միապետության պահպանումը:

Դիտարկենք աջ ու ձախ քաղաքական ուժերի գաղափարախոսությունների հիմնական տարբերությունները մի քանի համատեքստերում:

**Սոցիոլոգիական համատեքստ**

Ձախերը ներկայացնում են աշխատավոր, սեփականություն չունեցող շերտերը, որոնք ապրում են աշխատավարձով և պաշտպանում են խոցելի խմբերի շահերը:

Աջերը պաշտպանում են այն խավի շահերը, որոնք շահույթ են ստանում աշխատավոր խավի շնորհիվ (ձեռնարկատերեր, հողատերեր, միջին ու խոշոր սեփականատերեր): Նրանք կա՛մ չեն աշխատում, կա՛մ աշխատում են սեփական ձեռնարկությունում:

Այս բաժանումը ցույց է տալիս աջերի ու ձախերի սոցիալական բևեռացումը:

**Պատմական համատեքստ**

Ձախերը հանդես են գալիս որպես փոփոխությունների ու առաջընթացի կողմնակիցներ: Նրանք կողմ են հեղափոխու-

թյուններին ու բարեփոխումներին: Բնականաբար, հեղափոխությունն ավելի ձախական է, քան բարեփոխումները: Դրանով իսկ ձախերը ցույց են տալիս իրենց կողմնորոշումը դեպի առաջընթաց: Նրանց համար իշխանությունը փոփոխություններ կատարելու միջոց է: Ձախերն իդեալիստ են, դրսևորում են ակնհայտ, երբեմն՝ վտանգավոր ուտոպիստական[55] հայացքներ:

Աջերը հանդես են գալիս որպես կարգուկանոնի, ավանդույթների ու պահպանողականության կողմնակիցներ, նրանք հաճախ ձգտում են վերականգնել անցյալը: Նրանք առաջընթացին դեմ չեն արտահայտվում, սակայն իշխանությունը դիտարկում են որպես ժառանգականության պահպանման միջոց: Աջերն ավելի իրատես են, նրանց համար կարևոր է գործնական օգտակարությունը:

Ձախերն ապագայի մասին են մտածում, աջերը՝ ներկայի ու անցյալի:

**Քաղաքական համատեքստ**

Ձախերը հենվում են ժողովրդավարական ինստիտուտների վրա (խորհրդարան, արհմիություններ, քաղաքացիական ասոցիացիաներ): Ձախերին կարելի է համարել հանրապետության գաղափարի կողմնակիցներ, նրանք հեշտությամբ տրվում են դեմագոգիային[56]:

---

55 **Ուտոպիան** *(հին հուն.՝ οὐ – ոչ, τόπος – տեղ, գոյություն չունեցող տեղ)* մարդկային հասարակության կատարյալ մոդելի վերաբերյալ երևակայական պատկերացում է, որն արտահայտում է իդեալական պետական, սոցիալական ու տնտեսական համակարգի տեսլականը *(More, 2003)*:

56 **Դեմագոգիան** *(հուն.՝ dēmos – ժողովուրդ, agōgos – առաջնորդող)* քաղաքական կամ հասարակական առաջնորդության ձև է, երբ գործիչը մարդկանց աջակցությունը ստանալու նպատակով կիրառում է հուզական

Աջերը հենվում են պետության, ազգի, հայրենիքի, ուժեղ ղեկավարի գաղափարների վրա: Աջերն ազգայնական գաղափարների[57] կրող են, երբեմն՝ քսենոֆոբ[58] ու ավտորիտար[59]:

**Տնտեսական համատեքստ**

Ձախերը դեմ են կապիտալիզմին ու սեփականաշնորհմանը: Նրանք արտադրական գործընթացների նկատմամբ պետական վերահսկողության, արդյունաբերության ազգայնացման[60] և պլանավորման կողմնակից են:

---

մանիպուլյացիաներ, սուտ խոստումներ, նախանձի կամ վախի շահարկում՝ հաճախ խուսափելով ռացիոնալ փաստարկներից ու իրական լուծումներից *(Roberts-Miller, 2017)*:

57 **Ազգայնական գաղափարները** *(նաև նացիոնալիստական գաղափարներ)* սոցիալ-քաղաքական համոզմունքներ են, որոնք շեշտում են ազգի, ազգային ինքնության, մշակույթի ու շահերի գերակայությունը: Ազգայնականությունը հաճախ դառնում է համախմբող գաղափարախոսություն պետության ստեղծման, պահպանման կամ ազգային ինքնիշխանության պաշտպանության համար *(Smith, 2010)*:

58 **Քսենոֆոբիան** *(հին հուն. ξένος – օտար, φόβος – վախ)* անհանդուրժողականություն է օտարի, անծանոթի կամ անսովորի նկատմամբ, օտարն ընկալվում է որպես տհաճ ու վտանգավոր: Քսենոֆոբիան հանգեցնում է տեղական համայնքից «օտար» համարվող անձանց խմբերի բացառման, ինչպես նաև նրանց նկատմամբ խտրականության՝ քաղաքականության, կենցաղի, զբաղվածության, կրթության ու սոցիալական ապահովության ոլորտներում *(Dovidio & Esses, 2001)*:

59 **Ավտորիտարը** *(լատ.՝ Auctoritas – իշխանություն, ազդեցություն)* ղեկավարման ոճ է կամ համակարգ, որը բնորոշվում է իշխանության ու վերահսկողության ձգտմամբ, ինչպես նաև այլակարծության ու քննադատության հանդեպ անհանդուրժողականությամբ *(Oxford University Press, 2024)*:

60 **Արդյունաբերության ազգայնացումը** *(nationalization)* քաղաքական, տնտեսական և իրավական գործընթաց է, որի միջոցով պետությունը սեփականաշնորհում է մասնավոր անձանց կամ կազմակերպություններին պատկանող ձեռնարկությունները, արտադրական միջոցները կամ բնական

Աջերը կողմ են ազատ շուկայական հարաբերություններին, մրցակցությանը, մասնավոր սեփականությանը: Թեև ներկայումս ձախերը նույնպես ստիպված են հարմարվել շուկայական տնտեսության մոդելին, հիմնական սկզբունքային հակադրությունը պահպանվում է:

Ձախեր – պետական վերահսկողություն, աջեր – շուկայական կարգավորում:

**Բարոյական ու մշակութային համատեքստ**

Ձախերն առաջնորդվում են հավասարության, աշխարհիկության, անհատական ազատության, համերաշխության, խոցելիների պաշտպանության, ինտերնացիոնալիզմի[61] սկզբունքներով: Նրանք պայքարում են ազատ ժամանակ ունենալու ու հանգստի իրավունքների համար, աշխատանքի արդար վարձատրության, աշխատանքային շաբաթի սահմանափակման ու կենսաթոշակային տարիքի աճի զսպման ուղղությամբ:

Աջերը կարևորում են անհատական հաջողությունները, ձեռնարկատիրական ազատությունը, կրոնական արժեքները, հասարակական հիերարխիան, անվտանգությունը, հայրենիքի ու ընտանիքի հանդեպ սերը, աշխատասիրությունը, համառությունը, մրցակցությունն ու պատասխանատվության զգացումը:

---

ռեսուրսները՝ դարձնելով դրանք պետական սեփականություն *(Baldwin, 2020)*:

[61] **Ինտերնացիոնալիզմը** *(լատ.՝ inter – միջև և natio – ազգ)* գաղափարախոսություն է, որը քարոզում է ժողովուրդների միջև բարեկամություն ու համագործակցություն *(Большой энциклопедический словарь, 2024)*:

**Արդարության ու հավասարության ընկալումը** նույնպես տարբեր է աջ ու ձախ քաղաքական հայացքներ ունեցող ուժերի մոտ:

Ձախերի համար արդարությունը հավասարության հոմանիշն է. «յուրաքանչյուրին՝ ըստ իր կարիքների»:

Աջերի համար արդարությունը ներդրմանը համապատասխան վարձատրությունն է. «յուրաքանչյուրին՝ ըստ իր վաստակի» (Comte-Sponville, 2001):

Աջ քաղաքական կողմնորոշում ունեցող ուժերի համոզմամբ հասարակության մեջ անհավասարությունը ոչ միայն անխուսափելի է, այլև դրական երևույթ է, քանի որ այն նպաստում է աշխատաշուկայում մրցակցության խթանմանը, աշխատանքի մոտիվացիային ու տաղանդավոր մարդկանց գործունեության խթանման հիմքեր է ստեղծում: Համաձայն իրենց փաստարկների՝ անհավասարությունը նպաստում է նաև կապիտալի կուտակմանն ու տնտեսական աճին:

Ձախ քաղաքական կողմնորոշում ունեցող ուժերը, համաձայնելով ցանկացած հասարակության մեջ տնտեսական անհավասարության անխուսափելի լինելու հանգամանքին, այնուամենայնիվ, անթույլատրելի են համարում բևեռացման բարձր մակարդակը: Ի հակադրություն աջակողմյան ուժերի՝ նրանք ներկայացնում են հետևյալ փաստարկները.

- կան բազմաթիվ պետություններ, որոնցում հասարակությունը սոցիալապես խիստ բևեռացված չէ, սակայն տնտեսությունը բավականին արդյունավետ է աշխատում *(օրինակ՝ Գերմանիա, Ճապոնիա)*, ինչն իր հերթին ենթադրում է, որ անհավասարությունը տնտեսության կայունության անհրաժեշտ նախապայման չէ,

- տնտեսական բնեռացման ու աշխատանքի մոտիվացիայի միջև կապը միանշանակ չէ,
- տնտեսական խթանը ակտիվության ու մրցակցության միակ շարժառիթը չէ: Հասարակության մեջ կան նաև այնպիսի խթաններ, ինչպիսիք են հեղինակությունն ու իշխանությունը, որոնք առաջացնում են, եթե ոչ առավել, ապա նույն մակարդակի մրցակցություն:

Քաղաքական աջ ու ձախ ուժերի բաժանումը խիստ պայմանական է: Իրականության մեջ շատ քաղաքական ուժեր արտահայտում են ինչպես աջերին, այնպես էլ ձախերին բնորոշ դիրքորոշումներ: Կարևոր է, որ այս գաղափարախոսական բաժանումը պարզաբանում է սոցիալական, տնտեսական ու բարոյական խնդիրների շուրջ մտածողության տարբերությունները:

***Օրինակ 1.*** *Չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ Սահմանադրությունը չի կարգավորում քաղաքական կուսակցությունների ձևավորումը, կառուցվածքն ու գործունեությունը, XIX դարի կեսերից երկրի քաղաքական դաշտում գերիշխում և քաղաքական պայքար են մղում երկու խոշոր կուսակցություններ:* ***Հանրապետական կուսակցությունը*** *հիմնականում կրում է աջ քաղաքական գաղափարներ, մինչդեռ* ***Դեմոկրատական կուսակցությունը****՝ համեմատաբար ձախ: ԱՄՆ նախագահի պաշտոնը, որպես կանոն, յուրաքանչյուր 4-8 տարին մեկ անցնում է հանրապետականներից դեմոկրատներին կամ հակառակը: Հանրապետականները, ընդհանուր առմամբ, պաշտպանում են բիզնեսի շահերը՝ նպաստելով սեփականատերերի բարգավաճմանը, իսկ դեմոկրատներն առաջնահերթություն են տալիս սոցիալական հիմնախնդիրներին և խթանում սոցիալական ծրագրերի զարգացումը: Նախագահ Բիլլ Քլինթոնը (1993-2001 թթ.) եղել է Դեմոկրատական կուսակցության ներկայացուցիչ, Ջորջ Բուշ Կրտսերը (2001-2009 թթ.)՝ հանրապետական, Բարաք Օբաման (2009-*

*2017 թթ.)՝ դեմոկրատ, Դոնալդ Թրամփը (2017-2021 թթ.)՝ հանրապետական, Ջո Բայդենը (2021-2025 թթ.)՝ դեմոկրատ: 2025 թվականին իշխանության վերադարձավ Հանրապետական կուսակցության ներկայացուցիչ Դոնալդ Թրամփը:*

Այդուհանդերձ, սոցիալական աշխատանք մասնագիտության արժեքներն ավելի մոտ են ձախ քաղաքական գաղափարախոսությանը, քանի որ հիմնված են հարստությունից, շուկայից, ազգային շահերից անկախ լինելու վրա և խոնարհվում են հումանիզմի ու առաջընթացի առջև:

*«Ձախերը հպարտությամբ հայտարարում են, որ ձախ են: Աջերը խուսափում են, որ աջ են»* (Comte-Sponville, 2001):

## 9.3. «Պայտի» քաղաքական տեսություն

XX դարի երկրորդ կեսին քաղաքագետներն ու սոցիոլոգները սկսեցին նկատել, որ քաղաքական սպեկտրի երկու բևեռներն ընդհանուր գծեր ունեն:

1950-ական թվականներին բրիտանացի հոգեբան Հանս Այզենկը *(1917-1997 թթ.)* առաջիններից էր, որն առաջ քաշեց «պայտի» գաղափարը: Նա, լինելով հակակոմունիստ, միտումնավոր համեմատեց կոմունիզմն[62] ու նացիզմը[63], իսկ

---

[62] **Կոմունիզմը** *(լատ.՝ communis – ընդհանուր)* ծայրահեղ ձախ ուղղվածության տեսական հասարակական ու տնտեսական համակարգ է, որը հիմնված է արտադրության միջոցների նկատմամբ հասարակական սեփականության վրա, ինչի միջոցով ապահովվում է սոցիալական հավասարությունը: Գործնականում կոմունիզմ կառուցելու իրական փորձերը հաճախ հանգեցրել են տոտալիտար ռեժիմների ստեղծման, որոնք բնութագրվել են մասնավոր սեփականության բացակայությամբ ու կուսակցության դիկտատուրայով: «Կոմունիստական պետություն» եզրույթն արևմտյան մամուլը գործածել է ԽՍՀՄ-ի և այն երկրների վերաբերյալ, որոնք իրենց հռչակում էին սոցիալիստական (Carens, 2003):

կենտրոնամետներին ներկայացրեց որպես «նուրբ մտածող-ներ»՝ ի տարբերություն «կոշտ մտածող» ձախերի ու աջերի (Eysenck, 1954):

1970-ական թվականներին ֆրանսիացի փիլիսոփա Ժան-Պիեռ Ֆայը *(ծն. 1925)* շարունակեց այս ուղղությունը՝ պնդելով, որ ձախն ու աջը հավասարապես տոտալիտար են (Faye, 1972): Սա ուղղված էր իր գաղափարական հակառակորդներին, հատկապես Ժաք Դերիդային *(1930-2004 թթ.)*:

Այս երևույթը գիտական անվանում ստացավ՝ **«պայտի» տեսություն** *(horseshoe theory)*: Այս տեսության համաձայն՝ ծայրահեղ ձախ ու ծայրահեղ աջ ուժերն իրականում միմյանց ավելի մոտ են, քան քաղաքական կենտրոնին: Քաղաքական գաղափարախոսությունների երկբևեռ բաժանման առանցքը ծռվում է ու դառնում է պայտաձև կոր, որի կենտրոնական կետը ներկայացնում է կենտրոնամետ քաղաքական գաղափարախոսություն, իսկ ձախ ու աջ եզրերը մոտենում են իրար *(տե՛ս Նկար 13)*:

[63] **Նացիզմը** նացիոնալ-սոցիալիզմի կրճատ ձևն է *(գերմ.՝ Nationalsozialismus),* ծայրահեղ աջ գաղափարախոսություն, ֆաշիզմի տեսակ, որը հիմնված է «արիական ռասայի» գերազանցության մասին ռասիստական տեսության ու «ժամանակակից տարածության» (Lebensraum) ստեղծման գաղափարի վրա «ռասայական առումով մաքուր» պետության համար այլ ժողովուրդների նվաճման ու ոչնչացման միջոցով: Այս գաղափարախոսությունն է իշխանության բերել Գերմանիայում Ադոլֆ Հիտլերին, դարձել Երկրորդ համաշխարհային պատերազմի բռնկման, հրեաների, գնչուների և այլ խմբերի ցեղասպանության, ինչպես նաև Եվրոպայի մեծ մասի օկուպացիայի պատճառ (Антонов, 2008):




**Նկար 13.** «Պայտի» տեսություն

Բրինքեթը նկատում է հետևյալ հակասությունները: Ներկայումս առողջ ապրելակերպի հետևորդները պաշտպանում են Դոնալդ Թրամփին, երբ նա դեմ է արտահայտվում պատվաստումներին: Ֆեմինիստները պաշտպանում են հղիության արհեստական ընդհատման սահմանափակումները: Պահպանողական քաղաքական գործիչները միավորվում են բնապահպանների հետ՝ ընդդեմ հողմաէներգետիկայի (Brincat, 2024):

«Պայտի» տեսությունը կարող է օգտակար լինել որպես քաղաքական տարբերությունների պարզեցված պատկերացում: Այս մոդելը քննադատում են, քանի որ նույն հարթության վրա է դնում այն քաղաքական շարժումները, որոնք պայքարում են ճնշումների ու գերազանցության դեմ, և այն քաղաքական շարժումները, որոնք սրում են անհավասարությունը: Բացի դրանից՝ ծայրահեղ ձախ ու աջ բևեռներում կան բազմաթիվ հակասական հայացքներ, որոնք դինամիկ են և փոխկապակցված: «Պայտի» տեսությունն ի վիճակի չէ բացատրել այդ գաղափարական շարժումների միջև էական տարաձայնությունները:

## 9.4. Նոլանի գծապատկեր

1969 թվականին **Դեյվիդ Նոլանը** *(1943-2010 թթ.)*, համարելով, որ քաղաքական գաղափարախոսությունների երկբևեռ բաժանումն այլևս չի բավարարում՝ առկա քաղաքական դաշտի դերակատարների տարաբնույթ հայացքները բնութագրելու համար, առաջարկեց այդ նպատակով կիրառել քաղաքական սպեկտրի գծապատկեր, որն անվանվեց Նոլանի գծապատկեր (Nolan, D. 1971): Վերջինս քարտեզագրում է քաղաքական հայացքները երկու առանցքով՝ տնտեսական ազատությունների X առանցք ու անձի ազատությունների Y առանցք (Miller, Kim & Roberts, 2023; Vásquez & McMahon, 2023): Յուրաքանչյուր առանցքում արժեքները տատանվում են 0-ից մինչև 100 %՝ ամբողջական պետական վերահսկողությունից մինչև լրիվ ազատություն: Այսպիսով՝ հնարավոր է պատկերել յուրաքանչյուր անձի կամ կուսակցության դիրքորոշումը՝ ըստ այն բանի, թե ինչքան ազատության կամ պետական վերահսկողության կողմնակից է նա *(տե՛ս Նկար 14)*:



**Նկար 14.** Նոլանի գծապատկեր

Նոլանի կարծիքով գրեթե բոլոր քաղաքական խնդիրները կարելի է բաժանել երկու լայն խմբի՝ **տնտեսական** ու **անձնական ազատություններ**:

- **Տնտեսական գործունեություն** է այն, ինչ մարդիկ անում են որպես արտադրողներ ու սպառողներ. ինչ են գնում կամ վաճառում, ինչ են արտադրում, որտեղ են աշխատում, ում են վարձում և ինչպես են տնօրինում իրենց գումարը: Տնտեսական ազատությունը ենթադրում է բիզնես սկսելու, սեփականություն գնելու, շինություն կառուցելու, պայմանագրեր կնքելու, գրասենյակում աշխատելու ազատություն (Gwartney et al., 2023):
- **Անձնական գործունեություն** է այն, ինչ մարդիկ անում են հարաբերություններում ինքնարտահայտվելիս իրենց մարմնի ու մտքի հետ: Անձի ազատությունը ներառում է ամուսնանալու, անձնական կյանքի, խոսքի, գրքեր կարդալու, ֆիլմեր դիտելու, ուտելիք կամ դեղամիջոց ընտրելու, դավանանքի, կազմակերպություններին անդամակցելու, ընկերներ ընտրելու, տեղաշարժվելու ազատություն (Berlin, 1969):

Նոլանի գծապատկերում անձի ազատությունների ու տնտեսական ազատությունների առանցքներով ստացված կոորդինատային համակարգում քաղաքական դիրքորոշումը կարող է տեղակայվել քառակուսու ցանկացած կետում: Սակայն Նոլանն առանձնացնում է քաղաքական ներքոհիշյալ հիմնական գաղափարախոսությունները:

- **Ձախ քաղաքական ուժերը** *(օրինակ՝ ամերիկացի լիբերալները/ազատականները)* սովորաբար պաշտպա-

նում են անհատական ազատությունները, բայց կողմնակից են ավելի շատ պետական միջամտությանը տնտեսության մեջ *(օրինակ՝ նվազագույն աշխատավարձի սահմանում)*:

- **Աջ քաղաքական ուժերը** *(օրինակ՝ ամերիկացի պահպանողականները)* հակված են ազատ շուկային. տնտեսական ազատությունների կողմնակից են, բայց աջակցում են անձնային ոլորտում առավելապես վերահսկողությանը *(օրինակ՝ թմրամիջոցների օգտագործման արգելքներ)*:
- **Լիբերտարիանները** կողմնակից են անձի ու տնտեսական ազատությունների բարձր մակարդակին և դեմ են պետական միջամտություններին: Նոլանի քաղաքական հայացքները համընկնում են այս դիրքորոշմանը:
- **Ավտորիտարները** կողմ են պետական վերահսկողությանը ինչպես տնտեսության, այնպես էլ անձնական կյանքի նկատմամբ: Այս դիրքորոշումը Նոլանի գծապատկերի այլ տարբերակներում երբեմն անվանում են «տոտալիտար» «պետական» կամ «պոպուլիստական»:
- **Կենտրոնամետները** ձգտում են հավասարակշռված մոտեցման, երբ որոշ ոլորտներում պետությունն է միջամտում, իսկ որոշ ոլորտներում ազատություն կա *(տե՛ս Նկար 14)*:

Նոլանի մշակած մոդելն ընդլայնում է քաղաքական դիրքորոշումների վերլուծության հնարավորությունները՝ առանձնահատուկ տեղ հատկացնելով լիբերտարիանական քաղաքական հայացքներին:

## 9.5. Սոցիալական քաղաքականության մոդելները

Պետության սոցիալական քաղաքականությունը պայմանավորված է իշխանության քաղաքական հայացքներով ու գաղափարախոսությամբ: Այն դինամիկ փոփոխվում է տարբեր ժամանակահատվածներում և տարբերվում է պետությունից պետություն:

Սոցիալական քաղաքականության մի քանի հիմնական մոդելներ կան, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու սկզբունքները: Առավել տարածված են լիբերալ, պահպանողական, սոցիալ-դեմոկրատական ու կորպորատիվ մոդելները:

**Սոցիալական քաղաքականության լիբերալ (ազատական) մոդելը** *(հայտնի է նաև որպես անգլոսաքսոնական)* բնութագրվում է սոցիալական ոլորտում կառավարության նվազագույն միջամտությամբ: Հիմնական սկզբունքը սեփական բարեկեցության համար անհատական պատասխանատվությունն է: Պետությունը տրամադրում է նվազագույն սոցիալական օգնություն, իսկ սոցիալական պաշտպանության մեջ հիմնական դերը խաղում են մասնավոր ապահովագրական ընկերություններն ու բարեգործական կազմակերպությունները (Pankratz, 2014):

**Սոցիալական քաղաքականության պահպանողական մոդելը** *(հայտնի է նաև որպես մայրցամաքային)* ենթադրում է կառավարության ավելի ակտիվ մասնակցություն, բայց ավանդական սոցիալական կառուցվածքների ու հիերարխիաների պահպանման շրջանակում: Սոցիալական քաղաքականությունը նպատակ ունի աջակցելու ընտանեկան արժեքներին ու պահպանելու հասարակության կայունությունը:

Պետությունն ապահովում է սոցիալական պաշտպանություն, բայց հիմնականում աշխատանքային հարաբերությունների ու ապահովագրության միջոցով (Shizume, Kato & Matsuda, 2020):

**Սոցիալական քաղաքականության սոցիալ-դեմոկրատական մոդելը** *(հայտնի է նաև որպես սկանդինավյան)* ենթադրում է սոցիալական պաշտպանության ու հավասարության բարձր մակարդակ: Պետությունն ակտիվ դեր է խաղում եկամուտների վերաբաշխման ու սոցիալական ծառայությունների լայն շրջանակի ապահովման գործում, ինչպիսիք են առողջապահությունը, կրթությունը և սոցիալական ապահովագրությունը: Նպատակն է ստեղծել բարեկեցության հասարակություն (Isakjee, 2017):

**Սոցիալական քաղաքականության կորպորատիվ մոդելը** սոցիալական պաշտպանությունը հիմնականում ապահովում է գործատուների միջոցով, որոնց պետությունը պարտավորեցնում է հոգ տանել իրենց աշխատողների մասին (Farnsworth, 2013):

Սոցիալիստական պատմություն ունեցող երկրներին, որոնց շարքին է դասվում նաև Հայաստանը, բնորոշ է **պատերնալիստական** *(հայրիշխանական, լատ.՝ paternitas – հայրություն)* **մոդելը**, որտեղ պետությունը լիարժեք պատասխանատվություն է կրում քաղաքացիների բարեկեցության համար (Weale, 1978):

Հարցեր ու հանձնարարություններ

**Հարցեր**

1. Ի՞նչ նշանակություն ունեն սոցիալական աշխատանքի համար քաղաքական գաղափարախոսությունները:
2. Որո՞նք են ձախ ու աջ քաղաքական գաղափարախոսությունների հիմնական տարբերությունները սոցիոլոգիական, պատմական, քաղաքական, տնտեսական ու բարոյական-մշակութային համատեքստերում:
3. Որո՞նք են «տնտեսական ազատություններն» ու «անձի ազատությունները»:
4. Ներկայացրե՛ք սոցիալական քաղաքականության չորս հիմնական մոդելներն ու դրանց բնութագրերը:

**Հանձնարարություններ**

1. Համեմատե՛ք սոցիալական քաղաքականության լիբերալ ու սոցիալ-դեմոկրատական մոդելների մոտեցումները աղքատության հաղթահարման գործում:
2. Ընտրե՛ք որևէ երգ, բանաստեղծություն կամ քաղաքական գործչի ելույթ և վերլուծե՛ք այդ տեքստում աջ ու ձախ քաղաքական գաղափարախոսություն պարունակող մտքերը:
3. Սոցիալական քաղաքականության ո՞ր մոդելն եք համարում առավել արդյունավետ Հայաստանի համար և ինչո՞ւ:
4. Որքանո՞վ է «պայտի» տեսությունը նկարագրում ժամանակակից համաշխարհային քաղաքական զարգացումները: Քննարկե՛ք օրինակներով:

5. Նկարե՛ք Նոլանի գծապատկերը և տեղադրե՛ք Հայաստանում գործող տարբեր քաղաքական կուսակցությունններն այդ համակարգում՝ հիմնավորելով դրանց տեղաբաշխումը:
6. Ընտրե՛ք որևէ երկիր և վերլուծե՛ք դրա սոցիալական քաղաքականության մոդելը:

**Խմբային բանավեճ**

Թեմա՝ «Հայաստանում առավել նպատակահարմար է զարգացնել Կորպորատիվ սոցիալական քաղաքականության մոդելը»:

Խումբ A – **ԱՅՈ**

Խումբ B – **ՈՉ**

Ներկայացնել ռացիոնալ *(բանական)*, հուզական *(պաթեփիկ)* ու էթիկական *(բարոյական)* փաստարկներ:

# РЕЗЮМЕ


## Экономические основы социальной работы

*Мелкумян Ю. Г.*

Учебник посвящен изучению экономических механизмов в системе социальной работы. Автор анализирует междисциплинарную связь теории и практики социальной работы и экономики, начиная с философского осмысления понятия «социальное» и заканчивая конкретными механизмами финансирования социальной сферы в Армении. Особое внимание уделено классификации потребностей, типологии благ, процессам производства социальных услуг и современным концепциям бедности. В книге подробно разбираются источники финансирования, роль НПО и влияние политических идеологий на формирование моделей социальной политики. Раскрываются вопросы формирования спроса на социальные услуги, специфика их производства в государственном и частном секторах, а также методы оценки качества социальных услуг. Рассматриваются финансовые инструменты социальной защиты: госбюджет, страхование и благотворительные фонды.

Издание дополнено практическими заданиями и терминологическим словарем. Предназначено для студентов, аспирантов и преподавателей факультетов социальной работы, социологии и государственного управления, а также для практикующих социальных работников.

# SUMMARY

## Economics of Social Work

*Melkumyan, Yu. G.*

This textbook is dedicated to the study of economic mechanisms within the social work system. The author analyzes the interdisciplinary link between the theory and practice of social work and economics, ranging from the philosophical interpretation of the concept of "the social" to specific mechanisms for financing the social sector in Armenia.

Special attention is given to the classification of needs, the typology of goods, social service production processes, and contemporary concepts of poverty. The book provides a detailed examination of funding sources, the role of NPOs, and the influence of political ideologies on the social policy models. It explores issues of demand formation for social services, the specifics of their production in the public and private sectors, and methods for assessing the quality of social services. Additionally, the text reviews financial instruments for social protection, including the state budget, insurance, and charitable foundations.

The edition is supplemented with practical assignments and a terminological glossary. It is intended for undergraduate and graduate students, faculty members of social work, sociology, and public administration departments, as well as social work practitioners.

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ամատունի Վ. (2011, հունիսի 3), Տաններեքերորդի ճակատագիրը: *Ամատունի Վահան բլոգ [WordPress բլոգ]*: https://amatunivahan.wordpress.com/2011/06/03/%D5%BF%D5%A1%D5%BD%D5%B6%D5%A5%D6%80%D5%A5%D6%84%D5%A5%D6%80%D5%B8%D6%80%D5%A4%D5%AB-%D5%B3%D5%A1%D5%AF%D5%A1%D5%BF%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%D5%A8/:

Խաչատրյան Ա. (2016), Սոցիալական աշխատանքը և հայ հասարակության սոցիալական մշակույթը: «*Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*», (1), 12-22. ԵՊՀ, http://www.old.ysu.am/files/02A_Khachatryan.pdf:

Խաչատրյան Ա. Կ. (2012), Սոցիալական աշխատանքի ինստիտուտի կայացումը Հայաստանում: «*Բանբեր Երևանի համալսարանի. Սոցիոլոգիա, Տնտեսագիտություն*, (136.5), 3-11. ԵՊՀ, https://artsakhlib.am/2019/10/17/%D5%BD%D5%B8%D6%81%D5%AB%D5%A1%D5%AC%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%A1%D5%B7%D5%AD%D5%A1%D5%BF%D5%A1%D5%B6%D6%84%D5%AB-%D5%AB%D5%B6%D5%BD%D5%BF%D5%AB%D5%BF%D5%B8%D6%82%D5%BF%D5%AB-%D5%AF%D5%A1%D5%B5/:

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա (2025). Կենսաթոշակային համակարգ, https://cda.am/am/pages/pension-system:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միասնական սոցիալական ծառայության պաշտոնական կայք (2025), https://socservice.am:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ (2025), Պետական ոչ առևտրային կազմակերպություններ, https://www.mlsa.am/state-non-profit-organizations:

ՀՀ Կառավարության 2011 թվականի մարտի 31-ի N 332-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին N 714-Ն որոշում (2016, հուլիս 7), https://www.e-gov.am/gov-decisions/:

ՀՀ Կառավարության որոշում պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման մասին (N 318-Ն որոշում, խմբ. 26.12.2013 N 1515-Ն), (2004, մարտի 4), https://www.arlis.am:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (2023), Էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման սակագների կարգավորման տարեկան հաշվետվություն (էջ 1-45), Երևան, ՀՀ ՀԾԿՀ, https://www.psrc.am:

ՀՀ վիճակագրական կոմիտե (2024), *Աղքատության և ծայրահեղ աղքատության շեմերը Հայաստանում*, https://armstat.am/am/?nid=157&id=1075:

ՀՀ վիճակագրական կոմիտե (2024), Կենսամակարդակ, https://armstat.am/file/doc/99552493.pdf:

ՀՀ վիճակագրական կոմիտե (2024), Ֆինանսներ, https://armstat.am/file/doc/99552493.pdf:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրք *(ՀՕ-239) (1998, մայիսի 5), https://www.arlis.am/hy/acts/148978:*

ՀՀ օրենքը ավելացված արժեքի հարկի մասին (փոփոխություններով և լրացումներով), (1997), https://www.arlis.am/hy/acts/107541:

«Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքը (փոփոխություններով և լրացումներով) (1997), https://www.arlis.am/hy/acts/65458:

«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (2010, դեկտեմբերի 22), https://www.arlis.am/hy/acts/64546:

«Շահութահարկի մասին» ՀՀ օրենքը (1997, սեպտեմբերի 30) https://www.arlis.am/hy/acts/80513:

«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը (2024, հոկտեմբերի 24), *Հոդված 20*. https://www.arlis.am/hy/acts/199657:

«Դպրոցական սնունդ» ծրագիրն ամբողջությամբ ազգայնացվել և փոխանցվել է ՀՀ Կառավարությանը: ՀՀ ԿԳՄՍ նախարարություն (2023, հուլիսի 3): Վերցված է https://escs.am/am/news/17300 կայքէջից:

Մելքոնյան Ն. (2007), *Քաղաքական իմիջ. Մեկնաբանություններ և ձևավորված սկզբունքներ. Դասընթաց հասարակագետների համար*, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, http://publishing.ysu.am/files/Qaghaqakan_imij.pdf:

Մելքումյան Յ. Գ. (2015), ՀՀ բուհերում հաշմանդամություն ունեցող ուսանողների ներառման մեթոդական առաջարկություններ, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», (2015), էջ 168-180, http://www.old.ysu.am/files/hh-buherum-hashmnandamutyun-unecox-usa-noghneri.pdf:

*«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին* (2016, դեկտեմբերի 16),
https://www.arlis.am/hy/acts/110535:

Alcock P. & May M. (2014). *Social Policy in Britain, fourth edition* (4th ed.) Palgrave.

Applebaum A. (2012). *Iron curtain: The crushing of Eastern Europe, 1944-1956*. Doubleday.

Aristotle (1998). *Politics* (C. D. C. Reeve, Trans.). Hackett Publishing Company.

Bain S. (2024). *Types of economic goods vs free goods (with examples)*. Dying Economy. https://www.dyingeconomy.com/economic-goods.html.

Baker J. (2013, October). *Children, young people and learning: Prevention and early intervention strategy 2013-2016,* North Tyneside Council. https://my.northtyneside.gov.uk/sites/default/files/web-page-related-files/Prevention%20and%20early%20intervention%20strategy%202013-16.pdf.

Baldwin R. E. & Wyplosz C. (2020). *The economics of European integration* (6th ed.). «McGraw-Hill Education».

Banfield E. C. (1958). *The moral basis of a backward society.* Glencoe, IL: «Free Press».

Banks S. (2016). Everyday ethics in professional life: social work as ethics work. *Ethics and Social Welfare*, *10*(1), 35-52.
https://doi.org/10.1080/17496535.2015.1126623.

Barr N. (2020). *Economics of the welfare state* (6th ed.). Oxford University Press.

Barros D. C., Felipe G. C. & Paulo e Silva J. (2008). Antropometria. In *Vigilância alimentar e nutricional para a saúde indígena.*
https://doi.org/10.7476/9788575415894.0004.

Bateman T. S. & Crant J. M. (1993). The proactive component of organizational behavior: A measure and correlates. «*Journal of Organizational Behavior, 14*(2), 103-118. https://doi.org/10.1002/job.4030140202.

Beauchamp T. L., & Childress, J. F. (2019). *Principles of biomedical ethics* (8th ed.). Oxford University Press.

Beitman A. (2023). *Germany's long-term care system: Lessons for U.S. states* (McCloy Fellow on Global Trends Policy Paper). American Council on Germany. https://www.acgusa.org/wp-content/uploads/2024/12/Germanys-

Long-Term-Care-System-Lessons-for-US-States_Working-Paper_December-2024.pdf

Berger P. L. (1967). The sacred canopy. Elements of a sociological theory of religion. Garden City, NY: Doubleday.

Berlin I. (1969). *Two concepts of liberty*. In I. Berlin, *Four essays on liberty* (pp. 118-172). Oxford University Press.

*Bhushan D., Kotz K., McCall J., Wirtz S., Gilgoff R., Dube S. R., Powers C., Olson-Morgan J., Galeste M., Patterson K., Harris L., Mills A., Bethell C., Burke Harris N. & Office of the California Surgeon General. (2020). Roadmap for resilience: The California Surgeon General's report on adverse childhood experiences, toxic stress, and health. Office of the California Surgeon General. DOI: 10.48019/PEAM8812.*

Booth T. & Ainscow M. (2011) Index for Inclusion: Developing Learning and Participation in Schools. Centre for Studies on Inclusive Education, Bristol.

Boss A. (2018, November). *The financial perspectives of the German unemployment insurance system* [Policy article]. *Kiel Policy Brief, 119*. Kiel Institute for the World Economy. https://www.ifw-kiel.de/publications/the-financial-perspectives-of-the-german-unemployment-insurance-system-in-german-22457/.s

Bourdieu P. (1984). *Distinction: A social critique of the judgement of taste* (R. Nice, Trans.). Harvard University Press.

Bradshaw J., Middleton S., Davis A., Oldfield,N., Smith N., Cusworth L. & Williams J. (2008). *A minimum income standard for Britain: What people think*. Joseph Rowntree Foundation. https://www.jrf.org.uk/report/minimum-income-standard-britain-what-people-think.

Braveman P. & Gruskin S. (2003). Defining equity in health. «*Journal of Epidemiology & Community Health*», 57(4), 254-258. https://doi.org/10.1136/jech.57.4.254.

Brincat S. (2024, September 9). Are the far-left and far-right merging together? That's what the 'horseshoe theory' of politics says, but it's wrong. *UniSC News Archive, University of the Sunshine Coast*. Retrieved from https://www.usc.edu.au/about/unisc-news/news-archive/2024/september/-are-the-far-left-and-far-right-merging-together.

Buchanan J. M. (1968). The demand and supply of public goods. Chicago: Rand McNally.

Bundesministerium für Gesundheit (2024). *Das Gesundheitssystem in Deutschland.* https://www.bundesgesundheitsministerium.de.

Cambridge University Press. (2025). *Grant.* In *Cambridge Dictionary.* Retrieved August 14, 2025, from https://dictionary.cambridge.org/dictionary/english/grant.

Carens J. (2003). An interpretation of the socialist principle of distribution. *Social Philosophy & Policy, 20*(1), 145-177. https://doi.org/10.1017/S0265052503201072.

Cialdini R. B. & Goldstein N. J. (2004). Social influence: Compliance and conformity. *Annual Review of Psychology, 55*(1), 591-621. https://doi.org/10.1146/annurev.psych.55.090902.142015.

Comte-Sponville A. (2001). *Dictionnaire philosophique.* Paris: Presses Universitaires de France.

Council of Europe (2011). *Local finances and social protection in Europe.* Strasbourg: Council of Europe Publishing.

Coyle D., & Nguyen D. (2020). *Free goods and economic welfare* (ESCoE Discussion Paper No. 2020-18). Economic Statistics Centre of Excellence.

Crenshaw K. (1989). *Demarginalizing the intersection of race and sex: A Black feminist critique of antidiscrimination doctrine, feminist theory and antiracist politics.* University of Chicago Legal Forum, 1989(1), 139-167.

Dovidio J. F. & Esses V. M. (2001). *Immigrants and immigration: Advancing the psychological perspective.* Journal of Social Issues, 57(3), 375-387. https://doi.org/10.1111/0022-4537.00219.

Durkheim É. (1997). *The division of labor in society* (W. D. Halls, Trans.). «Free Press».

Esping-Andersen G. (1990). *The three worlds of welfare capitalism.* Princeton University Press.

European Commission (2004). *Joint report on social inclusion 2004.* https://ec.europa.eu/employment_social/soc-prot/soc-incl/index_en.htm.

Eysenck H. J. (1954). *The psychology of politics.* London: «Routledge & Kegan Paul».

Fang X., Brown D. S., Florence C. S. & Mercy J. A. (2012). *The economic burden of child maltreatment in the United States and implications for prevention. Child Abuse & Neglect, 36*(2), 156-165. https://doi.org/10.1016/j.chiabu.2011.10.006.

Farnsworth K. (2013). Bringing corporate welfare in. *Journal of Social Policy, 42*(4), 771-788. https://doi.org/10.1017/S0047279412000761.

Faye J.-P. (1972). *Théorie du récit : Introduction aux langages totalitaires*. Paris: Hermann.

Finis Siegler B. (1997). *Ökonomik sozialer Arbeit* (2nd ed.). Lambertus.

Fisk G. D. & Haase S. J. (2007). Exclusion failure does not demonstrate unconscious perception. *American Journal of Psychology, 120*(2), 173-204. https://pubmed.ncbi.nlm.nih.gov/17650917/.

Foucault M. (1995). *Discipline and punish: The birth of the prison* (A. Sheridan, Trans.). Vintage Books.

Friedman M. (1970). The social responsibility of business is to increase its profits. «*The New York Times Magazine*».

Fund for Armenian Relief (2024). *Our Story*. https://www.farusa.org/our-story.

Gans H. J. (1995). *The war against the poor: The underclass and antipoverty policy*. New York: «Basic Books».

Gauthier F. (2013). *The physiocrats*. In G. Faccarello & H. D. Kurz (Eds.), Handbook of the history of economic analysis (Vol. 1, pp. 63-75). Cheltenham, UK: «Edward Elgar».

Gershuni J. (1984). *The future of service employment* (Discussion Paper). Wissenschaftszentrum Berlin für Sozialforschung.

Grosh M., Leite P., Wai-Poi M., Tesliuc E. (2022). Revisiting Targeting in Social Assistance: A New Look at Old Dilemmas. United Kingdom: «World Bank».

Gwartney J., Lawson R., Hall J., & Murphy R. (2023). *Economic Freedom of the World: 2023 Annual Report*. Fraser Institute. https://www.fraserinstitute.org/studies/economic-freedom-of-the-world-2023-annual-report.

Haenfler R. (n.d.). *Commodification*. Subcultural Theory and Theorists. Grinnell College. https://2023stage.haenfler.sites.grinnell.edu/subcultural-theory-and-theorists/commodification/.

Hayek F. A. (1944). *The Road to Serfdom*. Routledge & Kegan Paul.

Hegel G. W. F. (1977). *Phenomenology of spirit* (A. V. Miller, Trans.). Oxford University Press.

Herder-Dorneich P. (1994). *Wirtschaft und Gesellschaft im Wandel: Aufsätze zur Dienstleistungsökonomie*. Göttingen: Vandenhoeck & Ruprecht.

Heywood A. (2012). *Political ideologies: An introduction* (5th ed.). Palgrave Macmillan.

Hibbert N. (2010). Exchange and social justice. *Theoria: «A Journal of Social and Political Theory», 57*(125), 26-50. https://doi.org/10.3167/th.2010.5712204.

Hobbes T. (1996). *Leviathan* (R. Tuck, Ed.). Cambridge University Press.

Human Rights Watch (1994). Reports on Armenia's blockade and humanitarian impact.

IFSW (2014). *Global Definition of Social Work*. https://www.ifsw.org/what-is-social-work/global-definition-of-social-work/.

Informationsstelle AHV/IV (2025). *Arbeitslosenversicherung (ALV).* https://www.ahv-iv.ch/de/sozialversicherungen/weitere-sozialversicherungen/arbeitslosenversicherung-alv.

International Labour Organization (2014). *Social insurance: Enhancing social security rights for everyone* (Policy brief, Vol. 3). ILSSA. https://www.ilo.org/publications/social-insurance-enhancing-social-security-right-everyone-policy-brief.

International Labour Organization. (2021). *Social security (social protection).* https://www.ilo.org/global/topics/social-security/lang--en/index.htm.

Isakjee A. (2017) 'Welfare state regimes: a Literature Review', IRiS Working Paper Series, No. 18/2017 (UPWEB Working Paper Series, No. 5/2017) Birmingham: Institute for Research into Superdiversity.

Ishkanian A. (2003). *Is the personal political? The development of Armenia's NGO sector during the post-Soviet period* (Working Paper Series, Spring 2003). Berkeley Program in Soviet and Post-Soviet Studies, University of California, Berkeley. https://escholarship.org/uc/item/2j57b1h5.

Karoly L. A., Kilburn M. R. & Cannon, J. S. (2005). *Early childhood interventions: Proven results, future promise*. RAND Corporation. https://doi.org/10.7249/MG341.

Kelemen R. D. (2017). Europe's Other Democratic Deficit: National Authoritarianism in Europe's Democratic Union. *Government and Opposition*, *52*(2), 211-238. doi:10.1017/gov.2016.41.

Knoll-Jung S. (2024, July 6). *140 Jahre Unfallversicherung- Entstehung, Wirkung und Bedeutung für die Arbeiter:innenbewegung*. Friedrich-Ebert-Stiftung. https://www.fes.de/themenportal-geschichte-kultur-medien-netz/artikelseite/140-jahre-unfallversicherung.

Lage C., Lins S., & de Aquino S. D. (2022). Consumerism. In *Routledge Encyclopedia of Psychology in the Real World* (1st ed.). Routledge. https://doi.org/10.4324/9780367198459-REPRW118-1.

Levada Center. (2020). *Assessment of the material situation of households: Survey methodology and results.* Moscow: Levada Analytical Center. https://www.levada.ru/.

Levinas E. (1969). *Totality and infinity: An essay on exteriority* (A. Lingis, Trans.). Duquesne University Press.

Lewis O. (1961). *The children of Sánchez: Autobiography of a Mexican family.* New York: «Random House».

Lewis O. (1966). *La Vida: A Puerto Rican family in the culture of poverty-San Juan and New York*. New York: «Random House».

Lindahl E. (1958). *Just taxation: A positive solution.* In R. A. Musgrave & A. T. Peacock (Eds.), *Classics in the theory of public finance* (pp. 168-176). London: «Macmillan».

Maleri R. (1994). *Grundlagen der Dienstleistungsproduktion: Produktionswirtschaftliche Aspekte der Leistungserstellung immaterieller Güter* (3. Aufl.). München: «Vahlen».

Mankiw N. G. (2020). *Principles of economics* (9th ed.). Boston, MA: Cengage Learning.

Marx K. (1992). *Capital: A critique of political economy* (Vol. 1, B. Fowkes, Trans.). Penguin Books.

Maslow A. H. (1943). A Theory of Human Motivation. Psychological Review, 50(4), 370-396.

Media Economics (2014, November 25). *Ջինիի գործակիցը և Լորենցի կորի մեկնաբանությունը* [Բլոգ գրառում]. https://media-economics.blogspot.com/2014/11/blog-post_25.html:

Midgley J. (1995). *Social Development: The Developmental Perspective in Social Welfare*. Sage.

Miller T., Kim A. B. & Roberts J. M. (2023). *2023 Index of Economic Freedom.* The Heritage Foundation. https://www.heritage.org/index/.

Mission Armenia NGO. (2025). *Home*. https://missionarmenia.org/.

More T. (1516/2003). *Utopia* (G. M. Logan & R. M. Adams, Trans. & Eds.). Cambridge University Press.

Musgrave R. A. (1959). *The theory of public finance: A study in public economy*. New York: «McGraw-Hill».

National Association of Social Workers. (2021). *Advocacy*. In *NASW social work dictionary* (6th ed., p. 15). NASW Press.

National Association of Social Workers (2021). *Code of Ethics of the National Association of Social Workers*.

News.am (2016, December 7). *Armenia remembers victims of 1988 quake*. https://news.am/eng/news/361291.html.

Nolan D. (1971, January). *Classifying and analyzing politico-economic systems. The Individualist*. Society for Individual Liberty.

North D. C. (1991). *Institutions*. «*The Journal of Economic Perspectives*», 5(1), 97-112. https://doi.org/10.1257/jep.5.1.97.

OECD (2008), *OECD Glossary of Statistical Terms*, OECD Publishing, Paris, https://doi.org/10.1787/9789264055087-en.

OECD (2008). *OECD Evaluation Criteria*. https://www.oecd.org/en/topics/sub-issues/development-co-operation-evaluation-and-effectiveness/evaluation-criteria.html.

OECD. (2013). *OECD Framework for Statistics on the Distribution of Household Income, Consumption and Wealth*. OECD Publishing. https://doi.org/10.1787/9789264194830-en.

OECD (2019). *Income redistribution across OECD countries*. OECD.

O'Keefe D. J. (2016). *Persuasion: Theory and research* (3rd ed.). SAGE Publications.

Oliver J. R. & Robison L. J. (2017). Rationalizing inconsistent definitions of commodification: A social exchange perspective. *Modern Economy, 8*(11), 1314-1327. https://doi.org/10.4236/me.2017.811088.

Oxford University Press. (2024). *Auctoritas*. In *Oxford Classical Dictionary* (4th ed.). Oxford University Press. https://doi.org/10.1093/acrefore/9780199381135.013.818.

Packard V. (1957). *The Hidden Persuaders*. New York: D. McKay Co.

Palier, B. (Ed.). (2010). A long goodbye to Bismarck? The politics of welfare reform in continental Europe. Amsterdam University Press.

Pankratz C. (2014). Welfare state regimes and the evolution of liberalism. «*Journal of International and Comparative Social Policy*», *30*(3), 1-14. https://doi.org/10.1080/21699763.2014.951383.

Pareto V. (1971). *Manual of political economy* (A. S. Schwier, Trans.). Augustus M. Kelley.

Parsons T. (1951). *The social system*. Free Press, New York.

Paturyan Y. J. & Gevorgyan V. (2021). The formal domain of the civil society ecosystem: Armenian NGO. In Y. J. Paturyan & V. Gevorgyan (Eds.), *Armenian civil society* (pp. [specific pages if known]). Springer. https://doi.org/10.1007/978-3-030-63226-7_7.

Payne M. (2021). *Modern Social Work Theory* (5th ed.). Bloomsbury.

Pennock J. R. (1974). [Review of the book *Individualism*, by S. Lukes]. *Political Theory, 2*(4), 449-450. Sage Publications, Inc. http://www.jstor.org/stable/190905.

Polanyi K. (2001). *The great transformation: The political and economic origins of our time*. Beacon Press.

Priddat Birger P. (1992): Zur Ökonomie der Gemeinschaftsbedürfnisse: Neuere Versuche einer ethischen Begründung der Theorie meritorischer Güter, Zeitschrift für Wirtschafts- und Sozialwissenschaften (ZWS) - Vierteljahresschrift der Gesellschaft für Wirtschaftsund Sozialwissenschaften, Verein für Socialpolitik, ISSN 0342-1783, Duncker & Humblot, Berlin, Vol. 112, Iss. 2, pp. 239-259, https://doi.org/10.3790/schm.112.2.239.

Rank M. R., Eppard L. M. & Bullock H. E. (2021). *Poorly understood: What America gets wrong about poverty* (1st ed.). Oxford University Press.

Ravallion M. (2012). *Poor, or just feeling poor? On using subjective data in measuring poverty* (Policy Research Working Paper No. 5968). World Bank. https://hdl.handle.net/10986/3254.

Rawls J. (1971). *A Theory of Justice*. Harvard University Press.

Reamer F. G. (2021). *Ethics and risk management in online and distance social work*. Columbia University Press.

Richins M. L. (1995). *Social comparison, advertising, and consumer discontent. American Behavioral Scientist, 38*(4), 593-607.

Roberts-Miller P. (2017). *Demagoguery and democracy*. New York: The Experiment.

Rogers C. R. (1957). The necessary and sufficient conditions of therapeutic personality change. *Journal of Consulting Psychology, 21*(2), 95-103. https://doi.org/10.1037/h0045357.

Rogers, C. R. (1961). *On becoming a person: A therapist's view of psychotherapy*. Boston: «Houghton Mifflin».
Ryan W. (1971). *Blaming the victim*. New York: Vintage Books.
Saleebey D. (2006). *The strengths perspective in social work practice* (4th ed.). Allyn & Bacon.
Samuelson P. A. (1954). The pure theory of public expenditure. *Review of Economics and Statistics, 36*(4), 387-389. https://doi.org/10.2307/1925895:
Samuelson P. A. & Norhaus W.D. (2010) Economics. 19th Edition, «McGraw-Hill», New York.
Santana-Hernández J.-D. (2021). Between reaction and prevention: A systematic review of a social intervention dilemma for social work (2000-2019). *Cuadernos de Trabajo Social, 34*(1), 145-158. https://doi.org/10.5209/cuts.67444.
Sartre J.-P. (2003). *Being and nothingness: An essay on phenomenological ontology* (H. E. Barnes, Trans.). Routledge.
Say J.-B. (1803/2001). *A treatise on political economy: Or the production, distribution, and consumption of wealth* (C. R. Prinsep, Trans.). Kitchener: «Batoche Books».
Schaad M. (1995). *Non-Profit-Organisationen in der ökonomischen Theorie: Eine Analyse der Entwicklung und der Handlungsmotivation der freien Wohlfahrtspflege*. Wiesbaden: Deutscher Universitätsverlag.
Schäfer D. (1981). Soziale Dienste-Angebot und Nachfrage. In H. Klages & D. Merten (Eds.), *Sozialpolitik durch soziale Dienste* (pp. 89-110). Berlin: «Duncker & Humblot».
Scottish Government. (2005, December 19). *The statutory social worker's role in prevention and early intervention with children* (Research and analysis publication). https://www.gov.scot/publications/statutory-social-workers-role-prevention-early-intervention-children/.
Seeleib-Kaiser M. (2008). Welfare state transformations in comparative perspective: Shifting boundaries of "public" and "private" social policy? In M. Seeleib-Kaiser (Ed.), *Welfare state transformations: Comparative perspectives* (pp. 1-13). Palgrave Macmillan. https://doi.org/10.1057/9780230227394_1.
Sen A. (1985). *A sociological approach to the measurement of poverty: A reply to Professor Peter Townsend*. Oxford Economic Papers, 37(4), 669-676.

Sen A. (1992). *Inequality reexamined*. Harvard University Press.
Shah A. (2007). *Local budgeting*. World Bank Publications.
Shizume M., Kato M. & Matsuda R. (2020). A corporate-centred conservative welfare regime: three-layered protection in Japan. *Journal of Asian Public Policy*, *14*(1), 110-133. https://doi.org/10.1080/17516234.2020.1829834.
Smith A. (1776/2007). *An inquiry into the nature and causes of the wealth of nations* (E. Cannan, Ed.). University of Chicago Press.
Smith A. D. (2010). *Nationalism: Theory, ideology, history* (2nd ed.). Polity Press.
Smoke P. (2015). *Rethinking decentralization: Assessing challenges to a popular public sector reform*. Public Administration and Development, 35(2), 97-112. https://doi.org/10.1002/pad.1703.
Stigler G. J. (1987). *The theory of price* (4th ed.). New York: Macmillan.
Toffler A. (1980). *The Third Wave*. New York, NY: William Morrow.
Townsend P. (1979). *Poverty in the United Kingdom: A survey of household resources and standards of living*. Penguin Books.
Ullmann S. (1962). *Semantics: An introduction to the science of meaning*. Basil Blackwell.
United Nations Development Programme (UNDP), (1997). *Human Development Report 1997: Human development to eradicate poverty*. Oxford University Press.
United Nations Office for Disaster Risk Reduction (2017). *Terminology on disaster risk reduction*. https://www.undrr.org/publication/terminology-disaster-risk-reduction.
United Nations (1948). *Universal Declaration of Human Rights*. https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights.
Vásquez I. & McMahon F. (2023). *Human freedom index 2023: A global measurement of personal, civil, and economic freedom*. Cato Institute & Fraser Institute. https://www.cato.org/human-freedom-index/2023.
von Stein L. (1850). *Der Sozialismus und Kommunismus des heutigen Frankreichs*. Leipzig: Wigand.
Ward B. (2021, March 3). *Equality → Equity → Justice: The transportation case example*. Quaker Earthcare Witness. https://quakerearthcare.org/equality-equity-justice-the-transportation-case-example/.

Washington State Institute for Public Policy (2004, September 17). *Benefits and costs of prevention and early intervention programs for youth* [Summary report]. Olympia, WA. https://www.wsipp.wa.gov/ReportFile/881/Wsipp_Benefits-and-Costs-of-Prevention-and-Early-Intervention-Programs-for-Youth_Summary-Report.pdf.

Weale A. (1978). Paternalism and Social Policy. *Journal of Social Policy*, *7*(2), 157-172. doi:10.1017/S0047279400007571.

Weber M. (2005). *The Protestant ethic and the spirit of capitalism* (T. Parsons, Trans.; A. Giddens, Intro.). Routledge Classics. (Original work published 1930).

Wildavsky A. & Caiden N. (2003). *The new politics of the budgetary process* (5th ed.). Pearson Longman.

World Bank (2001). *Armenia: Growth challenges and government policies (In two volumes, Vol. II: Main report)* (Report No. 22854-AM). Poverty Reduction and Economic Management Unit, Europe and Central Asia Region. https://documents1.worldbank.org/curated/en/222631468741667925/pdf/multi0page.pdf.

World Bank (2015). *FAQs: Global poverty line update*. https://www.worldbank.org/en/topic/poverty/brief/global-poverty-line-faq.

World Bank (2025, June 5). *June 2025 update to global poverty lines* [Fact sheet]. https://www.worldbank.org/en/news/factsheet/2025/06/05/june-2025-update-to-global-poverty-lines.

World Vision International (2025). *About Us*. https://www.wvi.org/about-us.

Young I. M. (2002). *Inclusion and democracy*. Oxford University Press. https://doi.org/10.1093/0198297556.001.0001.

Young M. (1958). *The rise of the meritocracy, 1870-2033: An essay on education and equality*. London: Thames and Hudson.

Zastrow C. (2017). *Introduction to Social Work and Social Welfare: Empowering People* (12th ed.). Cengage Learning.

Zeder R. (2020, July 31). *Water as property: The four different types of goods*. Originally published October 15, 2016. Retrieved from https://www.raphaelzeder.com/water-as-property/.

Zhao K., Yue D., Liu Y. & Shan H. (2024). Research on the mechanism of government subsidy on enterprise innovation based on industry-university-research collaboration. *Heliyon, 10*(9), e30153.

https://doi.org/10.1016/j.heliyon.2024.e30153.
Антонов М. Ф. (2008). *Гл. 4. Расистский национал-социализм Адольфа Гитлера*. В *От лжекапитализма к тоталитаризму! Мир в XXI веке и судьбы России* (с. 592), «Альта-Принт». ISBN 978-5-98628-110-0.
Аристов О. В. (2011). *Управление качеством: Учебник* (239 с.). Москва: ИНФРА-М.
Большой энциклопедический словарь. (2024). Интернационализм. В *Большой энциклопедический словарь*.
Конституция Союза Советских Социалистических Республик. (1977). *Статья 34*. Принята Верховным Советом СССР.
http://www.libussr.ru/doc_ussr/usr_6095.htm.
Кюркчян М. В. (1995). Бедность: концепции и методы измерения. В Л. А. Арутюнян (Ред.), *Социальная работа: теория и практика* (гл. 2), Издательство Ереванского университета.
Луман Н. (2004). *Социальные системы: Очерк общей теории*, Москва: «Логос».
Осипов Г. В. (ред.). (1998). *Социологический энциклопедический словарь на русском, английском, немецком, французском и чешском языках*, Москва: ИНФРА-М.
Пантелеева Т. С. & Червякова, Г. А. (2001). *Экономические основы социальной работы: Учебное пособие для студентов высших учебных заведений*, Москва: Гуманитар. изд. центр ВЛАДОС.
Платон (2015). Государство, Москва: «Академический проект».
Сартр Ж.-П. (2000). *Бытие и ничто: Опыт феноменологической онтологии*, Москва: «Республика».
Смелзер Н. (1994). *Социология*, Москва: «Феникс». ISBN 5-7113-0106-3.
Фрейд З. (2023). *Введение в психоанализ*, Москва: АСТ.
Шахназарян С. А. & Зуева О. Н. (2014). Проблема определения термина «логистика» в современной литературе. «*Вестник Удмуртского университета. Экономика и право*», (1), 109-114.

Հեղինակը շնորհակալություն է հայտնում *ChatGPT (OpenAI)* գործիքին՝ այս դասագրքի պատրաստման ընթացքում խմբագրական ու թարգմանական աջակցության համար: Այս դասագրքում ներկայացված բոլոր մեկնաբանությունները, վերլուծություններն ու եզրակացությունները ամբողջությամբ հեղինակային են:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՅՈՒԼԻԱՆԱ ԳԱԳԻԿԻ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

*Դասագիրք*

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. խմբագիր՝ Մ. Հովհաննիսյան

*Հեղինակը հաստատում է, որ ծանոթ է «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված են հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:*

Հրատարակվել է՝ 23.03.2026:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 13,5:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am


2025
publishing.ysu.am